

«Այ Փի Էս Սի»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Sociology is first of all responsibility™



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ.

Հայաստանի Հանրապետությունում
կյանքի որակի հետազոտություն
QL Index – 2 / 2011

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Սամվել Մանուկյան, ս.գ.թ., IPSC

20 մարտ, 2012թ.

*Հետազոտությունն իրականացվել է
«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտի կողմից*

27 Azatutyan ave.,
4th floor, s.402,
Yerevan, 0014, Armenia

Ազատության պող.27,
4-րդ հարկ, ս.402
Երևան, 0014, ՀՀ

☎ +374 10 20-4772
☎ +374 10 20-4771

✉ info@ipsc.am
🏠 www.IPSC.am





FR-8arm/11

20.03.2012թ.

Հայաստանի Հանրապետությունում
կյանքի որակի ինդեքսը 2011թ.-ին

QL-Index 2 / 2011

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վերջնական հաշվետվություն

Հեղինակ՝ սոց. գ. թ. Ս. Մանուկյան,
«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	4 -
Ներածություն	4 -
Մեթոդաբանություն	5 -
Նախկինում կիրառված մեթոդաբանության մասին	5 -
Կյանքի որակի ուսումնասիրության մեթոդաբանական մոդիֆիկացումը	6 -
Կյանքի որակի բաղադրիչների գնահատականները և դրանց մեկնաբանությունը	7 -
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	10 -
Կյանքի որակը պայմանավորող մակրո մակարդակի բաղադրիչները	11 -
Կյանքի որակը պայմանավորող միջին և միկրո մակարդակի բաղադրիչները	15 -
Տնային տնտեսությունների ֆինանսական ապահովվածությունը և ընդհանուր բավարարվածությունը կյանքից	17 -
ՄԱՍ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՄԱԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	19 -
Տնտեսական ոլորտի մակրո գնահատականներ	19 -
Սոցիալական ոլորտի մակրո գնահատականներ	21 -
Ենթակառուցվածքների մակրո գնահատականներ	23 -
Քաղաքական ազատությունների ոլորտի մակրո գնահատականներ	25 -
ՄԱՍ 2. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՄԻՋԻՆ և ՄԻԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	31 -
Ընդհանուր գերակայություններ	31 -
Տնտեսական ոլորտ	34 -
Զբաղվածություն և աշխատանքային պայմաններ	34 -
Բնակարանային պայմաններ	38 -
Բնակարանների ջեռուցումը	42 -
Ընտանեկան եկամտի աղբյուրները	43 -
Սննդամթերք	46 -
Կենցաղային իրեր և տեխնիկա	49 -
Սեփականություն	52 -
Ենթակառուցվածքներ	54 -
Սոցիալական ոլորտ	59 -
Առողջապահություն	59 -
Առողջապահության ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը ծառայությունների որակից	59 -
Բնակչության հոգեվիճակը	61 -
Հիվանդագին վիճակների ախտանիշներ	63 -
Հիգիենա	65 -
Կրթություն	66 -
Սոցիալական միջավայր (շփումներ)	69 -

Ֆիզիկական և սոցիալական անվտանգություն _____	- 72 -
Հասարակական տրամադրություններ _____	- 76 -
Հանգիստ և ժամանց _____	- 84 -
Տուրիզմ _____	- 89 -
Էկոլոգիական ոլորտ _____	- 93 -
Շրջապատի աղտոտվածություն _____	- 93 -
Բնական վտանգներ _____	- 97 -
Վտանգներ կենդանական աշխարհից _____	- 98 -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետությունում հասարակության կյանքի որակը:

Կյանքի որակի տեսությունը, գնահատման միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտության շրջանակը և մոտեցումները մանրամասն ներկայացված են Կյանքի որակի 2010թ. հետազոտության մեթոդաբանական փաստաթղթերում:¹ Այդ հետազոտության ընթացքում կիրառվել են կյանքի որակի հետևյալ սահմանումները:²

Անհատի մակարդակում. «Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ անհատի ուղղակի և անուղղակի կենսամիջավայրերի համատեքստում որոշակի ֆունկցիոնալության և անհատի արժեհամակարգով ու ընկալումներով պայմանավորված գիտակցված բավարարվածության աստիճանն է»:

Բնակչության մակարդակում. «Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ երկրի օրենսդրական, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի համատեքստում, հասարակության որոշակի ֆունկցիոնալության և հասարակական արժեքներով ու ընկալումներով պայմանավորված, երկրում ապրելուց բավարարվածության աստիճանն է»:

Սույն զեկույցում կյանքի որակի գնահատումն իրականացվել է վերոնշյալ սահմանումների շրջանակում: Կյանքի տարբեր ոլորտներից և ենթաոլորտներից հասարակության բավարարվածության մակարդակների և դրանց ընդհանրացմանը զուգահեռ գնահատվել են կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրները, դրանց կարևորությունը հարցվողների և նրանց ընտանիքների համար, ապրանքների և ծառայությունների ֆիզիկական և ֆինանսական մատչելիությունը:

Հիմնվելով 2010թ. հետազոտության արդյունքների և քաղած դասերի վրա՝ 2011թ. հետազոտությունն իրականացվել է մոդիֆիկացված մեթոդաբանությամբ:

¹ Բաբայան Ա., Մակարյան Ա., ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի (QL Index) հետազոտության մեթոդաբանություն, «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 2010թ., - էջ 85: http://www.gov.am/u_files/file/documents/3.pdf

² Նշված աշխատությունը՝ էջ 38:

Մեթոդաբանություն

Նախկինում կիրառված մեթոդաբանության մասին

Կյանքի որակի միասնական ինդեքսի (մեկ թվի) կազմավորման մեթոդաբանությունն ունի մի քանի խնդիրներ: Դրանց թվում առավել կարևոր երեքը ներկայացված են ստորև:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների ագրեգացում

2010թ. միասնական ինդեքսի կառուցման ընթացքում կիրառվել է օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների միջինացում: Օբյեկտիվ ցուցանիշներն արտապատկերում են կոնկրետ չափելի իրավիճակներ, հատկանիշներ և երևույթներ, ընդ որում չափումների արդյունքները կախված չեն հարցվողների սուբյեկտիվ դիրքորոշումներից: Սուբյեկտիվ ցուցանիշները չափում են հարցվողների ընկալումների բնույթը՝ բավարարվածությունը կամ անբավարարվածությունը կամ դրանց ինտենսիվությունը: Միևնույն օբյեկտի բնութագրերի օբյեկտիվ չափման արդյունքների և հարցվող անձի կողմից այդ բնութագրի ընկալման գնահատականների միջին արժեքը (միջին կշռված/կամ չկշռված թվաբանականի) խնդրահարույց է: Այդ պատճառով 2011թ. հետազոտությունում այդպիսի ագրեգացում չի իրականացվել:

Փորձագիտական գնահատականներ և հանրային կարծիքի ընդհանրացում

Կյանքի որակի որոշակի բաղադրիչի կարևորության փորձագիտական գնահատականը հիմնված է տվյալ բաղադրիչի խորը, համակողմանի և մասնագիտական գիտելիքների վրա, իսկ հասարակության գնահատականները, որպես կանոն, իրենցից ներկայացնում են քիչ թե շատ տարածված կարծրատիպերի և առօրյա գիտելիքների հանրագումար: Փորձագիտական գնահատականը՝ դիտվում է որպես օբյեկտիվ կամ օբյեկտիվին շատ մոտ գնահատական: Հետևաբար, որոշակի ոլորտի փորձագիտական և հասարակական գնահատականների ագրեգացումը խնդրահարույց է: Այդ պատճառով 2011թ. հետազոտությունում նման ագրեգացում չի իրականացվել:

Մակրո, միջին և միկրո մակարդակների ցուցանիշների ագրեգացում

Եթե որևէ համակարգ օբյեկտիվորեն հնարավոր է բաժանել մակրո, միջին և միկրո մակարդակների, ապա դրանից անմիջականորեն բխում է, որ **որակապես** տարբերվում են և՛ մակրո, միջին ու միկրո մակարդակների տարրերը, և՛ համակարգի կենսագործունեության ոլորտում դրանց դերն ու նշանակությունը, և՛ համակարգի աղեկվատ նկարագրման (մոդելավորման) դեպքում դրանց բնույթն ու բովանդակությունը: Կյանքի որակի ոլորտների, ենթաոլորտների ու բաղադրիչների մակրո, միջին և միկրո մակարդակների ցուցանիշների ագրեգացումը սկզբունքորեն կարող է ընդունելի լինել, այն դեպքում, եթե դրանք ունեն միևնույն բնույթը, մասնավորապես, եթե դրանք արտահայտում են մարդու բավարարվածության կամ անբավարարվածության աստիճանը: Այնուամենայնիվ, մակրո միջին և միկրո մակարդակներում բավարարվածության մակարդակների ագրեգացումն ունի պայմանական նշանակություն և բովանդակություն է ստանում միայն առանձին բաղադրիչների համատեքստում:

Կյանքի որակի ուսումնասիրության մեթոդաբանական մոդիֆիկացումը

Հայաստանում կյանքի որակի 2011թ. հետազոտության համար իրականացվել են մեթոդաբանության մի քանի փոխակերպումներ: Դրանք են.

1. Հետազոտությունն ուղղված է Հայաստանի **հասարակության կողմից** իր կյանքի որակի ընկալումների և գնահատականների ուսումնասիրությանը:³
2. Կյանքի որակի բաղադրիչների մակրո, միջին և միկրո մակարդակների գնահատականները դիտարկվել են առանձին-առանձին:
3. Կյանքի որակի վրա ազդող մակրո մակարդակի գործոնները գնահատվել են միայն որպես հասարակական ընկալումներ:⁴
4. Կյանքի որակը գնահատվել է ըստ ոլորների (տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքային, քաղաքացիական ազատություններ և կառավարում՝ միայն մակրո մակարդակում, իսկ էկոլոգիան՝ միայն միկրո մակարդակում), ենթաոլորտների և ենթաոլորտային բաղադրիչների:
5. Կյանքի որակի **միջին մակարդակի** գործոնների գնահատումն իրականացվել է անձի բնակավայրում կյանքի որակը բնութագրող ենթակառուցվածքային օբյեկտների, ծառայությունների և ապրանքների **առկայության** գնահատման միջոցով:
6. Կյանքի որակի **միկրո մակարդակի** գնահատումը կատարվել է կյանքի որակը բնութագրող ապրանքների և ծառայությունների հետևյալ բնութագրերի միջոցով.
 - a. անձի (ընտանիքի) համար դրանց **կարևորությունը**,
 - b. անձի (ընտանիքի) համար դրանց **ֆիզիկական մատչելիությունը**,⁵
 - c. անձի (ընտանիքի) համար դրանց **ֆինանսական մատչելիությունը** կամ փաստացի օգտագործումը,⁶
 - d. այդ ծառայությունների կամ ապրանքների օգտագործումից մարդկանց **բավարարվածությունը**:
7. Կյանքի որակի բաղադրիչների համեմատություններն իրականացվել են ըստ այն բնութագրերի, որոնք առավելապես պայմանավորում են կյանքի որակի միջև տարբերությունները և կյանքի որակի ընկալումները: Մասնավորապես.

³ Փորձագիտական գնահատականները, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշները, որոնք կյանքի որակի այլընտրանքային գնահատականներ են, կարող են կիրառվել կյանքի որակի հասարակական ընկալումների ավելի համակողմանի և խորը մեկնաբանության համար:

⁴ Հիմնվելով այն դրույթի վրա, որ մակրո մակարդակի իրողությունների աղեկվատ գնահատականը դուրս է գտնվում միջին քաղաքացու կոմպետենտության շրջանակից:

⁵ Դիտարկվող բաղադրիչը կարող է առկա լինել համայնքում, սակայն ֆիզիկապես անհասանելի լինել հարցվողի ընտանիքի համար: Օրինակ՝ գյուղական համայնքում կարող է առկա լինել մայր զազատար, սակայն գյուղի որոշակի թաղամասում առանձնատների զազամատակարարումը ֆիզիկապես անհասանելի լինի:

⁶ Ենթադրվում է, որ, եթե անձը (կամ տնային տնտեսությունը) փաստացի օգտվում է որևէ ծառայությունից, ապա այդ ծառայությունը ֆինանսապես մատչելի է:

- a. ըստ հետազոտության տարիների՝ 2010 և 2011թթ. միջև (այն դեպքերում, երբ մեթոդաբանական մոդիֆիկացիաները չէին արգելում նման համեմատությունը),
 - b. ըստ բնակավայրի տիպի (Երևան – քաղաք – գյուղ բաշխման),
 - c. ըստ հարցվողների բարեկեցության մակարդակների,
 - d. որոշ դեպքերում, երբ պահանջել է հետազոտվող կոնցեպտի բովանդակությունը, նաև՝ ըստ տարիքային խմբերի:
8. Կյանքի որակի՝ ըստ ոլորների և ենթաոլորտների ագրեգացված ցուցանիշները ստացվել են հետևյալ կերպ.
- a. հաշվարկվել է հարցվածների բավարարվածության միջին արժեքը՝ կոնկրետ ենթաոլորտային բաղադրիչի որակից,
 - b. ենթաոլորտի ցուցանիշը հաշվարկվել է՝ որպես նրա բաղադրիչների **որակից հարցվածների բավարարվածության** գնահատականների միջին արժեք,
 - c. ոլորտի ցուցանիշը հաշվարկվել է՝ որպես նրա կազմում գտնվող ենթաոլորտների գնահատականների միջին արժեք:

Այդպիսով, կիրառելով անհատի մակարդակում կյանքի որակի սահմանումը, իրականացվել է բնակչության մակարդակում կյանքի որակի գնահատումը:

Կյանքի որակի բաղադրիչների գնահատականները և դրանց մեկնաբանությունը

Հետազոտության ընթացքում հասարակության բավարարվածությունը կյանքի տարբեր ոլորտների, ենթաոլորտների և դրանց բաղադրիչների նկատմամբ չափվել է հարցաթերթային հարցերի հնարավորինս միասնական ձևակերպումներով (հաշվի առնելով հայերենի քերականական և ոճաբանական առանձնատկությունները), և կիրառվել է հնարավորինս միասնական սանդղակ:

Հարցվողների դիրքորոշումների չափման համար հետազոտությունում կիրառվել են Լայկերտի սանդղակի տիպի քառաստիճան, առանց միջին կետի սանդղակներ: Կախված գնահատվող կոնցեպտի բովանդակությունից և բնույթից՝ դրանք ստացել են համապատասխան բառային ձևակերպումներ: Մասնավորապես, բավարարվածության աստիճանի գնահատման համար կիրառվել է. «Որքանով եք բավարարված [ոլորտ/ենթաոլորտ/բաղադրիչ] [իրավիճակից]» հարցը, իսկ սանդղակը ստացել է հետևյալ բառային ձևակերպումը.

1. «*Ընդհանրապես բավարարված չեմ*»,
2. «*Ավելի շուտ բավարարված չեմ*»,
3. «*Ավելի շուտ բավարարված եմ*»,
4. «*Լիովին բավարարված եմ*»:

Զեկույցը կազմավորվել է բավական մեծածավալ հաշվարկների արդյունքում: Դրանց ներկայացումն ամբողջական տեսքով անխուսափելիորեն կծանրացնեք արդյունքների ընկալումը: Այդ

պատճառով, զեկույցի գծապատկերներում և աղյուսակներում արդյունքներն առավել ընկալելի դարձնելու համար միավորվել են պատասխանների դրական և բացասական բնույթ ունեցող տարբերակները (այն դեպքերում, երբ դա չէր աղավաղում տվյալների բուն բովանդակությունը): Մասնավորապես, «*լիովին բավարարված եմ*» և «*ավելի շուտ բավարարված եմ*» տարբերակները միավորվել են որպես բավարարվածությունն արտահայտող պատասխաններ, իսկ բացասական բնույթի դիրքորոշումներ արտապատկերող աստիճանները՝ «*ընդհանրապես բավարարված չեմ*» և «*ավելի շուտ բավարարված չեմ*», միավորվել են որպես անբավարարվածությունն արտահայտող պատասխաններ: Դրանով իսկ, աղյուսակներում և գծապատկերներում միայն միավորված դրական դիրքորոշումների ներկայացումը լիարժեք պատերազմում է տալիս ամբողջ բաշխման վերաբերյալ: Այդ մոտեցման կիրառման դեպքում հնարավոր է վերլուծությունների հիմքում ունենալ ոչ թե առանձին ցուցանիշներ, այլ ենթաոլորտների և դրանց բաղադրիչների պրոֆիլները, ինչը դյուրինացնում է զեկուցված տվյալների հնարավորինս ամբողջական խմբավորված ընկալումը:

Մակրո մակարդակում ուսումնասիրվել են կյանքի որակի ընկալումները հետևյալ ոլորտներում.

- տնտեսական,
- սոցիալական,
- ենթակառուցվածքներ,
- քաղաքական ազատություններ և կառավարման որակ:

Միջին և միկրո մակարդակներում դիտարկվել են հետևյալ ոլորտներն ու ենթաոլորտները.

- տնտեսական ոլորտ, որի կազմում՝ հետևյալ ենթաոլորտները.
 - աշխատանքային պայմաններ,
 - բնակարանային պայմաններ,
 - եկամուտի աղբյուրներ,
 - սննդամթերք,
 - կենցաղային իրեր և տեխնիկա,
 - սեփականություն (անշարժ գույք, ավտոմեքենա, գյուղտեխնիկա),
- ենթակառուցվածքային ոլորտ.
 - էլեկտրամատակարարում,
 - գազամատակարարում,
 - խմելու ջրի մատակարարում,
 - ռոռզման ջուր,
 - տնային/ֆիքսված հեռախոսակապ,
 - բջջային հեռախոսակապ,
 - ինտերնետ կապ,
 - քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ,
 - միջքաղաքային / միջգյուղական տրանսպորտ,
 - աղբահանություն,
 - հեռուստահեռարձակում,

- փողոցային լուսավորություն,
- գյուղմթերքի իրացման կետեր,
- պարարտանյութի ձեռքբերման կետեր,
- գյուղատնտեսական տեխնիկա,
- մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներ,
- գյուղամիջյան փողոցներ,
- սոցիալական ոլորտ, որի կազմում՝ հետևյալ ենթաոլորտները.
 - առողջապահություն,
 - կրթություն,
 - սոցիալական միջավայր,
 - ֆիզիկական և սոցիալական անվտանգություն,
 - հասարակական տրամադրություններ,
 - հանգիստ և ժամանց,
 - տուրիզմ,
- էկոլոգիական ոլորտ, որի կազմում՝ հետևյալ ենթաոլորտները.
 - շրջակա միջավայրի մաքրություն,
 - բնական վտանգներից/աղետներից պաշտպանվածություն,
 - կենդանական աշխարհից ծագող վտանգներ:

Միջին և միկրո մակարդակներում ենթաոլորտային բաղադրիչները գնահատվել են հետևյալ տեսակետերից.

- բաղադրիչի ֆիզիկական մատչելիությունը համայնքում (միջին կամ «ենթակառուցվածքային» մակարդակ),
- բաղադրիչի կարևորությունը հարցվողի/նրա ընտանիքի համար (միկրո մակարդակ),
- բաղադրիչի ֆինանսական մատչելիությունը հարցվողի/նրա ընտանիքի համար (միկրո մակարդակ),
- հարցվողի բավարարվածությունը բաղադրիչի որակից/կամ այլ աղեկվատ բնութագրից (միկրո մակարդակ):

Այսպիսով, կյանքի որակի գնահատումն իրենից ներկայացնում է ենթաոլորտային բաղադրիչների որակից բնակչության բավարարվածության գնահատման միջոցով ենթաոլորտներից և ոլորտներից բնակչության միջին բավարարվածության գնահատականների կազմավորում: Իսկ ենթաոլորտային բաղադրիչների՝ համայնքում առկայության, հարցվողի ընտանիքի համար դրանց ֆիզիկական և ֆինանսական մատչելիության ցուցանիշները կյանքի որակի գնահատականների մեկնաբանության համատեքստերն են:

Սույն հաշվետվության մեջ «[ցուցանիշը] աճել է/նվազել է [...]%-ով» արտահայտությունը նշանակում է ցուցանիշի համեմատվող արժեքների տարբերությունը (աճը կամ նվազումը *տոկոսային կետով*), այլ ոչ թե ցուցանիշի մի արժեքի տոկոսային աճը մյուս արժեքի նկատմամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի տնտեսության զարգացման արդյունքները խիստ անհավասարաչափ են բաշխվում: Դրանք հասանելի են նախ և առաջ բարեկեցիկ շերտերին: Հասարակության մեծ մասի համար առկա է մեծ ձեռքված ապրանքների և ծառայությունների **որակից բավարարվածության** (ինչը սահմանված է որպես կյանքի որակի հիմնական բովանդակություն), և դրանց **ֆինանսական մատչելիության** միջև: Այն դեպքում, երբ հասարակության համար «կյանքից գոհ լինելու» երկու առավել կարևոր գործոններն են՝ առողջությունը և ընտանիքի անվտանգությունը, ցածր է և՛ առողջապահական ծառայությունների ֆինանսական մատչելիությունը, և՛ ֆիզիկական ու սոցիալական անվտանգության զգացողությունը: Հետխորհրդային Հայաստանում նոր կառուցվածքով վերականգնվել է տնտեսությունը, սակայն չի վերականգնվել սոցիալական կապիտալը: Արդյունքում՝ Հայաստանում խիստ անբարենպաստ են հասարակական տրամադրությունները:

Մակրո ոլորտում կյանքի որակի ընդհանուր գնահատականը՝ 37.5% է: Համեմատաբար ավելի բարենպաստ է իրավիճակը ենթակառուցվածքների ոլորտում է (52.1%), պակաս բարենպաստ՝ տնտեսական ոլորտում՝ 19.0%: Ենթաոլորտներից լավագույն իրավիճակը հեռահաղորդակցության ենթաոլորտում է (83.1%), իսկ վատագույնը՝ աշխատատեղերի ստեղծման (6.9%) և գների մակարդակի (9.9%): Տնտեսական ոլորտում հասարակությունն առավել բավարարված է՝ «Հայաստանում տնտեսական զարգացման տեմպերից» (31.8%), սոցիալական ոլորտում՝ «Հանգստի և ժամանցի բազմազանությունից» (57.4%), իսկ կառավարման ոլորտում՝ «քաղաքացիական ազատությունների աստիճանից» (43.5%): Շատ ցածր է «երկրում կարյերայի հնարավորությունների» գնահատականը (18.5%) և «ինքնաթիռների տոմսերի գների մատչելիությունը» (12.9%):

Միկրո մակարդակում կյանքի որակը վատթարացնող հիմնական գործոնները հետևյալն են.

- Ցածր է բնակչության բավարարվածությունը աշխատանքի վարձրատրությունից, ընտանեկան եկամուտներից, բնակարանային պայմաններից, ցածր է սննդամթերքի (մասնավորապես մսամթերքի ու ձկնամթերքի), ինչպես նաև կենցաղային իրերի և տեխնիկայի ֆինանսական մատչելիությունը:
- Հասարակությունում շատ տարածված են հիվանդագին վիճակների ախտանիշները (մասնավորապես՝ գլխացավ, մեջքի ցավ, հոդացավ, անքնություն) և բացասական հույզերը, ցածր է առողջապահական ծառայությունների և կրթական ծառայությունների ֆինանսական մատչելիությունը, ցածր է ֆիզիկական և սոցիալական պաշտպանվածության զգացողությունը, ցածր է հանգստի և տուրիզմի ֆինանսական մատչելիությունը:
- Բնակչության 15.2%-ն է կարծում, որ բնակվում է կոլոզիապես մաքուր պայմաններում և միայն 8.2%-ն է գերծ թափառող շներից կամ առնետներից ծագող վտանգներից:

Կյանքի որակը պայմանավորող մակրո մակարդակի բաղադրիչները

2011թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի բնակչության բավարարվածությունը կյանքի որակի մակրո բաղադրիչներից ըստ ոլորտների տրված է Գծապատկեր 1-ում, իսկ ըստ ենթաոլորտների՝ Գծապատկեր 2-ում: Այդ գծապատկերում մակրո մակարդակի ենթաոլորտները խմբավորված են ըստ տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքների և պետական կառավարման ոլորտների:

- Մակրո մակարդակում կյանքի որակի միջինացված գնահատականն է՝ 37.5%:⁷
- Առավել բարձր է բավարարվածության աստիճանը ենթակառուցվածքների ոլորտում իրավիճակից՝ 52.1%,
- Երկրորդ տեղում է սոցիալական ոլորտը՝ 46.6%,
- Երրորդ տեղում՝ քաղաքական ազատությունների և կառավարման որակի ոլորտը՝ 33.8%:
- Ամենացածր գնահատականն է ստացել տնտեսական ոլորտը՝ 19.0%:

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ տեղի ունեցած առավել նշանակալի փոփոխությունները ներկայացված են Գծապատկեր 3-ում:


Տնտեսական ոլորտում աճել է հիպոթեքային վարկերի մատչելիությունից և դոլարի կուրսի կայունությունից բավարարված անձանց տոկոսը, սակայն նվազել է աշխատատեղերի առկայությունից բավարարված անձանց քանակը:

Սոցիալական ոլորտում խիստ նվազել է սննդամթերքի որակից և սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակից բավարարված անձանց քանակը, սակայն աճել է հանգստի/զվարճանքի/ժամանցի բազմազանությունից և ներքին անվտանգության մակարդակից բավարարված անձանց քանակը:

Ենթակառուցվածքների ոլորտում նվազել է հանրային տրանսպորտի և սպասարկման ոլորտների իրավիճակից, ինչպես նաև ինքնաթիռների տոմսերի գների մակարդակից բավարարված անձանց քանակը, սակայն աճել է երկաթուղու գործունեությունից բավարարվածների քանակը:


Քաղաքացիական ազատությունների և կառավարման ոլորտում աճել է դատական համակարգից, մարդու իրավունքների պաշտպանվածության աստիճանից, երկրում օրենքների կիրառելիության աստիճանից և կառավարության գործունեությունից բավարարված անձանց քանակը, սակայն նվազել է երկրում կարիերայի հնարավորություններից բավարարվածների քանակը:

⁷ Գնահատականը կարելի է մեկնաբանել երկակի. ա) Հայաստանի հասարակության 37.5%-ը բավարարված է երկրում մակրո մակարդակում կյանքի որակից, բ) Հայաստանի հասարակության [որպես ամբողջություն] 37.5%-ով է բավարարված կյանքի որակից մակրո մակարդակում: Մեկնաբանությունների երկակիությունը բացահայտում է կյանքի որակի հասկացության պայմանականությունը:



Գծապատկեր 1 Հայաստանի հասարակությունում կյանքի որակի գնահատականները մակրո և միկրո մակարդակներում՝ ըստ ոլորտների, 2011թ.

«Ընդհանուր առմամբ որքանո՞վ է Հայաստանում բավարար իրավիճակը հետևյալ ոլորտներում»:



Գծապատկեր 2. Կյանքի որակի մակրո մակարդակում դիտարկված ենթաոլորտներից բնակչության բավարարվածության միջին ցուցանիշները (վերևից ներքև գույներով բաժանված են համապատասխանաբար՝ տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքային և քաղաքացիական ազատությունների ու կառավարման որակի ոլորտների ենթաոլորտները):

Մակրո մակարդակ, ոլորտներ/ենթաօլորտներ	Աճը/Նվազումը 2011թ. 2010թ. նկատմամբ
Տնտեսական ոլորտ	
01 Տնտեսական զարգացման տեմպերը	-0.9%
02 Բնակչության ընդհանուր կենսամակարդակը	4.1%
03 Դոլարի կուրսի կայունությունը	4.9%
04 Հիպոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունը	6.5%
05 Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանը	-1.6%
06 Գների մակարդակը	0.4%
07 Աշխատատեղերի առկայությունը	-5.8%
Մոցիալական ոլորտ	
08 Հանգստի/Ժամանցի/զվարճանքի բազմազանությունը	6.4%
09 Արտաքին անվտանգության աստիճանը	-0.4%
10 Առողջապահական ծառայությունների որակը	-0.8%
11 Ներքին ապահովության և անվտանգության աստիճանը	4.9%
12 Կրթության մակարդակը	1.0%
13 Սննդամթերքի որակը	-28.9%
14 Առողջապահական ծառայությունների մատչելիությունը	0.2%
15 Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը	-7.6%
Ենթակառուցվածքներ	
16 Հեռահաղորդակցության ոլորտի (կապ, ինտերնետ) գործունեությունը	-0.7%
17 Սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը	-10.4%
18 Հանրային տրանսպորտի գործունեությունը	-11.2%
19 Երկաթուղային տրանսպորտի գործունեությունը	5.9%
20 Ճանապարհների որակը	-2.2%
21 Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը	-13.2%
Քաղաքացիական ազատություններ և կառավարում	
22 Քաղաքացիական ազատությունների աստիճանը	-1.8%
23 Տեղական իշխանությունների գործունեությունը	2.7%
24 Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը	9.4%
25 Դատական համակարգի գործունեությունը	10.6%
26 Կառավարության գործունեությունը	4.4%
27 Երկրում օրենքների կիրառելիությունը	5.5%
28 Ընտրական գործընթացները	-2.8%
29 Երկրում կարիերայի հնարավորությունները	-6.2%

Գծապատկեր 3. Մակրո մակարդակում կյանքի որակը բնորոշող ենթաօլորտներից բավարարվածության փոփոխությունները 2011թ.-ին՝ 2010թ.-ի նկատմամբ:

Կյանքի որակը պայմանավորող միջին և միկրո մակարդակի բաղադրիչները

Միջին և միկրո մակարդակներում կյանքի որակի միջին գնահատականներն ըստ ոլորտների տրված են Գծապատկեր 1-ում (կյանքի որակի մակրո գնահատականների կողքին): Գծապատկերի տվյալներից բխում է Հայաստանի արդի հասարակության այն առանձնահատկությունը, որ հասարակության անդամների բավարարվածությունը միկրո և մակրո մակարդակներում նշանակալի չափով ավելի բարձր է, քան բավարարվածությունը երկրի ընդհանուր իրավիճակից (մակարդակից):⁸

Աղյուսակ 1-ում տրված են միկրո մակարդակում կյանքի որակի գնահատականներն ըստ ոլորտների և ենթաոլորտների, ինչպես նաև այդ գնահատականներն՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Ոլորտ/Ենթաոլորտ	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Տնտեսական ոլորտ	58.6%	60.1%	59.4%	56.9%	55.4%	59.8%	65.9%
Բնակարանային պայմաններ	43.8%	50.2%	43.1%	37.9%	38.9%	46.2%	54.2%
Կենցաղային իրեր և տեխնիկա	73.9%	76.7%	75.3%	69.2%	70.5%	75.0%	79.9%
Սննդամթերքի որակ	80.2%	78.4%	81.4%	81.1%	78.8%	81.4%	82.3%
Ընտանեկան եկամուտներ (համակշռված առակությամբ)	28.9%	26.3%	29.9%	32.8%	25.2%	29.1%	42.2%
Աշխատանքային պայմաններ	66.4%	69.0%	67.4%	63.7%	63.4%	67.3%	70.8%
Ենթակառուցվածքային ոլորտ	69.6%	78.6%	71.3%	69.1%	68.5%	70.1%	71.8%
Ընդհանուր ենթակառուցվածքներ	78.4%	78.6%	79.3%	78.7%	78.9%	77.9%	77.9%
Գյուղատնտեսական/Գյուղական ենթակառուցվածքներ	60.7%		63.3%	59.5%	58.2%	62.3%	65.7%
Սոցիալական ոլորտ	66.9%	66.5%	69.0%	65.9%	63.9%	68.7%	71.9%
Առողջապահական ծառայություններ	79.2%	76.0%	82.9%	81.4%	78.2%	80.1%	79.5%
Կրթական ծառայություններ, ընդամենը	73.9%						
Պետական մանկապարտեզ	75.2%						
Հիմնական դպրոց	72.3%						
Ավագ դպրոց	69.2%						
Քոլեջ, վարժարան	66.8%						
Պետական բուհ	73.9%						
Սոցիալական շփումներ	87.5%	84.6%	87.5%	90.6%	87.4%	87.1%	88.3%
Ֆիզիկական և սոցիալական անվտանգություն	55.3%	47.6%	58.0%	60.9%	53.1%	55.6%	61.2%
Հանգիստ և ժամանց	64.3%	67.2%	67.0%	58.5%	59.1%	68.1%	70.6%
Տուրիզմ (օգտվածների տոկոսը)	41.4%	49.6%	44.4%	30.3%	31.8%	47.3%	57.9%
Երջակա միջավայր	35.2%	35.7%	35.7%	34.1%	34.8%	36.1%	34.5%
Էկոլոգիապես մաքուր միջավայրում բնակվող անձանց տոկոսը	15.2%	13.5%	11.0%	20.6%	16.8%	14.0%	12.5%
Բնական վտանգներից զերծ պայմաններում բնակվող անձանց տոկոսը	82.1%	84.1%	86.7%	76.1%	78.9%	86.8%	83.7%
Կենդանիներից բխող վտանգներից զերծ բնակչության տոկոսը	8.2%	9.4%	9.5%	5.7%	8.8%	7.5%	7.2%
Ընդամենը միջին և միկրո մակարդակում	57.6%	60.2%	58.9%	56.5%	55.6%	58.7%	61.0%

Աղյուսակ 1. Հայաստանի բնակչության կյանքի որակը միջին և միկրո մակարդակներում:⁹

⁸ Այս ֆենոմենն արտահայտվել է նաև մի շարք այլ սոցիոլոգիական հետազոտություններում:

⁹ Այստեղ և այսուհետ՝ առավել կանաչ գույնով նշված են առավել բարենպաստ իրավիճակները, իսկ դեղինի մոտ գույներով՝ նվազ բարենպաստ իրավիճակները:

Աղյուսակի տվյալների հիմնական առանձնահատկություններն են.

- Միջին և միկրո մակարդակներում բնակչության կյանքի որակի բաղադրիչներից բավարարվածության միջին գնահատականն է՝ 57.6%:
- Բավարարվածության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է ենթակառուցվածքների ոլորտում՝ 69.6%:
- Երկրորդ տեղում է սոցիալական ոլորտը՝ 66.9%:
- Երրորդ տեղում է՝ բավարարվածությունը տնտեսական ոլորտից՝ 58.6%:
- Բավարարվածության ամենացածր մակարդակը գրանցվել է շրջակա միջավայրի իրավիճակի ոլորտում՝ 35.2%:

Միկրո և միջին մակարդակների տնտեսական ոլորտում առավել խնդրահարույց է բավարարվածության մակարդակը ընտանեկան եկամուտներ ենթաոլորտում (28.9%): Այդ ցուցանիշը՝ ըստ բարեկեցության խմբերի փոփոխվում է բավական մեծ միջակայքում: Ցածր բարեկեցությամբ խմբում այն հավասար է 25.2%-ի, իսկ բարձր բարեկեցության խմբում՝ 42.2%-ի:

Միկրո և միջին մակարդակներում ևս խնդրահարույց է այն, որ շատ ցածր է էկոլոգիապես մաքուր միջավայրում բնակվող անձնաց քանակը (հանրապետական ցուցանիշը՝ 15.2%), ինչպես նաև կենդանիներից (թափառող շներ, առնետներ) բխող վտանգներից զերծ պայմաններում բնակվող բնակչության քանակը (8.2%):

Միկրո և միջին մակարդակներում կյանքի որակի ընդհանրացված գնահատականները համեմատաբար ցածր են գյուղական բնակավայրերում (56.5%) և ամենացածր բարեկեցության մակարդակ ունեցող խմբում (55.6%):

Տնային տնտեսությունների ֆինանսական ապահովվածությունը և ընդհանուր բավարարվածությունը կյանքից

Հայաստանում բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության նպատակ ունեցող բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտություններում, երբ հարցվողին, կյանքի ամենատարբեր ոլորտների վերաբերյալ բազմաթիվ հարցեր տալուց հետո, հարց է տրվել՝ «Ի վերջո, ինչպե՞ս բարելավել Ձեր/Ձեր համայնքի կյանքը/կյանքի պայմաններ», ապա, անկախ հարցվողի սեռից, տարիքից և բնակավայրի տիպից, սիստեմատիկ կերպով կրկնվել է, որ որոշիչ գործոնը ֆինանսական միջոցների առկայությունն է:

Հետևաբար, գնահատելու համար տվյալ անձի համար, տվյալ պահին, տվյալ համայնքում հասարակականորեն ընդունելի (նորմալ) կենսապայմանները, կարելի է կիրառել հետևյալ հարցը. «Որքա՞ն գումար է պետք ներկայումս Ձեր ընտանիքի չափ ընտանիքին՝ Ձեր բնակավայրում նորմալ ապրելու համար»: Վերջին մի քանի տարիների ընթացքում նմանատիպ հարց հնչել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվող «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջականացված հետազոտություններում»:¹⁰ Որպես կանոն, տրված պատասխանների միջինը ավելի քան կրկնակի գերազանցում է հետազոտության ժամանակահատվածում կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքը:

Հետևյալ երկու հարցերը լրացնում են նորմալ կենսապայմանների համար անհրաժեշտ միջին գումարից ստացվող ինֆորմացիան. «Որքա՞ն գումար է պետք ներկայումս Ձեր ընտանիքի չափ ընտանիքին՝ Ձեր բնակավայրում **լավ** ապրելու համար» և «Որքա՞ն գումար է պետք ներկայումս Ձեր ընտանիքի չափ ընտանիքին՝ Ձեր բնակավայրում **աղքատ չհամարվելու** համար»:

Սակայն, մյուս կողմից, զարմանալի չէ, որ նորմալ ապրելու համար իր իսկ նշած անհրաժեշտ գումարից ավելի եկամուտ ունենալու դեպքում, հարցվողը սուբյեկտիվորեն կարող է դժգոհ լինել իր կյանքից, քանի որ մարդկանց գիտակցությունում միշտ առկա են միմյանց հակասող դիրքորոշումներ և ընկալումներ, և, բացի դրանից, «երջանկությունը միայն փողի մեջ չէ», եթե նույնիսկ մարդը դա չի գիտակցում: Այսպիսով, եթե մարդուն հարց տրվի. «Ընդհանուր առմամբ գո՞հ եք Ձեր կյանքից», իսկ հետո ստացված պատասխանները համադրվեն նորմալ ապրելու համար անհրաժեշտ նրանց կողմից տրված պատասխանների հետ, ապա արդյունքները կարելի է ներկայացնել տրամաբանական քառակուսու տեսքով, որը հարցվողներին ստորաբաժանում է 4 խմբի՝ ա) «ունեն նորմալ ապրելու համար բավարար միջոցներ» և «գոհ են կյանքից» բ) «ունեն նորմալ ապրելու համար բավարար միջոցներ» և «դժգոհ են կյանքից», գ) «չունեն նորմալ ապրելու համար բավարար միջոցներ» և «գոհ են կյանքից» և դ) «չունեն նորմալ ապրելու համար բավարար միջոցներ» և «դժգոհ են կյանքից»:

¹⁰ 2010թ. ՀՀ ԱՎԾ նշված հետազոտության ընթացքում «լավ ապրելու համար» 1 շնչի հաշվով միջին ամսական գումարը կազմել է 184,565 դրամ: Եթե ենթադրենք, որ միջին ընտանիքը կազմված է 4 անձից, ապա ընտանիքի համար գումարը կկազմի մոտ՝ 738,260 դրամ (կամ՝ մի փոքր ավելի քիչ՝ հաշվի առնելով ընտանիքում մասշտաբի գործակիցը):

Ներկայացվող հետազոտությունում հարց չի տրվել, թե որքա՞ն են կազմել հարցվողի ընտանիքի եկամուտները (օրինակ՝ հետազոտությանը նախորդող ամսվա ընթացքում) հիմնվելով այն հայտնի փաստի վրա, որ Հայաստանում և նմանատիպ երկրներում բնակչությունը հակված է նվազեցնել իրենց իրական եկամուտները ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՎԾ բնակչության կենսամակարդակի ընդհանրացված հետազոտությունները տալիս են այդ և նմանատիպ հարցերի առավել աղեկվատ և բազմակողմանի պատասխանները: Սակայն հարց է տրվել, թե որքա՞ն են կազմել նախորդող մեկ ամսվա ընթացքում ընտանիքի բոլոր ծախսերը (հիշեցնելով դրանց տեսակները): Հայտնի է, որ ծախսերի մասին հարցվողները տալիս են ճշմարտությանն ավելի մոտ պատասխաններ (չի բացառվում, որ նույնպես նվազեցված): Ստացված արդյունքները ներկայացված են **Աղյուսակ 2**ում:

Անձի սուբյեկտիվ բավարարվածությունը կյանքից	Ընտանիքի օբյեկտիվ ֆինանսական վիճակը		Ընդ.
	Նորմալից ցածր	Նորմալից բարձր	
Բավարարված չէ	 37.4%	 3.3%	 40.7%
Բավարարված է	 49.0%	 10.3%	 59.3%
Ընդամենը	 86.4%	 13.6%	100.0%

Աղյուսակ 2. Կյանքից բավարարվածության սուբյեկտիվ գզացողությունը և ամսական ընտանեկան ծախսերի մակարդակը:

Արդյունքում ստացվել է, որ ՀՀ բնակչության.

- 37.4% ընտանիքների ծախսերը ավելի քիչ են, քան իրենց ընկալումներում անհրաժեշտ է նորմալ կենսապայմանների համար, և իրենք դժգոհ են իրենց կյանքից:
- 49.0% ընտանիքների ծախսերն ավելի քիչ են, քան իրենց ընկալումներում անհրաժեշտ է նորմալ կենսապայմանների համար, սակայն իրենք գոհ են իրենց կյանքից կամ համակերպվել են իրենց վիճակին:
- 3.3% ընտանիքների ծախսերը գերազանցում են իրենց իսկ ընկալումներում նորմալ ապրելու համար անհրաժեշտ շեմը, սակայն իրենք դժգոհ են իրենց կյանքից:
- 10.3% ընտանիքների ծախսերը գերազանցում են իրենց իսկ ընկալումներում նորմալ ապրելու համար անհրաժեշտ շեմը և, միաժամանակ, իրենք իրենց կյանքից գոհ են:

Այսպիսով, ՀՀ բնակչության կեսը, ամսական ծախսելով նորմալ ապրելու համար ավելի քիչ, հայտարարել է, որ բավարարված է կյանքից:

ՄԱՍ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՄԱԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2011թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի բնակչության բավարարվածությունը կյանքի որակի մակրո բաղադրիչների նկատմամբ տրված է Գծապատկեր 2-ում: Գծապատկերում մակրո մակարդակի բաղադրիչները խմբավորված են՝ ըստ տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքների և պետական կառավարման ոլորտների, իսկ յուրաքանչյուր ոլորտի բաղադրիչները դասակարգված են՝ ըստ դրանց վիճակից/գործունեությունից բնակչության բավարարվածության նվազման:

Գծապատկեր 2-ում ներկայացված պատկերն ընդհանրացված է Գծապատկեր 4-ում, որտեղ ներկայացված են նշված չորս ոլորտներում բավարարվածության մակարդակների միջին արժեքները: Գծապատկերում ոլորտից բավարարվածության միջին արժեքի հետ միասին տրված են նաև տվյալ ոլորտի ամենացածր և ամենաբարձր բավարարվածության գնահատականները: Մասնավորապես, մակրո մակարդակում **տնտեսական ոլորտի** բաղադրիչներից բավարարվածության միջին գնահատականը 19.0% է, ընդ որում՝ ոլորտում բավարարվածության ամենացածր աստիճանը 6.9% է, որը ստացել է «աշխատատեղերի առկայությունը Հայաստանում» բաղադրիչը, իսկ բավարարվածության ամենաբարձր գնահատականը՝ 31.8%, տնտեսության ոլորտում ստացել է «տնտեսության զարգացման տեմպերը Հայաստանում» բաղադրիչը:

Գծապատկեր 4-ից երևում է, որ մակրո ոլորտում միջին հաշվով.

- ընդհանուր առմամբ հասարակության բավարարվածության միջին գնահատականն է 37.5%,
- առավել բարձր է բավարարվածության աստիճանը ենթակառուցվածքների ոլորտում իրավիճակից՝ 52.1%,
- ամենացածրն է տնտեսական ոլորտից բավարարվածության աստիճանը՝ 19.0%,
- միջին տեղերում են սոցիալական (46.6%) և քաղաքական ազատությունների (33.8%) ոլորտներից բավարարվածության աստիճանները,
- իր բաղադրիչներից բավարարվածության աստիճանի փոփոխության ամենամեծ միջակայքը ենթակառուցվածքների ոլորտում է:

Տնտեսական ոլորտի մակրո գնահատականներ

Տնտեսական ոլորտի մակրո մակարդակում դիտարկվել են հետևյալ ենթաոլորտները.

- տնտեսական զարգացման տեմպերը,
- բնակչության ընդհանուր կենսամակարդակը,
- դուլարի կուրսի կայունությունը,
- հիպոթեքային վարկերի մատչելիությունը,
- աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանը,
- գների մակարդակը,
- աշխատատեղերի առկայությունը:

Մակրո մակարդակում տնտեսական ոլորտի բաղադրիչներից բավարարվածության գործոնային վերլուծությունը ցույց է տվել, որ դիտարկված բոլոր 7 բաղադրիչներն ուժեղ շաղկապված են միմյանց հետ: Այդ բաղադրիչների նկատմամբ բավարարվածության աճի 49.4%-ը կարելի է բացատրել միայն մեկ գործոնով, այն է՝ տնտեսական աճով:

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից (տես՝ «Տնտեսական ոլորտ» ենթաաղյուսակը) երևում է, որ տնտեսական ոլորտի հետևյալ ենթաոլորտներում բավարարվածության աստիճանը միջին մակարդակից բավական բարձր է.

- «տնտեսության զարգացման տեմպերից»՝ 31.8%,
- «բնակչության ընդհանուր կենսամակարդակից»՝ 26.4%,
- «դոլարի կուրսի կայունությունից»՝ 21.6%,
- «հիպոթեքային վարկերի մատչելիության աճից»՝ 21.6%,

սակայն, մյուս կողմից, շատ ցածր է հետևյալ ենթաոլորտներում.

- «աշխատատեղերի առկայությունից»՝ 6.9%,
- «գների մակարդակից»՝ 9.9%:

Աշխատատեղերի առկայությունից և գների մակարդակից բավարարվածության ցածր գնահատականները և տնտեսական ոլորտի գնահատականների մեծ ցրվածքը թույլ է տալիս առաջ քաշել հիպոթեզ, որ.

- Հայաստանում օբյեկտիվորեն տեղի ունեցող տնտեսական աճի բնույթն այնպիսին է, որ դրա արդյունքներն անհավասար են բաշխվում հասարակության տարբեր շերտերի միջև:

Այս ենթադրության ստուգման համար դիտարկենք տնտեսական բաղադրիչներից բավարարվածության մակարդակները հարցվածների տարբեր բարեկեցությամբ խմբերում: Աղյուսակ 5-ի «Տնտեսական ոլորտ» ենթաաղյուսակի «D» սյան տվյալներից երևում է, որ նորմալից օբյեկտիվորեն ավելի **ցածր կենսամակարդակ** ունեցող բնակչության խմբում տնտեսական բոլոր ցուցանիշներից բավարարվածության մակարդակները նշանակալի չափով ավելի ցածր են, քան նորմալից **օբյեկտիվորեն ավելի բարձր կենսամակարդակ** ունեցող խմբում:

Բացի դրանից, Աղյուսակ 5-ի «տնտեսական ոլորտ» հատվածի տվյալներից երևում է, որ.

- բարեկեցության տարբերությունն առավելապես ազդում է «բնակչության կենսամակարդակի» և «տնտեսական զարգացման տեմպերի» ընկալումների վրա:

Մեկ տարվա ընթացքում մակրո մակարդակում տնտեսական ոլորտի բաղադրիչների գնահատականների փոփոխությունները տարաբնույթ են (Աղյուսակ 3):

2010թ.-ից 2011թ. ժամանակահատվածում աճել են հետևյալ բաղադրիչների դրական գնահատականները.

- հիպոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունը,

- դրլարի կուրսի կայունությունը,
- բնակչության ընդհանուր կենսամակարդակը,

սակայն նվազել է.

- աշխատատեղերի առկայությունը

բաղադրիչից բավարարվածության աստիճանը:

Տնտեսական ոլորտի գնահատականների տարբերություններ են առկա նաև բնակավայրերի տարբեր տիպերում (Աղյուսակ 4):

- Տնտեսական ոլորտի բաղադրիչների գնահատականները Երևանում համեմատաբար ավելի ցածր են, քան մարզային քաղաքներում և գյուղական բնակավայրերում:
- Մարզային քաղաքներում տնտեսական ոլորտի բաղադրիչների գնահատականներն ավելի ցածր են, քան գյուղական բնակավայրերում:
- Երևանում առավել ցածր է «բնակչության ընդհանուր կենսամակարդակը» բաղադրիչի գնահատականը:

Սոցիալական ոլորտի մակրո գնահատականներ

Սոցիալական ոլորտի մակրո մակարդակում դիտարկվել են հետևյալ ենթաոլորտները.

- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունը,
- արտաքին անվտանգության աստիճանը,
- առողջապահական ծառայությունների որակը,
- ներքին ապահովության և անվտանգության աստիճանը,
- կրթության մակարդակը,
- սննդամթերքի որակը,
- առողջապահական ծառայությունների մատչելիությունը,
- սպառողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը:

Սոցիալական ոլորտի 8 ենթաոլորտներից հասարակության բավարարվածության աստիճանի գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ այն կարող է բացատրվել երկու գործոններով:

Գործոն 1. «Առաջնային (հիմնական) սոցիալական պահանջմունքների բավարարվածության մակրո գործոն», որի ազդեցությամբ միաժամանակ աճում կամ նվազում են հետևյալ ենթա-ոլորտներից բավարարվածության գնահատականները.

- ներքին ապահովության և անվտանգության աստիճանը,
- արտաքին անվտանգության աստիճանը,
- առողջապահական ծառայությունների մատչելիությունը,
- առողջապահական ծառայությունների որակը,

- կրթական ծառայությունների որակը:

Գործոն 2. «Երկրորդային սոցիալական պահանջմունքների բավարարվածության մակրո գործոն», որի ազդեցությամբ միաժամանակ աճում կամ նվազում են հետևյալ ենթաոլորտներից բավարարվածության գնահատականները.

- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունը,
- սպառողների իրավունքների պաշտպանվածության աստիճանը,
- սննդամթերքի որակը:

Երկու գործոնները համատեղ բացատրում են սոցիալական ոլորտի բոլոր ենթաոլորտներից բավարարվածության աստիճանը ներկայացնող փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 52%-ը:

Սոցիալական ոլորտում բավարարվածությունն առավել ցածր մակարդակ ունի.

- առողջապահական ծառայությունների մատչելիությունից (29.1%), որն առաջնային պահանջմունքների գործոնի բաղկացուցիչ է,
- սպառողների իրավունքների պաշտպանվածության մակարդակից (28.7%), որը երկրորդային պահանջմունքների բավարարվածության գործոնի բաղկացուցիչ է:

Առավել բարձր է բավարարվածության մակարդակը.

- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունից (57.4%):

2010թ. համեմատ՝ 2011թ. բարձրացել է բավարարվածության մակարդակը.

- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունից (6.4%-ով),
- ներքին ապահովության և անվտանգության աստիճանից (4.9%-ով):

Սակայն, բավարարվածության աստիճանը նշանակալի անկում է ունեցել.

- սննդամթերքի որակից (նվազել է 28.9%-ով),
- սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակից (նվազել է 7.6%-ով):

Ըստ բնակավայրի տիպի՝ Երևանում սոցիալական ոլորտի ծառայություններից բավարարվածության մակարդակը նշանակալի զիջում է և՛ մարզային քաղաքներին, և՛ գյուղերին, բացի.

- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունից:

Չի բացառվում, որ այդ իրավիճակը բացատրվում է Երևանում հանրային պահանջմունքների ավելի բարձր մակարդակով:

Քաղաքներում՝ գյուղերի համեմատ, սոցիալական ոլորտի ենթաոլորտներից բավարարվածության աստիճանը հիմնականում ավելի ցածր է, իսկ հետևյալ երկու ոլորտներում՝

- առողջապահական ծառայությունների մատչելիությունը,

- առողջապահական ծառայությունների որակը,

նշանակալի չափով ավելի ցածր, համապատասխանաբար՝ 10.6% և 10.0%-ով:

Ըստ բարեկեցության՝ սոցիալական ոլորտի բոլոր ենթաոլորտներից բավարարվածության մակարդակը նշանակալի չափով ավելի ցածր է նորմալից՝ ավելի ցածր եկամուտներ ունեցող բնակչության խմբում: Հատկապես մեծ է տարբերությունը հետևյալ ենթաոլորտներում.

- սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը,
- առողջապահական ծառայությունների մատչելիությունը,
- սննդամթերքի որակը,
- առողջապահական ծառայությունների որակը,
- հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունը:

Ենթակառուցվածքների մակրո գնահատականներ

Ենթակառուցվածքների ոլորտի մակրո մակարդակում դիտարկվել են հետևյալ ենթաոլորտները.

- հեռահաղորդակցության ոլորտի¹¹ գործունեությունը,
- սպասարկման ոլորտում ծառայությունների որակը,
- հանրային տրանսպորտի գործունեությունը,
- երկաթուղային տրանսպորտի գործունեությունը,
- ճանապարհների որակը,
- ինքնաթիռների տոմսերի գների մատչելիությունը:

Ենթակառուցվածքների ոլորտի ենթաոլորտներից բավարարվածության 6 փոփոխականների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք պայմանավորված են միմյանցից էապես տարբերվող պատճառներով. լավագույն մոդել է ստացվել *4-գործոնային մոդելը*:

Գործոն 1. «Հանրային ավտոմոբիլային տրանսպորտից բավարարվածության գործոն», որի կազմում են միմյանց հետ ուժեղ շաղկապված.

- բավարարվածությունը հանրային տրանսպորտից,
- բավարարվածությունը ճանապարհների որակից:

Գործոն 2. «Սպասարկման ոլորտից բավարարվածության առաջին գործոն», որի կազմում են.

- սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը,
- հեռահաղորդակցության ոլորտի (կապ, ինտերնետ) գործունեությունը:

Գործոն 3. «Սպասարկման ոլորտից բավարարվածության երկրորդ գործոն», որի կազմում են.

¹¹ Ենթաոլորտի համար կիրառվել է «ոլորտ» բառը, քանի որ ենթաոլորտն այդպես է ներկայացվել հարցաթերթում: Հարցազրույցի ընթացքում «ենթաոլորտ» բառը հարցվողի համար կարող էր շփոթեցնող լինել:

- սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը,
- ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը:

Գործոն 4. «Երկաթուղային տրանսպորտից բավարարվածության գործոն», որի կազմում է միայն մեկ փոփոխական.

- երկաթուղային տրանսպորտի գործունեությունը:

Այսպիսով, սպասարկման ոլորտի ծառայություններից բավարարվածությունն, ըստ էության, բաղադրված է երկու գործոնի. առաջինում ընդգրկված է հեռահաղորդակցությունից բավարարվածության մակարդակը (83.2%), որն ամենաբարձրն է ոչ միայն ենթակառուցվածքների ոլորտի, այլև՝ ընդհանրապես մակրո մակարդակի բոլոր ենթաոլորտների շարքում, և ինքնաթիռի տոմսերից գների մատչելիությունից բավարարվածության մակարդակը (12.9%), որն ամենացածրերի շարքում է (ավելի ցածր է բավարարվածությունը միայն աշխատատեղերի առկայությունից (6.8%) և գների մակարդակից (9.9%)): Ակնհայտ է, որ նշված ստորաբաժանումը տեղի է ունեցել այն պատճառով, որ առաջին գործոնի բովանդակությունը մոդիֆիկացվել է ամբողջ հասարակությանը վերաբերող և դրական տեղաշարժ ունեցած հեռահաղորդակցության ենթաոլորտում իրավիճակի բարելավմամբ, իսկ երկրորդ դեպքում՝ շատ յուրահատուկ ենթաոլորտի ինքնաթիռային ուղևորափոխադրումներով: Այստեղ գնահատականները ստորաբաժանվում են՝ ըստ անձի բարեկեցության մակարդակի: Նրանք, ովքեր ֆինանսապես ավելի ապահով են, «չեն նկատում» ինքնաթիռային տոմսերի բարձր գները, այլ «նկատում են» սպասարկման որակի աճը, իսկ նրանք, ովքեր ֆինանսապես քիչ ապահով են, «նկատում են» ինքնաթիռային տոմսերի բարձր գները:

Համեմատած այլ ոլորտների հետ՝ միջին բավարարվածությունը ենթակառուցվածքների ոլորտից ամենաբարձրն է (Գծապատկեր 4) և հավասար է 52.1%-ի: Սակայն, ոլորտում ամենամեծն է նաև բավարարվածության գնահատականների ցրվածքը, որը գտնվում է [12.9%; 83.2%] միջակայքում:

Ոլորտում ակնհայտ առաջատարն է.

- **հեռահաղորդակցության ենթաոլորտը, որից բավարարված են Հայաստանի չափահաս բնակչության 83.2%-ը:**

Բնակչության կեսից ավելին բավարարված է.

- **սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակից,**
- **հանրային տրանսպորտի գործունեությունից,**
- **երկաթուղային տրանսպորտի գործունեությունից:**

Ոլորտում բավարարվածության մակարդակն ամենացածրն է.

- **ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունից՝ ընդամենը 12.9%:**

Ենթակառուցվածքների ոլորտում 2011թ.-ին՝ 2010թ.-ի համեմատ

- բարելավում է տեղի ունեցել միայն երկաթուղային տրանսպորտի ենթաոլորտում (աճել է 5.9%):

Սակայն էականորեն նվազել է բավարարվածության մակարդակը.

- ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունից (նվազել է 13.2%-ով),
- հանրային տրանսպորտի գործունեությունից (նվազել է 11.2%-ով),
- սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակից (նվազել է 10.4%-ով):

Ըստ բնակավայրի տիպի՝ Երևանում ավելի ցածր է բավարարվածության մակարդակը.

- հանրային տրանսպորտի գործունեությունից:

Ըստ բարեկեցության մակարդակի՝ ենթակառուցվածքների ոլորտի բոլոր ենթաոլորտներում բավարարվածության աստիճանը նորմալից ավելի քիչ եկամուտներ ունեցող բնակչության խմբում ավելի ցածր է, քան նորմալից ավելի բարձր եկամուտներ ունեցող խմբում: Հատկապես մեծ է այդ տարբերությունը.

- ինքնաթիռի տոմսերի գների մատչելիության գնահատականներում:

Քաղաքական ազատությունների ոլորտի մակրո գնահատականներ

Քաղաքական ազատությունների և կառավարման որակի ոլորտի մակրո մակարդակում դիտարկվել են հետևյալ ենթաոլորտները.

- քաղաքացիական ազատությունների աստիճանը,
- տեղական իշխանությունների գործունեությունը,
- մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը,
- դատական համակարգի գործունեությունը,
- կառավարության գործունեությունը,
- երկրում օրենքների կիրառելիությունը,
- ընտրական գործընթացները,
- երկրում կարիերայի հնարավորությունները:

Ոլորտից ընդհանուր միջին բավարարվածության աստիճանը 33.8% է, որը երրորդն է դիտարկվող չորս ոլորտների շարքում (Գծապատկեր 4): Գնահատականների ցրվածությունը համեմատաբար փոքր է և գտնվում է [18.5%; 43.5%] միջակայքում:

Ոլորտի 8 փոփոխականների գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք շատ ուժեղ շաղկապված են միմյանց հետ և կարող են բացատրվել միայն մեկ գործոնով, որը բացատրում է այդ 8 փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 58%-ը:

Ոլորտում առավել բարձր է բավարարվածության մակարդակը հետևյալ ենթաոլորտներում.

- քաղաքացիական ազատությունների աստիճանը (43.4%),
- տեղական իշխանությունների գործունեությունը (41.1%):

Ամենից ցածրն է.

- երկրում կարիերայի հնարավորությունները (18.5%):

2011թ.-ին՝ 2010թ.-ի համեմատ նվազել է բավարարվածության մակարդակը.

- երկրում կարիերայի հնարավորություններից (նվազել է 6.2%-ով):

Գնահատականների առավելագույն բարելավումները տեղի են ունեցել.


- դատական համակարգի գործունեության ենթաոլորտում (աճել է՝ 10.6%-ով),
- մարդու իրավունքների պաշտպանության ենթաոլորտում (աճել է՝ 9.4%-ով):

Ըստ բնակավայրի տիպի՝ քաղաքացիական ազատությունների և կառավարման ոլորտի բոլոր ենթաբաղադրիչների տեսակետից.


- առավել բարձր են բավարարվածության գնահատականները գյուղերում, որոնց հետևում են մարզային քաղաքները: Այդ գնահատականներն ամենից ցածրն են Երևանում:

Այս ոլորտում.


- բավարարվածության բոլոր գնահատականներն ավելի ցածր են օբյեկտիվորեն նորմայից ավելի ցածր եկամուտներ ունեցող բնակչության խմբում:



Գծապատկեր 4 Կյանքի որակի մակրո մակարդակում բավարարվածության գնահատականներն ըստ ոլորտների:



Գծապատկեր 5. Կյանքի որակի մակրո մակարդակում բավարարվածության գնահատականներն ըստ ոլորտների, 2010 և 2011թթ.:



Գծապատկեր 6. Մակրոմակարդակում տնտեսական զարգացման բաղադրիչներից բավարարվածության կախվածությունը ընտանիքի բարեկեցության մակարդակից:

Գծապատկեր 5-ում տրված է 2011թ. և 2010թ. մակրո մակարդակում ոլորտային միջին գնահատականների համեմատությունը, իսկ Գծապատկեր 6-ում՝ 2011թ. մակրո մակարդակում տնտեսական զարգացման բաղադրիչներից բավարարվածության կախվածությունը ընտանիքի բարեկեցության մակարդակից: Ինչպես երևում է այդ գծապատկերից, բարեկեցությունը առավել ադեկվատ նկարագրող ենթաոլորտների գնահատականները ամենից ուժեղ են կախված ընտանիքի բարեկեցության մակարդակից:

Ոլորտ	Ցուցանիշ	2011	2010	D= «2011»- «2010»
Տնտեսական ոլորտ	01 Տնտեսական զարգացման տեմպերը	31.8%	32.7%	-0.9%
	02 Բնակչության ընդհանուր կենսամակարդակը	26.3%	22.2%	4.1%
	03 Դուրսի կուրսի կայունությունը	21.6%	16.7%	4.9%
	04 Հիպոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունը	21.0%	14.5%	6.5%
	05 Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանը	15.2%	16.8%	-1.6%
	06 Գների մակարդակը	9.9%	9.5%	0.4%
	07 Աշխատատեղերի առկայությունը	6.8%	12.6%	-5.8%
Սոցիալական ոլորտ	08 Հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունը	57.4%	51.0%	6.4%
	09 Արտաքին անվտանգության աստիճանը	53.9%	54.3%	-0.4%
	10 Առողջապահական ծառայությունների որակը	53.6%	54.4%	-0.8%
	11 Ներքին ապահովության և անվտանգության աստիճանը	52.1%	47.2%	4.9%
	12 Կրթության մակարդակը	51.2%	50.2%	1.0%
	13 Մանկավարժների որակը	44.8%	73.7%	-28.9%
	14 Առողջապահական ծառայությունների մատչելիությունը	29.1%	28.9%	0.2%
	15 Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը	28.7%	36.3%	-7.6%
Ենթակառուցվածքներ	16 Հեռահաղորդակցության ոլորտի (կապ, ինտերնետ) գործունեությունը	83.2%	83.9%	-0.7%
	17 Սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը	60.6%	71.0%	-10.4%
	18 Հանրային տրանսպորտի գործունեությունը	57.2%	68.4%	-11.2%
	19 Երկաթուղային տրանսպորտի գործունեությունը	53.9%	48.0%	5.9%
	20 Հանապարհների որակը	45.1%	47.3%	-2.2%
	21 Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը	13.0%	26.2%	-13.2%
Քաղաքացիական ազատություններ և կառավարում	22 Քաղաքացիական ազատությունների աստիճանը	43.4%	45.2%	-1.8%
	23 Տեղական իշխանությունների գործունեությունը	41.1%	38.4%	2.7%
	24 Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը	38.2%	28.8%	9.4%
	25 Դատական համակարգի գործունեությունը	35.8%	25.2%	10.6%
	26 Կառավարության գործունեությունը	34.7%	30.3%	4.4%
	27 Երկրում օրենքների կիրառելիությունը	29.8%	24.3%	5.5%
	28 Ընտրական գործընթացները	28.4%	31.2%	-2.8%
	29 Երկրում կարիերայի հնարավորությունները	18.5%	24.7%	-6.2%

Աղյուսակ 3. Կյանքի որակի մակրո մակարդակում գնահատականների փոփոխություններն ըստ ենթաոլորտների 2011թ.-ին՝ 2010թ.-ի նկատմամբ:

Ցուցանիշ	«Եր.» - «Քաղ»	«Եր. - Գյ.»	«Քաղ. - Գյ.»	Եր.	Քաղ.	Գյ.
01 Տնտեսական զարգացման տեմպերը	-2.3%	-6.9%	-4.6%	28.7%	31.0%	35.6%
02 Բնակչության ընդհանուր կենսամակարդակը	-5.0%	-11.7%	-6.7%	20.8%	25.8%	32.5%
03 Դոլարի կուրսի կայունությունը	-1.3%	0.1%	1.4%	21.2%	22.5%	21.1%
04 Հիպոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունը	-8.7%	-7.1%	1.6%	15.9%	24.6%	23.0%
05 Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանը	-5.9%	-7.8%	-1.9%	10.8%	16.7%	18.6%
06 Գների մակարդակը	-4.9%	-5.8%	-0.9%	6.4%	11.3%	12.2%
07 Աշխատատեղերի առկայությունը	-0.2%	-1.8%	-1.6%	6.2%	6.4%	8.0%
08 Հանգստի/ժամանցի/զվարճանքի բազմազանությունը	14.5%	15.4%	0.9%	67.0%	52.5%	51.6%
09 Արտաքին անվտանգության աստիճանը	-7.9%	-6.3%	1.6%	49.4%	57.3%	55.7%
10 Առողջապահական ծառայությունների որակը	1.8%	-8.8%	-10.6%	51.1%	49.3%	59.9%
11 Ներքին ապահովության և անվտանգության աստիճանը	-6.9%	-10.3%	-3.4%	46.5%	53.4%	56.8%
12 Կրթության մակարդակը	-8.3%	-11.1%	-2.8%	44.9%	53.2%	56.0%
13 Մանդարեռքի որակը	-4.1%	-7.1%	-3.0%	41.1%	45.2%	48.2%
14 Առողջապահական ծառայությունների մատչելիությունը	-3.8%	-13.8%	-10.0%	23.2%	27.0%	37.0%
15 Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը	-8.9%	-12.8%	-3.9%	21.7%	30.6%	34.5%
16 Հեռահաղորդակցության ոլորտը	-5.4%	-3.3%	2.1%	80.4%	85.8%	83.7%
17 Սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակը	3.2%	4.9%	1.7%	63.2%	60.0%	58.3%
18 Հանրային տրանսպորտի գործունեությունը	-12.6%	-17.1%	-4.5%	47.5%	60.1%	64.6%
19 Երկաթուղային տրանսպորտի գործունեությունը	5.5%	4.7%	-0.8%	57.3%	51.8%	52.6%
20 Ճանապարհների որակը	1.4%	-2.6%	-4.0%	44.6%	43.2%	47.2%
21 Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը	0.3%	-4.6%	-4.9%	11.5%	11.2%	16.1%
22 Քաղաքացիական ազատությունների աստիճանը	-12.3%	-16.5%	-4.2%	34.1%	46.4%	50.6%
23 Տեղական իշխանությունների գործունեությունը	-10.2%	-23.8%	-13.6%	29.8%	40.0%	53.6%
24 Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը	-10.4%	-16.6%	-6.2%	29.4%	39.8%	46.0%
25 Դատական համակարգի գործունեությունը	-12.5%	-16.1%	-3.6%	26.6%	39.1%	42.7%
26 Կառավարության գործունեությունը	-7.6%	-12.2%	-4.6%	28.3%	35.9%	40.5%
27 Երկրում օրենքների կիրառելիությունը	-8.6%	-15.2%	-6.6%	22.1%	30.7%	37.3%
28 Ընտրական գործընթացները	-9.1%	-13.8%	-4.7%	20.9%	30.0%	34.7%
29 Երկրում կարիերայի հնարավորությունները	-4.3%	-9.8%	-5.5%	13.9%	18.2%	23.7%

Աղյուսակ 4. Գյանքի որակի մակրո մակարդակում բավարարվածության գնահատականներն ըստ բնակավայրի տիպի (Օրինակ՝ «Եր» - «Քաղ» նշանակում է ցուցանիշի Երևանի արժեքից հանած ցուցանիշի արժեքը՝ մարզային քաղաքների համար):

Ոլորտ	Ցուցանիշ	1 Հնդա- մենը	2 Օբյեկ- տիվորեն նորմալից ցածր	3 Օբյեկտի- վորեն նորմալից բարձր	D = «3» - «2»
Տնտե- սական ոլորտ	01 Տնտեսական զարգացման տեմպերը	31.8%	29.1%	43.7%	14.6%
	02 Բնակչության ընդհանուր կենսամակարդակը	26.3%	23.7%	40.3%	16.6%
	03 Դոլարի կուրսի կայունությունը	21.6%	19.7%	31.1%	11.4%
	04 Հիպոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունը	21.0%	18.6%	30.5%	11.9%
	05 Աշխատանքային իրավունքների պաշտպանվածությունը	15.2%	13.3%	23.9%	10.6%
	06 Գների մակարդակը	9.9%	7.9%	18.1%	10.2%
	07 Աշխատատեղերի առկայությունը	6.8%	5.4%	13.5%	8.1%
Մոցիա- լական ոլորտ	08 Հանգստի/Ժամանցի/զվարճանքի բազմազանությունը	57.4%	55.0%	66.1%	11.1%
	09 Արտաքին անվտանգության աստիճանը	53.9%	51.7%	61.6%	9.9%
	10 Առողջապահական ծառայությունների որակը	53.6%	51.8%	63.7%	11.9%
	11 Ներքին ապահովության և անվտանգության աստիճանը	52.1%	50.4%	59.3%	8.9%
	12 Կրթության մակարդակը	51.2%	49.5%	58.5%	9.0%
	13 Սննդամթերքի որակը	44.8%	42.4%	55.6%	13.2%
	14 Առողջապահական ծառայությունների մատչելիությունը	29.1%	26.7%	40.7%	14.0%
Ենթա- կառուց- վածքներ	15 Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը	28.7%	25.4%	43.6%	18.2%
	16 Հեռահաղորդակցության ոլորտի գործունեությունը	83.2%	82.3%	85.1%	2.8%
	17 Սպասարկման ոլորտում ծառայությունների որակը	60.6%	59.4%	65.2%	5.8%
	18 Հանրային տրանսպորտի գործունեությունը	57.2%	56.1%	60.7%	4.6%
	19 Երկաթուղային տրանսպորտի գործունեությունը	53.9%	52.9%	57.1%	4.2%
	20 Ճանապարհների որակը	45.1%	43.9%	52.0%	8.1%
Քաղա- քացիա- կան ազատու- թյուններ և կառա- վարում	21 Ինքնաթիռի տոմսերի գների մատչելիությունը	13.0%	10.3%	24.3%	14.0%
	22 Քաղաքացիական ազատությունների աստիճանը	43.4%	41.6%	50.8%	9.2%
	23 Տեղական իշխանությունների գործունեությունը	41.1%	39.2%	51.1%	11.9%
	24 Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը	38.2%	37.4%	43.3%	5.9%
	25 Դատական համակարգի գործունեությունը	35.8%	33.6%	47.3%	13.7%
	26 Կառավարության գործունեությունը	34.7%	33.6%	42.3%	8.7%
	27 Երկրում օրենքների կիրառելիությունը	29.8%	28.1%	39.1%	11.0%
	28 Ընտրական գործընթացները	28.4%	26.5%	37.4%	10.9%
	29 Երկրում կարիերայի հնարավորությունները	18.5%	16.8%	27.3%	10.5%

Աղյուսակ 5. Մակրո մակարդակի տարբեր ոլորտների բաղադրիչների բավարարվածության կախվածությունը ընտանիքի օբյեկտիվ ֆինանսական վիճակից:

ՄԱՍ 2. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՄԻՋԻՆ և ՄԻԿՐՈ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հաշվետվությունում միջին և միկրո մակարդակները դիտարկված են համատեղ, քանի որ, ըստ սահմանման, միջին մակարդակին է վերաբերում համայնքներում ենթակառուցվածքների առկայությունը:

Ընդհանուր գերակայություններ

Հետազոտությամբ գնահատվել են Հայաստանի չափահաս բնակչության համար կյանքի որակի տարբեր բաղադրիչների համեմատական կարևորությունները: Գնահատված բաղադրիչների ցանկը հետևյալն է.

1. սնունդը,
2. առողջությունը,
3. հարմարավետ բնակարանը,
4. փողը,
5. աշխատանքը/ բիզնեսը,
6. ընկերները,
7. հետաքրքիր կյանքը,
8. խղճի հանգստությունը,
9. հարգանքը,
10. անձի/ընտանիքի անվտանգությունը,
11. կրթությունը,
12. շրջապատի մաքրությունը,
13. մարդկանց միջև սերը և հարգանքը:

Գնահատականները ստացվել են երկու եղանակով.

ա) գնահատվել է բաղադրիչի կարևորությունը 1-10 սանդղակով,

բ) գնահատվել են առավել կարևոր բաղադրիչների հաջորդական ընտրությամբ: Նախ՝ հարցվողն ընտրել է իր համար առավել կարևոր երկուսը (ընտրության հաջորդականությունն էական չէր), իսկ հետո՝ ընտրված երկուսից՝ առավել կարևորը:

Գնահատականները ներկայացված են Աղյուսակ 6-ում: Աղյուսակի ձախակողմյան ենթաաղյուսակում ներկայացված է 1-10 սանդղակով հավաքագրված գնահատականների բաշխումը: Ստացված փոքրաքանակ պատասխանների պատճառով 1-6 գնահատականները միավորված են: «Միջ.» [«Միջին»] սյունում ներկայացված են 1-10 սանդղակով ստացված գնահատականների միջին արժեքները: «I» և «II» սյուներում տրված են նախնական երկու առավել կարևոր ընտրված

ուղորտների բաշխումները, իսկ «ԱԿ» [«Առավել կարևոր»] սկյունում՝ ամենակարևոր բաղադրիչի բաշխումը:

Ներկայացված տվյալներից բխում է, որ.

- Արդի հայաստանյան հասարակությունում առողջությունը կյանքի որակի ամենակարևոր բաղադրիչն է,

ինչպես հաջորդական գնահատականներով գնահատման դեպքում (այն որպես ամենակարևորն են գնահատել հարցվածների 69.6%-ը), այնպես էլ 1-10 սանդղակով գնահատելիս (միջին արժեքը՝ 9.82, իսկ ամենաբարձր 10 գնահատականը տվել են հարցվածների 92.7%-ը):

- Կյանքի որակի համար երկրորդ կարևոր բաղադրիչը՝ ստացված հաջորդական ընտրության մեթոդով, անձի և նրա ընտանիքի անվտանգությունն է (11.9%):

1-10 սանդղակով գնահատման դեպքում երկրորդ և երրորդ գերակայություններն են՝ հարգանքը (միջին գնահատական՝ 9.76) և խղճի հանգստությունը (միջին գնահատական՝ 9.74):

Բաղադրիչ	1-6	7	8	9	10	Ընդ.	Միջ.	I	II	ԱԿ
Առողջությունը	1.9%	0.9%	1.8%	3.0%	92.7%	100.0%	9.82	66.3%	18.2%	69.6%
Խղճի հանգստությունը	2.8%	1.0%	2.7%	4.0%	89.7%	100.0%	9.74	2.7%	6.7%	2.4%
Հարգանքը	2.1%	1.0%	3.2%	4.8%	89.1%	100.0%	9.76	0.8%	2.9%	0.9%
Ձեր/ընտանիքի անվտանգությունը	3.2%	1.3%	4.1%	4.1%	87.6%	100.0%	9.68	7.1%	16.2%	11.9%
Մարդկանց միջև սերը և հարգանքը	2.0%	1.8%	3.8%	5.7%	86.8%	100.0%	9.70	3.2%	9.7%	3.4%
Շրջապատի մաքրությունը	2.7%	2.0%	4.2%	5.5%	85.8%	100.0%	9.66	0.2%	0.3%	0.1%
Կրթությունը	4.0%	2.1%	5.0%	6.0%	83.1%	100.0%	9.57	0.4%	2.8%	0.1%
Աշխատանքը/ բիզնեսը	4.8%	2.8%	6.6%	7.8%	78.1%	100.0%	9.44	2.9%	12.8%	2.6%
Փողը	5.0%	4.1%	7.8%	7.9%	75.5%	100.0%	9.39	3.5%	18.2%	3.3%
Մնունդը	15.1%	4.9%	9.4%	5.3%	65.5%	100.0%	8.84	9.7%	6.5%	3.5%
Հարմարավետ բնակարանը	8.4%	5.8%	12.2%	8.6%	65.2%	100.0%	9.09	1.9%	2.6%	1.0%
Ընկերները	8.9%	5.7%	13.1%	8.7%	63.8%	100.0%	9.03	0.9%	1.7%	0.7%
Հետաքրքիր կյանքը	14.9%	6.6%	12.7%	7.8%	58.1%	100.0%	8.66	0.4%	1.4%	0.5%

Միջ. – 1-10 գնահատականների միջին արժեքը

I և II – առավել կարևոր երկու բաղադրիչների բաշխումները: Նշումների հերթականությունն էական չէ:

ԱԿ – առավել կարևոր ուղորտը՝ ընտրված նախնական երկու առավել կարևոր ուղորտներից:

Աղյուսակ 6. Հայաստանի հասարակությունում կյանքի ուղորտների բաղադրիչների գերակայությունները (կարևորությունը):

Գործոնային վերլուծությունը ցույց տվեց, որ կյանքի որակի բաղադրիչների գերակայությունները կարելի է բավականաչափ ադեկվատ կերպով բացատրել երեք գործոնների միջոցով, որոնք բացատրում են 13 փոփոխականների ընդհանուր դիսպերսիայի 52%-ը:

Գործոն 1. «Սոցիալական ներդաշնակության գործոն», որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրիչները.

- մարդկանց միջև սերը և հարգանքը,
- շրջապատի մաքրությունը,

- խղճի հանգստությունը,
- հարգանքը [սեփական անձի հանդեպ],
- անձի և իր ընտանիքի անվտանգությունը:

Գործոն 2. «Առաջնային սոցիալական պահանջմունքների գործոն», որն իր մեջ է ներառում.

- փողը,
- սնունդը,
- հարմարավետ բնակարանը,
- առողջությունը,
- աշխատանքը/բիզնեսը:

Գործոն 3. «Սոցիալական կոնտակտների գործոն», որն իր մեջ է ներառում.

- ընկերները,
- հետաքրքիր կյանքը,
- կրթությունը,
- աշխատանքը/ բիզնեսը:¹²

2011թ. և 2010թ.-ների համեմատությունն իրականացված է մասնակիորեն՝ միայն այն բաղադրիչների տեսակետից, որոնք առանց ձևակերպումների փոփոխության գնահատվել են երկու հետազոտությունների ընթացքում (Աղյուսակ 7):

Մեկ տարվա ընթացքում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- Սեփական անձի և ընտանիքի անվտանգությունն առաջին գերակայությունից վերաձվել է երկրորդի:
- Առողջությունը երկրորդից վերաձվել է առաջին գերակայության:
- Մնունդը 5-րդ գերակայությունից վերաձվել է 3-րդի:
- Փողը 7-րդ գերակայությունից վերաձվել է 4-րդի:

Բաղադրիչ	Բաղադրիչը կարևորագույնը համարող անձինք		Բաղադրիչի կարևորության աստիճանը	
	2011	2010	2011	2010
Առողջությունը	69.6%	30.1%	1	2
Ձեր/ընտանիքի անվտանգությունը	11.9%	47.3%	2	1
Մնունդը	3.5%	9.6%	3	5
Մարդկանց միջև սերը և հարգանքը	3.4%	-	-	-
Փողը	3.3%	6.8%	4	7
Աշխատանքը/ բիզնեսը	2.6%	17.4%	5	4
Խղճի հանգստությունը	2.4%	-	-	-
Հարմարավետ բնակարանը	1.0%	18.1%	6	3
Հարգանքը	0.9%	-	-	-
Ընկերները	0.7%	2.5%	7	8
Հետաքրքիր կյանքը	0.5%	-	-	-
Կրթությունը	0.1%	6.9%	8	6
Շրջապատի մաքրությունը	0.1%	-	-	-

Աղյուսակ 7. Կյանքի ոլորտների գերակայությունների համեմատությունը՝ 2011թ. և 2010թ.:

¹² Աշխատանքը/բիզնեսը երկրորդ և երրորդ գործոնները կամրջող փոփոխական է:

Տնտեսական ոլորտ

Զբաղվածություն և աշխատանքային պայմաններ

Հետազոտության դաշտային փուլի ընթացքում (2011թ. դեկտեմբեր) Հայաստանի չափահաս բնակչության 40.5%-ը եղել է զբաղված, 15.2%-ը՝ գործազուրկ¹³, իսկ 44.4%-ը՝ տնտեսապես ոչ ակտիվ (Աղյուսակ 8):

Բնութագիր	Կատեգորիա	Զբաղված	Գործա- զուրկ	Տնտ. ոչ ակտիվ	Ընդամենը
Ընդամենը	Ընդամենը	40.5%	15.2%	44.4%	100.0%
Բնակավայրի տիպը	Երևան	39.1%	14.7%	46.3%	100.0%
	Քաղաք	38.9%	20.3%	40.9%	100.0%
	Գյուղ	43.1%	11.2%	45.7%	100.0%
Սեռը	Իգական	29.2%	12.3%	58.5%	100.0%
	Արական	52.8%	18.4%	28.8%	100.0%
Տարիքը	18-30	37.5%	16.8%	45.7%	100.0%
	31-60	47.4%	15.6%	37.0%	100.0%
	60 <	24.4%	6.7%	68.9%	100.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	33.6%	15.3%	51.1%	100.0%
	Միջին մասն. կամ թերի բարձրագույն	40.2%	16.5%	43.4%	100.0%
	Բարձրագույն կամ ավելի	50.5%	13.3%	36.1%	100.0%
Բարեկեցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	26.1%	23.5%	50.4%	100.0%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	32.3%	19.0%	48.6%	100.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	39.8%	15.4%	44.8%	100.0%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	52.8%	9.8%	37.4%	100.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	52.8%	9.4%	37.7%	100.0%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	47.2%	0.0%	52.8%	100.0%
	Բավարարվածությամբ կյանքից	39.8%	19.5%	40.7%	100.0%
Բավարարվածու- թյունը կյանքից	Բավարարված է	40.9%	12.3%	46.8%	100.0%

Աղյուսակ 8. Զբաղվածները, գործազուրկները և տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը (մորեզային նշված են այն արժեքները, որոնք նշանակալիորեն տարբերվում են համապատասխան «ընդամենը» արժեքից):

Գործազրկությունը համեմատաբար բարձր էր մարզային քաղաքներում (20.3%), կանանց (18.4%) և 18-30 տարեկանների (16.8%) շրջանում: Գործազրկությունը հստակորեն ներկայանում է որպես բարեկեցության մակարդակը սահմանող գործոն (Աղյուսակ 8, նախավերջին հատված): Գործազրկությունն ամենաբարձրն է այն անձանց շրջանում, ովքեր համարում են, որ «բավարար գումար չունեն սննդի համար»՝ 23.5%: Գործազրկությունը նվազեցնում է կյանքից բավարարվածության մակարդակը:

¹³ Ցուցանիշը նույնական չէ «գործազրկության մակարդակ» հասկացությանը, որն իրենից ներկայացնում է գործազուրկների քանակը բաժանած գործազուրկների և զբաղվածների քանակին՝ տոկոսով: Հետազոտության դաշտային փուլում գործազրկության մակարդակը Հայաստանում 27.3% էր (Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանման շրջանակում): Գործազրկության նման բարձր մակարդակը բացատրվում է ցուցանիշի սեզոնայնությամբ: Ձմռանը, երբ գյուղատնտեսական աշխատանքներն ավարտված են, գյուղաբնակների մի մասը սկսում է աշխատանք փնտրել և վերածվում է գործազուրկի:

Ուսումնասիրված են աշխատանքը բնութագրող հետևյալ բնութագրիչները.

- աշխատավարձը/եկամուտները,
- անձի կատարած աշխատանքի տեսակը,
- անձի/ընկերության արտադրանքի/ծառայության որակը,
- աշխատանքի/գործունեության կայունությունը,
- աշխատակիցների՝ գործընկերների հետ հարաբերությունները,
- աշխատանքի ժամային գրաֆիկը,
- աշխատավայրի մաքրությունը, անվտանգությունը, հարմարավետությունը,
- շաբաթը գոնե մեկ հանգստյան օրվա առկայությունը,
- տարեկան վճարովի արձակուրդի առկայությունը,
- ազատ ժամանակի առկայությունը,
- աշխատավայրում լրացուցիչ արտոնությունները/սոցիալական ապահովագրական փաթեթը,
- առաջխաղացման հնարավորությունները,
- հավելավճարների առկայությունը,
- մասնագիտական աճի և ուսուցման հնարավորությունը,
- ղեկավարի վերաբերմունքը:

Աշխատանքի և աշխատանքային պայմանների բնութագրերի կարևորությունը և դրանցից բավարարվածությունը [ուսումնասիրված է միայն աշխատանք ունեցողների շրջանում] ներկայացված է Աղյուսակ 9-ում:

Աշխատանքի բնութագիր	Կարևոր է	Բավարարված է 2011թ.	Բավարարված է 2010թ.	«2011» - «2010»
Աշխատակիցների՝ գործընկերների հետ հարաբերությունները	99.1%	96.2%	97.6%	-1.4%
Ղեկավարի վերաբերմունքը	97.7%	90.8%	86.1%	4.7%
Անձի/ընկերության արտադրանքի/ծառայության որակը	98.7%	81.9%	91.8%	-9.9%
Աշխատավայրի մաքրությունը, անվտանգ., հարմարավետությունը	99.2%	81.4%	70.9%	10.5%
Աշխատանքի ժամային գրաֆիկը	94.2%	79.2%	87.4%	-8.2%
Շաբաթը գոնե մեկ հանգստյան օրվա առկայությունը	98.7%	78.8%	-	-
Աշխատանքի/գործունեության կայունությունը	99.9%	70.3%	79.3%	-9.0%
Ազատ ժամանակի առկայությունը	99.7%	70.3%	63.7%	6.6%
Իր կատարած աշխատանքի տեսակը	94.4%	69.7%	90.0%	-20.3%
Տարեկան վճարովի արձակուրդի առկայությունը	96.7%	64.8%	-	-
Մասնագիտական աճի և ուսուցման հնարավորությունը	94.4%	55.3%	62.0%	-6.7%
Առաջխաղացման հնարավորությունները	92.6%	49.1%	51.5%	-2.4%
Աշխատավայրում լրացուցիչ արտոնությունները/սոց. ապահ. փաթեթը	91.2%	42.8%	54.8%	-12.0%
Հավելավճարների առկայությունը	96.4%	34.7%	34.2%	0.5%
Աշխատավարձը/եկամուտները	99.8%	30.9%	39.9%	-9.0%

Աղյուսակ 9. Աշխատանքային պայմանների կարևորությունը և աշխատանքային պայմաններից բավարարվածությունը:¹⁴

¹⁴ Այստեղ և այսուհետ՝ առավել կարմիր գույնով նշված են առավել անբարենպաստ իրավիճակները:

Ներկայացված տվյալներից բխում է, որ աշխատանքի բոլոր դիտարկված բնութագրերն ունեն շատ բարձր գերակայություններ. դրանք կարևոր են հարցված աշխատողների 90%-ից ավելի հարցվածների համար, իսկ բնութագրերի մեծ մասը՝ 96%-ից ավելի հարցվածների համար:

Աշխատավայրում աշխատողների բավարարվածության մակարդակն ամենաբարձրն է.

- աշխատակիցների՝ գործընկերների հետ հարաբերություններից (96.2%),
- ղեկավարի վերաբերմունքից (90.8%):

Առավել ցածր է բավարարվածության մակարդակը.

- աշխատավարձից/եկամուտներից (30.9%),
- հավելավճարների առկայությունից (34.7%),
- աշխատավայրում լրացուցիչ արտոնությունների/սոցիալական ապահովության փաթեթից (42.8%):

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել է բավարարվածության մակարդակը.

- աշխատավայրում լրացուցիչ արտոնությունների/սոցիալական ապահովության փաթեթից (12.0%-ով),
- աշխատավարձից (9.0%-ով),
- սակայն առավել նշանակալի նվազել է աշխատողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքի տեսակից (20.3%-ով):

Սեփական աշխատանքից բավարարվածության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է հարցվածների առավել բարեկեցիկ խմբում (Աղյուսակ 10):

Աշխատանքային պայմաններից միջին բավարարվածությունը	Ընդ.	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Աշխատանքային պայմաններ	66.4%	69.0%	67.4%	63.7%	63.4%	67.3%	70.8%

Աղյուսակ 10. Բավարարվածությունը միևրո մակարդակում՝ սոցիալական ոլորտ, աշխատանքային պայմաններ: (Ցուցանիշը հաշվարկված է միայն զբաղվածների համար):

Հետազոտությամբ ուսումնասիրվել է այն հարցը, թե որքանով է հեշտ կամ դժվար աշխատանք գտնելը հարցվողի բնակավայրում (Աղյուսակ 11): Աղյուսակում հարցվողների բոլոր պատասխանները խմբավորված են երկու խմբում: Առաջին խմբում են նրանք, ովքեր պատասխանել են, որ [սեփական համայնքում աշխատանք գտնելը] «հեշտ է» կամ «հնարավոր է և ոչ այնքան դժվար», իսկ երկրորդ խմբում են նրանք, ովքեր պատասխանել են՝ «հնարավոր է, սակայն շատ դժվար» և «անհնար է»: Աղյուսակի երրորդ սյունում առանձին ներկայացված է «անհնար է» պատասխանների տոկոսը:

- Ըստ բնակավայրի տիպի՝ աշխատանք գտնելը սեփական համայնքում ամենից դժվարն է գյուղերում: Այստեղ «անհնար է» պատասխանները կազմում են 42.5%՝ նշանակալի գերազանցելով նույն ցուցանիշը Երևանում (24.3%) և մարզային քաղաքներում (29.6%):

- Ըստ սեռի՝ սեփական համայնքում աշխատանք գտնելն անհնար է առավելագույն կանանց (37.3%), իսկ ըստ տարիքի՝ 60-ից բարձր տարիքով անձանց (69.1%) համար:
- Այդ ցուցանիշը համեմատաբար ավելի ցածր է բարձրագույն կրթությամբ անձանց (21.0%) և համեմատաբար ավելի բարեկեցիկ շերտերի համար:

Սոցիալ- ժողովրդա- գրական բնութագիր	Կատեգորիա	«Հեշտ է» կամ «Հեշտ է և ոչ այնքան դժվար»	«Հնարավոր է, սակայն շատ դժվար» և «Անհնար է»	«Անհնար է»
Բնակավայրի տիպը	Երևան	19.0%	81.1%	24.3%
	Քաղաք	14.8%	85.2%	29.6%
	Գյուղ	13.2%	86.7%	42.5%
Սեռը	Իգական	13.6%	86.4%	37.3%
	Արական	18.2%	81.8%	26.4%
Տարիքը	18-30	23.3%	76.8%	17.4%
	31-60	11.4%	88.6%	37.6%
	60 <	3.1%	96.9%	69.1%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	14.9%	85.1%	36.3%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	13.5%	86.6%	36.4%
	Բարձրագույն կամ ավելի	19.8%	80.2%	21.0%
Բարեկե- ցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	8.2%	91.8%	48.3%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	7.9%	92.1%	42.9%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	13.0%	87.0%	32.7%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	25.6%	74.5%	18.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	31.5%	68.5%	15.2%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	45.7%	54.3%	25.7%
Ընդամենը		15.8%	84.2%	32.1%

Աղյուսակ 11. Աշխատանք գտնելու դժվարության գնահատականները:

Սոցիալ- ժողովրդա- գրական բնութագիր	Կատեգորիա	Ներկայում գրադվում է	Զբաղվել եմ, սակայն ներկայում չեմ գրադվում	Չեմ գրադվել	Ընդ.
Բնակավայրի տիպը	Երևան	5.0%	14.0%	81.0%	100.0%
	Քաղաք	4.7%	12.9%	82.4%	100.0%
	Գյուղ	2.9%	10.6%	86.4%	100.0%
Սեռը	Իգական	1.5%	8.0%	90.5%	100.0%
	Արական	7.3%	17.4%	75.3%	100.0%
Տարիքը	18-30	4.6%	10.7%	84.7%	100.0%
	31-60	4.5%	15.8%	79.7%	100.0%
	60 <	1.8%	6.3%	91.9%	100.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	3.3%	11.0%	85.7%	100.0%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	3.7%	10.4%	85.9%	100.0%
	Բարձրագույն կամ ավելի	6.1%	17.3%	76.6%	100.0%
Բարեկե- ցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	2.7%	9.4%	87.9%	100.0%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	2.7%	12.3%	85.0%	100.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	3.4%	11.1%	85.5%	100.0%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	6.0%	15.4%	78.6%	100.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	10.5%	15.2%	74.3%	100.0%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	8.6%	22.9%	68.6%	100.0%
Ընդամենը		4.2%	12.5%	83.2%	100.0%

Աղյուսակ 12. Բիզնեսով զբաղվելու փորձը:

Հետազոտության փուլում սեփական բիզնեսով զբաղվում էր հարցվածների 4.2%-ը (Աղյուսակ 12), իսկ բիզնեսով զբաղվելու փորձ ունեւ հարցվածների 12.5%-ը: Սեփական բիզնեսով առավելապես զբաղվում են տղամարդիկ (հարցվածների 7.3%-ը) և բարձրագույն կրթությամբ անձինք (6.1%):

Բնակարանային պայմաններ

Աղյուսակ 13-ում ներկայացված է 2011թ. և 2010թ. հետազոտություններում Հայաստանի բնակիչների բնակարանների բաշխումը: Տվյալները ցույց են տալիս, որ մեկ տարվա ընթացքում Հայաստանում բնակարանների տեսակների բաշխումը քիչ է փոխվել: Մասնավորապես.

- Ավելացել է առանձնատների քանակը՝ 2010թ.-ին 45.4%-ից մինչև 2011թ.-ին 52.5% (Աղյուսակ 13):
- Մի փոքր նվազել է բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունների քանակը:
- Նվազել է տնակներում/կացարաններում բնակվողների քանակը՝ 1.8%-ից՝ 0.4%:
- Սեփական բնակարաններում են բնակվում հարցվածների 85.6%-ը (Աղյուսակ 14): Նրանց քանակը համեմատաբար ավելին է գյուղերում (89.8%) և համեմատաբար ավելի՝ բարեկեցիկ տնային տնտեսությունների շրջանում:
- Բնակարանի տեսակը, որում ապրում է հարցվողը էականորեն պայմանավորված չէ նրա սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի հետ (Աղյուսակ 15):
- Հարցվածների համեմատաբար ավելի մեծ մասի՝ 36.3%-ի բնակարանները կազմված են բնակելի 3 սենյակից (ճաշասենյակ, հյուրասենյակ, ննջարան): Մեկ սենյակում են ապրում հարցվածների 5.6%-ը:
- Երևանում և քաղաքներում ամենամեծ տարածումն ունեն 3 սենյականոց, իսկ գյուղերում՝ 4 սենյականոց բնակարանները (Աղյուսակ 16):
- Հարցվածների 57.9%-ի բնակարաններն ունեն կապիտալ վերանորոգման, 29.2%-ի բնակարաններն՝ կոսմետիկ վերանորոգման կարիք, իսկ հարցվածների 1.4%-ի տները բնակչության համար պիտանի չեն՝ անկախ վերանորոգումից (Աղյուսակ 17):
- Առաջիկա մեկ տարվա ընթացքում պատրաստվում է վերանորոգել իր բնակարանը հարցվածների 27.7%-ը (Աղյուսակ 18):
- Առաջիկա մեկ տարվա ընթացքում պատրաստվում է վերանորոգել իր բնակարանը առավել բարեկեցիկ բնակչության խմբերի 46-50%-ը:

Կյանքի որակի տեսակետից գնահատվել են բնակարանների հետևյալ բնութագրերը.

- բնակարանի/տան մեծությունը,
- բնակարանի ֆիզիկական ներքին հարդարման վիճակը,
- բնակարանի/տան սանհանգույցի վիճակը,
- բնակարանի/տան խոհանոցային հարմարությունները,
- բնակարանի/տան ջեռուցման պայմանները:

Բնակարանի տեսակը	2011թ.	2010թ.
Բնակարան բազմահարկ շենքում (6 և ավելի հարկանի)	13.3%	15.8%
Բնակարան 5 հարկանի և ցածրահարկ շենքում	27.2%	30.9%
Մեկ և ավելի հարկանի սեփական տուն, որտեղ մեկ ընտանիք է բնակվում	52.5%	45.4%
Մեկ և ավելի հարկանի սեփական տուն, որտեղ երկու կամ ավելի ընտանիք է բնակվում	6.6%	6.0%
Հանրակացարան	0.1%	0.1%
Տնակ/կացարան	0.4%	1.8%
Ընդամենը	100.0%	100.0%

Աղյուսակ 13. Բնակարանների տեսակը 2011թ. և 2010թ.

Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր	Բնութագրի կատեգորիա	Ապրում են սեփական բնակարանում
Բնակավայրի տիպը	Երևան	83.3%
	Քաղաք	83.4%
	Գյուղ	89.8%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	85.5%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	85.7%
	Բարձրագույն կամ ավելի	85.5%
Բարեկեցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	80.1%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	85.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	84.4%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	88.7%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	93.4%
	Կարող ենք գնել զրեթե ինչ ցանկանանք	91.7%
Ընդամենը		85.6%

Աղյուսակ 14. Սեփական բնակարաններում ապրողները:

Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր	Բնութագրի կատեգորիա	1	2	3	4	5	6	Ընդամենը
Բնակավայրի տիպը	Երևան	26.7%	25.0%	39.6%	8.5%	0.1%	-	100.0%
	Քաղաք	12.5%	57.1%	26.8%	3.0%	0.2%	0.5%	100.0%
	Գյուղ	-	3.1%	88.3%	7.9%	-	0.7%	100.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	9.7%	20.1%	62.0%	7.3%	0.1%	0.8%	100.0%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	14.0%	27.3%	51.2%	7.2%	0.2%	0.2%	100.0%
	Բարձրագույն կամ ավելի	17.6%	37.3%	40.0%	4.9%	-	0.2%	100.0%
Բարեկեցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	11.2%	24.0%	54.5%	8.6%	0.4%	1.3%	100.0%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	9.2%	22.6%	60.3%	7.6%	-	0.3%	100.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	15.2%	27.8%	49.9%	6.7%	-	0.4%	100.0%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	14.4%	30.0%	50.2%	5.0%	0.2%	-	100.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	16.0%	29.2%	49.1%	4.7%	-	0.9%	100.0%
	Կարող ենք գնել զրեթե ինչ ցանկանանք	2.8%	38.9%	52.8%	5.6%	-	-	100.0%
Ընդամենը		13.3%	27.2%	52.4%	6.6%	0.1%	0.4%	100.0%

1. Բնակարան բազմահարկ շենքում (6 և ավելի հարկանի)
2. Բնակարան 5 հարկանի և ցածրահարկ շենքում
3. Մեկ և ավելի հարկանի սեփական տուն, որտեղ մեկ ընտանիք է բնակվում
4. Մեկ և ավելի հարկանի սեփական տուն, որտեղ երկու կամ ավելի ընտանիք է բնակվում
5. Հանրակացարան
6. Տնակ/կացարան

Աղյուսակ 15. Բնակարանների տեսակներն՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական բնութագրերի:

Սոցիալ- ժողովրդա- գրական բնութագիր	Բնութագրի կատեգորիա	Բնակարանում սենյակների քանակը						Ընդամենը
		1	2	3	4	5	6 և ավելի	
Բնակավայ- րի տիպը	Երևան	6.6%	25.2%	41.9%	17.3%	6.4%	2.7%	100.0%
	Քաղաք	8.7%	28.5%	39.3%	17.5%	4.7%	1.3%	100.0%
	Գյուղ	1.8%	10.8%	28.4%	33.6%	17.3%	8.2%	100.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	5.2%	21.3%	37.0%	22.5%	9.7%	4.2%	100.0%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	5.5%	22.0%	34.4%	24.9%	9.4%	3.9%	100.0%
	Բարձրագույն կամ ավելի	6.2%	20.3%	38.1%	21.2%	9.7%	4.3%	100.0%
Բարեկե- ցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	9.9%	21.1%	36.2%	24.1%	6.0%	2.6%	100.0%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	7.4%	19.9%	38.1%	22.1%	9.0%	3.5%	100.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	4.3%	22.7%	37.3%	23.0%	8.9%	3.9%	100.0%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	4.4%	21.1%	36.6%	20.7%	12.2%	5.0%	100.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	3.8%	18.9%	25.5%	28.3%	15.1%	8.5%	100.0%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	8.3%	13.9%	25.0%	38.9%	8.3%	5.6%	100.0%
Ընդամենը		5.6%	21.3%	36.3%	23.0%	9.6%	4.2%	100.0%

Աղյուսակ 16. Բնակարաններում սենյակների քանակը:

Սոցիալ- ժողովրդա- գրական բնութագիր	Բնութագրի կատեգորիա	1	2	3	4	Ընդամենը
Բնակավայ- րի տիպը	Երևան	0.8%	55.4%	28.8%	15.0%	100.0%
	Քաղաք	1.5%	50.8%	32.9%	14.9%	100.0%
	Գյուղ	1.9%	66.5%	26.4%	5.2%	100.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	1.9%	64.5%	25.2%	8.4%	100.0%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	1.4%	60.3%	28.4%	9.9%	100.0%
	Բարձրագույն կամ ավելի	0.7%	45.3%	35.9%	18.1%	100.0%
Բարեկե- ցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	5.6%	74.2%	17.2%	3.0%	100.0%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	1.1%	68.9%	24.0%	6.0%	100.0%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	0.7%	58.7%	31.0%	9.5%	100.0%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	0.9%	47.2%	35.8%	16.2%	100.0%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	0.9%	34.0%	34.0%	31.1%	100.0%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	-	22.2%	22.2%	55.6%	100.0%
Ընդամենը		1.4%	57.9%	29.2%	11.5%	100.0%
1. Բնակարանը/տունը պիտանի չէ բնակության համար՝ անկախ վերանորոգումից 2. Բնակարանը/տունն ունի կապիտալ վերանորոգման կարիք 3. Բնակարանը/տունն ունի ընթացիկ/կոսմետիկ վերանորոգման կարիք 4. Բնակարանը/տունը վերանորոգման կարիք չունի						

Աղյուսակ 17. Բնակարանների վիճակը:

Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր	Բնութագրի կատեգորիա	Պատրաստվում են վերանորոգել բնակարանը առաջիկա տարում
Բնակավայրի տիպը	Երևան	24.2%
	Քաղաք	26.1%
	Գյուղ	33.0%
Կրթությունը	Միջնակարգ կամ ցածր	28.2%
	Միջին մասն. կամ թերի բարձ.	26.3%
	Բարձրագույն կամ ավելի	29.0%
Բարեկեցությունը	Բավարար գումար չունենք սննդի համար	18.1%
	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	22.4%
	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	24.7%
	Կարող ենք գնել միջին որակի իրեր	36.7%
	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	46.2%
	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	50.0%
Ընդամենը		27.7%

Աղյուսակ 18. Բնակարանը վերանորոգելու դիրքորոշում ունեցողները:

Հարցվածները բոլոր դիտարկված բնութագրերը գնահատել են շատ կարևոր (Աղյուսակ 19): Եթե հաշվի չառնվի բնակարանի չափը, որը կարևոր է գնահատել հարցվածների 76.5%-ը, ապա մնացած բնութագրերը կարևոր են համարել հարցվածների 96%-ից ավելին:

Իր բնակարանի բնութագրերից բնակչության բավարարվածությունն ունի հետևյալ պատկերը.

- Միջին բավարարվածությունը բնակարանային պայմանների դիտարկված 5 բնութագրերից կազմում է 43.8% (Աղյուսակ 20):
- Բնակարանային պայմաններից բավարարվածության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է Երևանում՝ 50.2% և համեմատաբար ավելի ցածր է գյուղերում՝ 37.9%:
- Բնակարանային պայմաններից բավարարվածությունը ավելի բարձր է բնակչության առավել բարեկեցիկ խմբում՝ 54.2%, առավել անբարեկեցիկ խմբում այն կազմում է 38.9%:
- Հարցվածները առավելապես բավարարված են իրենց բնակարանի չափից (64.7%), իսկ մնացած դիտարկված բնութագրերից բավարարվածությունը 40-47% է (Աղյուսակ 19):

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ.

- բնակչության բավարարվածության մակարդակն իր բնակարանի բնութագրերից մի փոքր նվազել է (Աղյուսակ 19),
- առավելապես նվազել է բավարարվածության մակարդակը բնակարանի սանհանգույցի վիճակից (նվազել է 7.3%-ով):

Բնակարանի բնութագիր	Կարևոր է	Բավարարված է 2011թ.	Բավարարված է 2010թ.	«2011» - «2010»
1. Բնակարանի/տան մեծությունը	76.5%	64.7%	63.8%	0.9%
2. Բնակարանի ֆիզիկական ներքին հարդարման վիճակը	96.6%	40.0%	41.7%	-1.7%
3. Բնակարանի/տան սանհանգույցի վիճակը	99.3%	46.0%	53.3%	-7.3%
4. Բնակարանի/տան խոհանոցային հարմարությունները	99.1%	46.9%	51.4%	-4.5%
5. Բնակարանի/տան ջեռուցման պայմանները	99.6%	43.8%	48.1%	-4.3%

Աղյուսակ 19. Բնակարանային պայմանների բաղադրիչների կարևորությունը և բաղադրիչից բավարարվածությունը:

Կյանքի որակի ենթադրորտ	Ընդ.	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Բնակարանային պայմաններ	43.8%	50.2%	43.1%	37.9%	38.9%	46.2%	54.2%

Աղյուսակ 20. Բավարարվածությունը միկրո մակարդակում: Սոցիալական ոլորտ, բնակարանային պայմաններ:

Բնակարանների ջեռուցումը

Հարցվածների տնային տնտեսությունների 54.2%-ն իր բնակարանը տաքացնում է գազով (Աղյուսակ 21): Տարածվածությամբ երկրորդն է փայտը՝ 33.7%: Էլեկտրաէներգիայով է տաքացնում իր բնակարանը հարցվածների տնային տնտեսությունների 21.6%-ը, աթարով՝ 11.1%-ը, ինչով պատահի՝ 1.1%-ը և չեն տաքացնում՝ 0.3%-ը:

Բնակարանների տաքացման միջոցները 2010թ.-ից 2011թ. էականորեն փոփոխություն չեն կրել:

Գազը բնակարանների տաքացման միջոց է Երևանի տնային տնտեսությունների 75.7%-ի և մարզային քաղաքների՝ 65.4%-ի համար (Աղյուսակ 22): Գյուղերում բնակարանների տաքացման հիմնական միջոցը փայտն է, որն օգտագործում է գյուղաբնակ տնային տնտեսությունների 70.8%-ը: Գյուղերում իր տարածվածությամբ երկրորդն է բնակարանների աթարով տաքացումը (30%.1%), իսկ գազը միայն երրորդ տեղում է (22.4%):

Էլեկտրաէներգիան և գազն առավելապես միջին և բարձր բարեկեցությամբ տնային տնտեսությունների բնակարանների տաքացման միջոցներն են, իսկ փայտն ու աթարը՝ ցածր բարեկեցությամբ ընտանիքներին (Աղյուսակ 23):

Բնակարանի ջեռուցման ձև	2011թ.	2010թ.	«2011» - «2010»
01 Էլեկտրաէներգիա	21.6%	19.4%	2.2%
02 Գազ	54.2%	55.3%	-1.1%
03 Փայտ	33.7%	32.2%	1.5%
04 Ածուխ	0.4%	0.4%	0.0%
05 Նավթ/կերոսին	0.2%	0.1%	0.1%
06 Աթար	11.1%	10.6%	0.5%
07 Ինչ պատահի	1.1%	1.3%	-0.2%
08 Չեն ջեռուցում/ջեռուցել	0.6%	0.7%	-0.1%

Աղյուսակ 21. Բնակարանների ջեռուցման ձևերի տարածվածությունը 2011 և 2010թթ.-երին:

Բնակարանի ջեռուցման ձև	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	«Եր.» - «Քաղ.»	«Եր.» - «Գյ.»	«Քաղ.» - «Գյ.»
01 Էլեկտրաէներգիա	33.5%	27.4%	4.4%	21.7%	6.1%	29.1%	23.0%
02 Գազ	75.7%	65.4%	22.4%	54.2%	10.3%	53.3%	43.0%
03 Փայտ	9.1%	20.1%	70.8%	33.6%	-11.0%	-61.7%	-50.7%
04 Ածուխ	0.0%	0.2%	0.9%	0.4%	-0.2%	-0.9%	-0.7%
05 Նավթ/կերոսին	0.0%	0.0%	0.4%	0.2%	0.0%	-0.4%	-0.4%
06 Աթար	0.0%	2.3%	30.1%	11.0%	-2.3%	-30.1%	-27.8%
07 Ինչ պատահի	0.8%	0.7%	1.7%	1.1%	0.1%	-0.9%	-1.0%
08 Չեն ջեռուցում/ջեռուցել	1.0%	0.3%	0.3%	0.6%	0.7%	0.7%	0.0%

Աղյուսակ 22. Բնակարանների ջեռուցման ձևերի տարածվածությունը 2011թ.՝ ըստ բնակավայրի տիպի:

Բնակարանի ջեռուցման ձև	Ցածր	Միջին	Բարձր	Ընդամենը	«Ցածր» - «Միջին»	«Ցածր» - «Բարձր»	«Միջին» - «Բարձր»
01 Էլեկտրաէներգիա	18.5%	24.8%	25.1%	21.7%	-6.3%	-6.6%	-0.3%
02 Գազ	44.8%	63.5%	64.8%	54.2%	-18.7%	-20.0%	-1.3%
03 Փայտ	40.6%	25.5%	27.7%	33.6%	15.1%	12.9%	-2.2%
04 Ածուխ	0.4%	0.2%	0.5%	0.4%	0.2%	-0.1%	-0.3%
05 Նավթ/կերոսին	0.0%	0.0%	0.3%	0.2%	0.0%	-0.3%	-0.3%
06 Աթար	14.9%	6.3%	8.0%	11.0%	8.6%	6.9%	-1.7%
07 Ինչ պատահի	1.5%	0.7%	0.8%	1.1%	0.8%	0.7%	-0.1%
08 Չեն ջեռուցում/ջեռուցել	1.0%	0.2%	0.0%	0.6%	0.8%	1.0%	0.2%

Աղյուսակ 23. Բնակարանների ջեռուցման ձևերի տարածվածությունը 2011թ.՝ ըստ բարեկեցության:

Ընտանեկան եկամտի աղբյուրները

Հետազոտությամբ ուսումնասիրվել է տնային տնտեսություններում եկամտի հետևյալ աղբյուրների առկայությունը.

1. աշխատավարձ,
2. թոշակ/նպաստ,
3. եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից,
4. եկամուտ գյուղմթերքի վաճառքից,
5. դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից,
6. եկամուտ բիզնեսից,
7. եկամուտ արհեստագործությունից/տնայնագործությունից,
8. տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ավանդներից,
9. թանկարժեք մետաղի կամ իրի գրավի դիմաց ստացած գումար,
10. անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար:

Հարցվածների շրջանում եկամտի առավել տարածված աղբյուրներն են (Աղյուսակ 24).

- աշխատավարձը (59.0%),
- թոշակը (56.3%),

որոնք ունեն համարյա հավասար տարածվածություն: Ընդ որում՝ դրանք հանդիսանում են նաև ընտանիքի համար «շատ կարևոր» եկամտի աղբյուրները:

Բավական մեծ է նաև Ռուսաստանից/արտասահմանից դրամական օգնության (16.3%) և թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումարի (15.3%) տարածվածությունը:

Եկամտի աղբյուրների տարածվածությունն ըստ բնակավայրի տիպի տրված է Աղյուսակ 25-ում: Տվյալները ցույց են տալիս, որ.

- Գյուղերում շատ ցածր է գյուղմթերքի վաճառքից ստացվող եկամուտների տարածվածությունը: Եկամտի այդ աղբյուրն ունի գյուղաբնակ տնային տնտեսությունների ընդամենը 41.8%-ը:
- Գյուղերում և քաղաքներում համեմատաբար ավելի տարածված է եկամտի ստացումը թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց:

Եկամտի տեսակ	Ունեն եկամտի աղբյուրը	«Շատ կարևոր է ընտանիքի համար»	Բավարարված են աղբյուրից
01 Աշխատավարձ	59.0%	54.8%	16.4%
02 Թոշակ/նպաստ	56.3%	43.1%	8.7%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	2.3%	1.0%	0.7%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառքից	16.3%	13.3%	5.8%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	16.3%	13.3%	9.0%
06 Եկամուտ բիզնեսից	7.3%	6.4%	3.3%
07 Եկամուտներ արհեստագործությունից/տնայնագործությունից	6.2%	5.0%	2.6%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ավանդներից	1.8%	1.1%	0.5%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	15.3%	9.4%	6.6%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	2.5%	1.5%	0.8%

Աղյուսակ 24. Դրամական եկամտի աղբյուրների տարածվածությունը, կարևորությունը և բավարարվածությունը եկամտի աղբյուրից, 2011թ.: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Եկամտի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	«Եր.» - «Քաղ.»	«Եր.» - «Գյ.»	«Քաղ.» - «Գյ.»
01 Աշխատավարձ	74.3%	63.8%	38.9%	59.0%	10.5%	35.4%	24.9%
02 Թոշակ/նպաստ	53.6%	57.3%	58.2%	56.3%	-3.7%	-4.6%	-0.9%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	3.7%	2.0%	1.2%	2.3%	1.7%	2.5%	0.8%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառքից	1.8%	4.0%	41.8%	16.3%	-2.2%	-40.0%	-37.8%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	15.0%	17.8%	16.3%	16.3%	-2.8%	-1.3%	1.5%
06 Եկամուտ բիզնեսից	9.9%	7.1%	4.6%	7.3%	2.8%	5.3%	2.5%
07 Եկամուտներ արհեստագործությունից/ տնայնագործությունից	7.2%	6.0%	5.4%	6.2%	1.2%	1.8%	0.6%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ ավանդներից	1.6%	2.3%	1.5%	1.8%	-0.7%	0.1%	0.8%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	11.0%	17.4%	17.9%	15.3%	-6.4%	-6.9%	-0.5%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	3.1%	1.8%	2.3%	2.5%	1.3%	0.8%	-0.5%

Աղյուսակ 25. Ընտանեկան եկամուտների տեսակների առկայությունը 2011թ.՝ ըստ բնակավայրի տիպի: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Եկամտի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	«Եր.» - «Քաղ.»	«Եր.» - «Գյ.»	«Քաղ.» - «Գյ.»
01 Աշխատավարձ	69.5%	60.6%	34.4%	59.0%	8.9%	35.1%	26.2%
02 Թոշակ/նպաստ	41.4%	43.8%	44.3%	56.3%	-2.4%	-2.9%	-0.5%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	2.0%	0.5%	0.4%	2.3%	1.5%	1.6%	0.1%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառք	1.3%	2.3%	35.3%	16.3%	-1.0%	-34.0%	-33.0%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	11.6%	14.5%	13.9%	16.3%	-2.9%	-2.3%	0.6%
06 Եկամուտ բիզնեսից	8.7%	6.6%	3.8%	7.3%	2.1%	4.9%	2.8%
07 Եկամուտներ արհեստագործությունից/ տնայնագործությունից	5.8%	5.0%	4.1%	6.2%	0.8%	1.7%	0.9%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ ավանդներից	1.0%	1.2%	1.0%	1.8%	-0.2%	0.0%	0.2%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	7.2%	10.6%	10.6%	15.3%	-3.4%	-3.4%	0.0%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	1.7%	1.3%	1.5%	2.5%	0.4%	0.2%	-0.2%

Աղյուսակ 26. Ընտանեկան եկամուտների տեսակների կարևորությունը («Շատ կարևոր» պատասխանների քանակը) 2011թ.՝ ըստ բնակավայրի տիպի: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Գյուղական բնակավայրերում խաթարված սոցիալ-տնտեսական վիճակի մասին է վկայում այն, որ այստեղ գյուղմթերքի վաճառքից ստացված եկամուտն իր կարևորությամբ զիջում է աշխատավարձին և վիճակագրական սխալի սահմաններում հավասար է թոշակներին Աղյուսակ 26:

Տնային տնտեսությունների միջին բավարարվածությունն իրենց եկամտի բոլոր աղբյուրներից 28.9% է (Աղյուսակ 27): Ըստ բնակավայրի տիպի այն էականորեն չի տարբերվում: Եկամուտներից միջին բավարարվածությունը համեմատաբար ավելի բարձր է առավել բարեկեցիկ խմբում, որտեղ այն հավասար է 42.2%-ի:

Կյանքի որակի ենթադաս	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Ընտանեկան եկամուտները (Ըստ բաղադրիչների կարևորության համակաշռված միջինների)	28.9%	26.3%	29.9%	32.8%	25.2%	29.1%	42.2%

Աղյուսակ 27. Տնային տնտեսությունների միջին բավարարվածությունն իրենց ունեցած եկամտի աղբյուրներից (համակաշռված ըստ աղբյուրի առկայության):

Ըստ բնակավայրի տիպի բավարարվածությունն առանձին տեսակների եկամտի աղբյուրներից տրված է Աղյուսակ 28-ում: Տվյալներից բխում է, որ.

- աշխատավարձից բավարարվածությունը համեմատաբար ավելի ցածր է գյուղերում,
- թոշակներից բավարարվածությունը համեմատաբար ավելի ցածր է Երևանում,
- բիզնեսից ստացված եկամուտներից բավարարվածությունը համեմատաբար ավելի բարձր է Երևանում,
- արտասահմանից ստացված դրամական օգնությունից համեմատաբար ավելի բավարարված են գյուղերում,
- աշխատավարձերից համեմատաբար ավելի բավարարված են միջին և բարձր բարեկեցությամբ անձինք (Աղյուսակ 29),
- թոշակներից համեմատաբար ավելի բավարարված են ցածր բարեկեցությամբ անձինք:

Եկամտի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
01 Աշխատավարձ	19.9%	18.3%	11.2%	16.4%
02 Թոշակ/նպաստ	6.4%	10.3%	9.7%	8.7%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	1.3%	0.8%	-	0.7%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառքից	0.6%	1.0%	15.2%	5.8%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	8.2%	8.6%	10.2%	9.0%
06 Եկամուտ բիզնեսից	4.1%	3.5%	2.2%	3.3%
07 Եկամուտներ արհեստագործությունից/ տնայնագործությունից	1.8%	3.2%	2.8%	2.6%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ ավանդներից	0.3%	0.7%	0.4%	0.5%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	4.4%	7.2%	8.4%	6.6%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	0.7%	-	1.6%	0.8%

Աղյուսակ 28. Բավարարվածությունը ընտանեկան եկամուտների տեսակներից («Շատ կարևոր» պատասխանների քանակը) ըստ բնակավայրի տիպի, 2011թ.: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Եկամտի տեսակ	Ցածր	Միջին	Բարձր	Ընդամենը
01 Աշխատավարձ	41.9%	67.8%	69.1%	59.0%
02 Թոշակ/նպաստ	49.4%	39.6%	32.0%	56.3%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	0.6%	1.8%	0.8%	2.3%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառքից	14.4%	10.8%	13.9%	16.3%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	12.5%	12.8%	16.0%	16.3%
06 Եկամուտ բիզնեսից	5.1%	7.2%	8.8%	7.3%
07 Եկամուտներ արհեստագործությունից/ տնայնագործությունից	3.4%	7.0%	5.9%	6.2%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ ավանդներից	0.9%	1.2%	1.3%	1.8%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	9.2%	11.2%	7.2%	15.3%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	1.8%	1.0%	1.6%	2.5%

Աղյուսակ 29. Ընտանեկան եկամուտների տեսակների կարևորությունն («Շատ կարևոր» պատասխանների քանակը) ըստ բարեկեցության, 2011թ.: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Տվյալ եկամտի տեսակը «շատ կարևոր» համարող հարցվածների բավարարվածությունն այդ եկամտի տեսակից ըստ բարեկեցության խմբերի ներկայացված է Աղյուսակ 30-ում:

Եկամտի տեսակ	Ցածր	Միջին	Բարձր
01 Աշխատավարձ	10.9%	18.7%	27.7%
02 Թոշակ/նպաստ	9.0%	7.2%	10.4%
03 Եկամուտ վարձով տրված գույքից/բնակարանից	0.6%	0.5%	1.3%
04 Եկամուտ գյուղմթերքի վաճառքից	6.1%	3.7%	8.0%
05 Դրամական օգնություն Ռուսաստանից/արտասահմանից	7.3%	8.2%	14.9%
06 Եկամուտ բիզնեսից	2.3%	3.8%	5.1%
07 Եկամուտներ արհեստագործությունից/ տնայնագործությունից	1.8%	3.5%	3.2%
08 Տոկոսներ արժեթղթերից/բաժնետոմսերից/ ավանդներից	0.3%	0.7%	0.5%
09 Թանկարժեք մետաղի կամ իրերի գրավի դիմաց ստացած գումար	6.4%	6.0%	8.3%
10 Անձնական կամ ընտանեկան իրերի վաճառքից ստացված գումար	0.9%	0.3%	1.3%

Աղյուսակ 30. Ընտանեկան եկամուտների տեսակների բավարարվածությունն («Շատ կարևոր» պատասխանների քանակը) ըստ բարեկեցության, 2011թ.: (Տոկոսները հաշվարկված են հարցվածների ընդհանուր քանակից)

Սննդամթերք

Հետազոտությամբ դիտարկվել է հետևյալ հիմնական սննդամթերքի ֆիզիկական և ֆինանսական մատչելիությունը, բավարարվածությունը որակից և որակից բավարարվածության փոփոխությունը 2011թ.-ին՝ 2010թ.-ի համեմատ:

Դիտարկվել են սննդամթերքի հետևյալ տեսակները.

1. հաց, հացամթերք,
2. միս, թռչնամիս,
3. մսամթերք (երշիկեղեն, պահածո),

4. ձուկ/ձկնեղեն (պահածո),
5. կարտոֆիլ,
6. միրգ, բանջարեղեն,
7. կաթ, կաթնամթերք,
8. ձու,
9. հրուշակեղեն, քաղցրավենիք,
10. մակարոնեղեն,
11. ընդեղեն՝ լոբի, սիսեռ և այլն,
12. չրեղեն,
13. շոկոլադ,
14. թեյ, սուրճ,
15. հյութեր, ոչ ալկոհոլային խմիչքներ,
16. ալկոհոլային խմիչքներ,
17. ծխախոտ:

Հաշվարկված ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 31-ում:

Հիմնական սննդամթերքի ֆիզիկական մատչելիությունը բավական բարձր է: Բնակչության 90-93%-ը ձուն, հացը և հացամթերքը, կաթը և կաթնամթերքը գնում են սեփական բնակավայրից: Առավել ցածր է ձկնեղենի ֆիզիկական մատչելիությունը. սեփական համայնքից այն գնում է հարցվածների 75.4%-ը:

Ֆինանսական մատչելիության ցուցանիշները նշանակալիորեն ավելի ցածր են: Հարցվածների մոտ 2/3-ը հայտարարել է, որ իր ընտանիքի համար ֆինանսապես մատչելի է կարտոֆիլը, մակարոնեղենը, ձուն և կաթնամթերքը: Ֆինանսապես համեմատաբար անմատչելի է մսամթերքը՝ երշիկեղեն, պահածո (38.3%), ձուն ու ձկնեղենը (38.8%) և միսն ու թռչնամիսը (39.4%):¹⁵

Սննդամթերքի որակից բավարարվածությունն ամենացածրն է. մսամթերքից՝ 58.8%, ծխախոտից՝ 67.3%, մսից և թռչնամսից՝ 70.3% և ալկոհոլային խմիչքներից՝ 71.5%:

Բոլոր դիտարկված սննդամթերքի տեսակների համար որակից բավարարվածությունը 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել է, հատկապես՝ մսամթերքից (23.5%), ծխախոտից (21.1%), հյութերից և ոչ ալկոհոլային խմիչքներից (16.1%), ալկոհոլային խմիչքներից (15.6%), մսից և թռչնամսից (14.7%):

Սննդամթերքի տեսակների որակից բավարարվածությունն ըստ բնակավայրի տիպի և կենսամակարդակի ներկայացված է Աղյուսակ 33-ում: Նույն աղյուսակում տրված է նաև սննդամթերքի տեսակների որակից միջին բավարարվածությունը:

¹⁵ 2010թ. հետազոտությունում սննդամթերքի ֆինանսական մատչելիությունն առանձին չի ուսումնասիրվել: Այդ պատճառով սննդամթերքի ֆինանսական մատչելիության համեմատություն չի կատարվել:

Սննդամթերք	Գնում են սեփական բնակավայրից	Ֆինանսական մատչելիություն	Բավարարված են որակից 2011թ.	Բավարարված են որակից 2010թ.	«2011» - «2010»
11 Ընդդեմ՝ լոբի, սիսեռ և այլն	88.7%	59.3%	91.0%	95.4%	-4.4%
06 Միրգ, բանջարեղեն	89.1%	60.0%	90.5%	95.0%	-4.5%
05 Կարտոֆիլ	87.1%	67.7%	89.7%		
12 Չրեղեն (չարագ)	79.0%	42.5%	89.3%	93.1%	-3.8%
09 Հրուշակեղեն, քաղցրավենիք	87.9%	58.7%	87.5%	94.2%	-6.7%
10 Մակարոնեղեն**	88.7%	67.1%	86.5%	95.4%	-8.9%
13 Շոկոլատ	83.4%	49.7%	86.5%	94.3%	-7.8%
08 Ձու	95.0%	65.7%	84.5%	93.5%	-9.0%
07 Կաթ, կաթնամթերք	93.3%	64.4%	82.2%	93.9%	-11.7%
14 Թեյ, սուրճ	88.9%	64.4%	79.9%	93.8%	-13.9%
04 Ձուկ/ձկնեղեն (պահածո)	75.4%	38.8%	78.1%	86.8%	-8.7%
01 Հաց, հացամթերք	94.3%	59.9%	76.2%	88.0%	-11.8%
15 Հյութեր, ոչ ալկոհոլային խմիչքներ	86.2%	58.6%	74.9%	91.0%	-16.1%
16 Ալկոհոլային խմիչքներ	80.3%	47.8%	71.5%	87.1%	-15.6%
02 Միս, թռչնամիս*	87.5%	39.4%	70.3%	85.0%	-14.7%
17 Ծխախոտ	69.8%	50.8%	67.3%	88.4%	-21.1%
03 Մսամթերք (երշիկեղեն, պահածո)	84.9%	38.3%	58.3%	81.8%	-23.5%

Աղյուսակ 31. Սննդամթերքի մատչելիությունը և որակից բավարարվածությունը: (Հասավորված են ըստ 2011թ. սննդամթերքի որակից բավարարվածության նվազման):

Սննդամթերքի ֆինանսական մատչելիությունն ըստ չափման սանդղակի բոլոր աստիճանների տրված է Աղյուսակ 32-ում:

Սննդամթերք	Ընդհանրապես մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի չէ	Ավելի շուտ մատչելի է	Լիովին մատչելի է	Ընդամենը
01 Հաց, հացամթերք	16.4%	23.7%	34.7%	25.3%	100.0%
02 Միս, թռչնամիս՝	27.5%	33.0%	27.8%	11.6%	100.0%
03 Մսամթերք (երշիկեղեն, պահածո)	27.3%	34.4%	28.1%	10.2%	100.0%
04 Ձուկ/ձկնեղեն (պահածո)	29.8%	31.4%	28.0%	10.9%	100.0%
05 Կարտոֆիլ	12.4%	19.9%	35.4%	32.3%	100.0%
06 Միրգ, բանջարեղեն	15.3%	24.7%	37.9%	22.1%	100.0%
07 Կաթ, կաթնամթերք	14.0%	21.7%	36.2%	28.1%	100.0%
08 Ձու	13.4%	20.9%	35.4%	30.3%	100.0%
09 Հրուշակեղեն, քաղցրավենիք	15.1%	26.2%	38.2%	20.5%	100.0%
10 Մակարոնեղեն**	12.5%	20.4%	41.3%	25.8%	100.0%
11 Ընդդեմ՝ լոբի, սիսեռ և այլն	16.9%	23.8%	35.9%	23.4%	100.0%
12 Չրեղեն (չարագ)	29.2%	28.3%	26.4%	16.0%	100.0%
13 Շոկոլատ	22.3%	28.0%	33.2%	16.4%	100.0%
14 Թեյ, սուրճ	14.1%	21.4%	40.8%	23.7%	100.0%
15 Հյութեր, ոչ ալկոհոլային խմիչքներ	16.6%	24.8%	39.0%	19.7%	100.0%
16 Ալկոհոլային խմիչքներ	23.5%	28.8%	32.4%	15.3%	100.0%
17 Ծխախոտ	25.4%	23.8%	30.6%	20.1%	100.0%

Աղյուսակ 32. Սննդամթերքի ֆինանսական մատչելիությունը:

Սննդամթերքի որակից բավարարվածությունն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության մակարդակների ներկայացված է Աղյուսակ 33-ում:

Սննդամթերք	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Հաց, հացամթերք	76.2%	66.9%	78.4%	84.2%	75.4%	74.7%	81.1%
02 Միս, թռչնամիս*	70.3%	68.5%	72.5%	70.3%	68.9%	70.6%	73.9%
03 Սաամթերք (երշիկեղեն, պահածո)	58.3%	55.5%	59.8%	59.8%	59.2%	57.1%	57.7%
04 Ձուկ/ձկնեղեն (պահածո)	78.1%	78.5%	76.9%	78.6%	76.4%	78.2%	82.4%
05 Կարտոֆիլ	89.7%	88.8%	89.8%	90.7%	87.8%	91.2%	92.7%
06 Միզ, բանջարեղեն	90.5%	91.9%	91.0%	88.5%	88.8%	93.1%	90.7%
07 Կաթ, կաթնամթերք	82.2%	74.4%	81.7%	90.7%	81.7%	81.9%	84.3%
08 Ձու	84.5%	82.1%	82.8%	88.4%	83.4%	86.0%	85.2%
09 Հրուշակեղեն, քաղցրավենիք	87.5%	88.7%	89.0%	85.0%	85.5%	89.0%	90.6%
10 Մակարոնեղեն**	86.5%	86.2%	87.9%	85.5%	84.3%	89.2%	87.7%
11 Ընդեղեն՝ լոբի, սիսեռ և այլն	91.0%	91.5%	90.6%	90.7%	89.4%	93.0%	92.0%
12 Չրեղեն (սարագ)	89.3%	89.2%	89.6%	89.2%	88.5%	90.5%	89.5%
13 Շոկոլադ	86.5%	88.2%	87.6%	84.0%	84.8%	88.4%	87.9%
14 Թեյ, սուրճ	79.9%	77.7%	82.6%	79.8%	78.4%	80.7%	82.3%
15 Հյութեր, ոչ ալկոհոլային խմիչքներ	74.9%	71.0%	78.5%	75.8%	72.9%	76.0%	78.7%
16 Ալկոհոլային խմիչքներ	71.5%	70.3%	73.3%	71.1%	69.3%	74.6%	71.8%
17 Ծխախոտ	67.3%	64.0%	71.4%	67.0%	65.1%	69.1%	70.2%
Միջին	80.2%	78.4%	81.4%	81.1%	78.8%	81.4%	82.3%

Աղյուսակ 33. Սննդամթերքի որակից բավարարվածությունը, ընդամենը, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության մակարդակի և բավարարվածության միջին արժեքները:

Կենցաղային իրեր և տեխնիկա

Հայաստանի տնային տնտեսություններում կենցաղային տեխնիկայի առկայությունը (որը տվյալ դեպքում դիտվել է որպես ֆիզիկական մատչելիության ցուցանիշ), որտեղից են այն ձեռք բերում, ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը որակից ներկայացված է Աղյուսակ 34-ում: Դիտարկվել են հետևյալ կենցաղային իրերը.

1. հեռուստացույց,
2. սառնարան,
3. լվացքի մեքենա,
4. փոշեկուլ,
5. աուդիո-վիդեո սարքավորումներ,
6. ջեռուցման համակարգ,
7. օդորակիչ/կոնդիցիոներ,
8. խոհանոցային սարքեր (էլեկտրական),
9. համակարգիչ,
10. բջջային հեռախոս,
11. կոշտ կահույք (օրինակ՝ պահարան),
12. փափուկ կահույք (օրինակ՝ բազմոց):

Հայաստանի տնային տնտեսությունների 98.9%-ում առկա է հեռուստացույց, իսկ 95.3%-ում՝ բջջային հեռախոս, 46.1%-ն ունի համակարգիչ: Առավել ցածր է օդորակիչների (4.4%) և ջեռուցման համակարգերի (25.0%) առկայությունը (Աղյուսակ 34):

Բնակչության 50-54%-ը կենցաղային տեխնիկայի բոլոր դիտարկված տեսակներն անհրաժեշտության դեպքում կարող են ձեռք բերել սեփական համայնքից (Աղյուսակ 34):

Կենցաղային տեխնիկայի ֆինանսական մատչելիությունը տրված է Աղյուսակ 34-ում:¹⁶ Այն բավական ցածր է: Մասնավորապես, անհրաժեշտության դեպքում ֆինանսապես ունակ են բջջային հեռախոս ձեռք բերել հարցվածների 34.4%-ը, իսկ ջեռուցման համակարգ՝ 14.4%-ը:

2010թ. կենցաղային տեխնիկայի առկայությունը, ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը որակից տրված է Աղյուսակ 35-ում, իսկ 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ կենցաղային տեխնիկայի առկայության, ֆինանսական մատչելիության և որակից բավարարվածության փոփոխությունները՝ Աղյուսակ 36-ում: Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ բոլոր բնութագրերի արժեքները նվազել են, բացի համակարգիչների առկայությունից: Համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների քանակն աճել է 7.6%-ով: Առավելապես նվազել է խոհանոցային էլեկտրական սարքեր (8.1%) և ջեռուցման համակարգեր ունեցող (7.3%) տնային տնտեսությունների քանակը:

Ֆինանսական մատչելիության տեսակետից առավելապես նվազել է աուդիո-վիդեո սարքավորումների (9.4%) և բջջային հեռախոսների (նույնպես՝ 9.4%) մատչելիությունը:

Որակից բավարարվածությունը առավելապես նվազել է կոշտ կահույքից (15.4%), օդորակիչներից (13.5%), փափուկ կահույքից (13.4%), հեռուստացույցներից (12.9%):

Կենցաղային տեխնիկայի որակից բավարարվածությունն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության տրված է Աղյուսակ 37-ում: Նույն աղյուսակում տրված են նաև կենցաղային տեխնիկայի տարբեր տեսակների որակից բավարարվածության միջին արժեքները:

Կենցաղային իրեր և տեխնիկա	Ունեն	Ձեռք են բերում սեփական բնակավայրից	Ֆինանսական մատչելիություն	Բավարարվածությունը որակից
01 Հեռուստացույց	98.9%	52.5%	24.8%	71.3%
02 Սառնարան	88.7%	53.3%	20.3%	63.1%
03 Լվացքի մեքենա	82.8%	53.4%	22.1%	78.4%
04 Փոշեկուլ	69.2%	54.3%	30.2%	71.9%
05 Աուդիո-վիդեո սարքավորումներ	73.7%	53.2%	27.4%	78.6%
06 Ջեռուցման համակարգ	25.0%	53.2%	14.4%	85.9%
07 Օդորակիչ/կոնդիցիոներ	4.4%	52.5%	15.5%	77.0%
08 Խոհանոցային սարքեր (էլեկտրական)	54.3%	54.1%	28.3%	77.6%
09 Համակարգիչ	46.1%	50.4%	21.0%	87.8%
10 Բջջային հեռախոս	95.3%	52.7%	34.4%	78.8%
11 Կոշտ կահույք (օր.՝ պահարան)	92.3%	50.7%	17.5%	56.7%
12 Փափուկ կահույք (օր.՝ բազմոց)	91.7%	50.5%	18.2%	59.3%

Աղյուսակ 34. Կենցաղային տեխնիկայի մատչելիությունը և որակից բավարարվածությունը, 2011թ.:

¹⁶ Ֆինանսական մատչելիությունը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «Այսօրվա Ձեր ֆինանսական վիճակը թույլ տալի՞ս է ձեռք բերել [այդ գույքը/կենցաղային տեխնիկան]»: Չափման սանդղակը՝ «միանշանակ ոչ», «ավելի շուտ ոչ», «ավելի շուտ այո», «միանշանակ այո»:

Կենցաղային իրեր և տեխնիկա	Ունեն	Ֆինանսական մատչելիություն	Բավարվածությունը որակից
01 Հեռուստացույց	99.3%	31.4%	84.2%
02 Սառնարան	93.3%	24.3%	73.7%
03 Լվացքի մեքենա	85.9%	26.9%	83.6%
04 Փռչեկույ	73.6%	38.0%	81.4%
05 Աուդիո-վիդեո սարքավորումներ	78.9%	36.8%	90.0%
06 Ջեռուցման համակարգ	32.3%	17.8%	92.8%
07 Օդորակիչ/կոնդիցիոներ	7.3%	17.4%	90.5%
08 Խոհանոցային սարքեր (էլեկտրական)	62.4%	36.0%	88.5%
09 Համակարգիչ	38.5%	22.5%	89.7%
10 Բջջային հեռախոս	97.8%	43.8%	89.6%
11 Կոշտ կահույք (օր.՝ պահարան)	94.1%	20.4%	72.1%
12 Փափուկ կահույք (օր.՝ բազմոց)	93.8%	21.2%	72.7%

Աղյուսակ 35. Կենցաղային տեխնիկայի մատչելիությունը և որակից բավարարվածությունը, 2010թ.:

Կենցաղային իրեր և տեխնիկա	Ունեն «2011» - «2010»	Ֆինանսական մատչելիություն «2011» - «2010»	Բավարվածությունը որակից «2011» - «2010»
01 Հեռուստացույց	-0.4%	-6.6%	-12.9%
02 Սառնարան	-4.6%	-4.0%	-10.6%
03 Լվացքի մեքենա	-3.1%	-4.8%	-5.2%
04 Փռչեկույ	-4.4%	-7.8%	-9.5%
05 Աուդիո-վիդեո սարքավորումներ	-5.2%	-9.4%	-11.4%
06 Ջեռուցման համակարգ	-7.3%	-3.4%	-6.9%
07 Օդորակիչ/կոնդիցիոներ	-2.9%	-1.9%	-13.5%
08 Խոհանոցային սարքեր (էլեկտրական)	-8.1%	-7.7%	-10.9%
09 Համակարգիչ	7.6%	-1.5%	-1.9%
10 Բջջային հեռախոս	-2.5%	-9.4%	-10.8%
11 Կոշտ կահույք (օր.՝ պահարան)	-1.8%	-2.9%	-15.4%
12 Փափուկ կահույք (օր.՝ բազմոց)	-2.1%	-3.0%	-13.4%

Աղյուսակ 36. Կենցաղային տեխնիկայի առկայության, ֆինանսական մատչելիության և որակից բավարարվածության փոփոխությունները 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ:

Կենցաղային իրեր և տեխնիկա	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Հեռուստացույց	71.3%	74.1%	71.3%	68.5%	69.2%	72.1%	75.7%
02 Սառնարան	63.1%	73.4%	62.4%	51.2%	56.0%	67.0%	74.7%
03 Լվացքի մեքենա	78.4%	87.9%	78.0%	67.4%	72.2%	81.5%	87.7%
04 Փռչեկույ	71.9%	75.4%	71.6%	67.0%	67.8%	70.9%	81.9%
05 Աուդիո-վիդեո սարքավորումներ	78.6%	79.9%	80.4%	75.5%	76.0%	78.8%	84.0%
06 Ջեռուցման համակարգ	85.9%	86.6%	88.4%	78.7%	79.6%	88.6%	92.5%
07 Օդորակիչ/կոնդիցիոներ	77.0%	75.4%	85.7%	75.0%	79.3%	71.9%	80.8%
08 Խոհանոցային սարքեր (էլեկտրական)	77.6%	81.0%	77.4%	72.2%	74.7%	78.9%	80.4%
09 Համակարգիչ	87.8%	87.1%	88.1%	89.6%	87.1%	88.2%	88.7%
10 Բջջային հեռախոս	78.8%	82.3%	78.9%	75.0%	74.3%	81.7%	85.8%
11 Կոշտ կահույք (օր.՝ պահարան)	56.7%	58.8%	60.9%	50.7%	52.5%	59.6%	62.9%
12 Փափուկ կահույք (օր.՝ բազմոց)	59.3%	58.8%	60.0%	59.2%	56.8%	60.2%	64.0%
Միջին արժեք	73.9%	76.7%	75.3%	69.2%	70.5%	75.0%	79.9%

Աղյուսակ 37. Կենցաղային տեխնիկայի որակից բավարարվածությունը՝ ընդամենը, ըստ բնակավայրի տիպի և ըստ բարեկեցության:

Սեփականություն

2011թ. կյանքի որակի հետազոտության ընթացքում գնահատվել է տնային տնտեսություններում հետևյալ տիպի սեփականության առկայությունը.

1. բնակարան/սեփական տուն,
2. ավտոտնակ,
3. ամառանոց,
4. հողատարածք,
5. մարդատար ավտոմեքենա,
6. բեռնատար ավտոմեքենա,
7. արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, մեքենա-սարքավորումներ,
8. արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ,
9. գյուղատնտեսական տեխնիկա՝ կոմբայն, տրակտոր,
10. գոմ/ամբար,
11. անասնագլխաքանակ,
12. դրամական խնայողություններ:

Հայաստանի տնային տնտեսությունների 90.0%-ն ունի բնակարան կամ սեփական տուն (Աղյուսակ 38)¹⁷, հողատարածք ունի հարցվածների 45.3%-ը, մարդատար ավտոմեքենա՝ 35.8%-ը, իսկ ավտոտնակ՝ 32.2%-ը: Նշված գույքի տեսակներից առավել կարևորներն են՝ (անկախ նրանից, թե տնային տնտեսությունն ունի այդ գույքը, թե ոչ) բնակարանը/սեփական տունը (99.2%), դրամական խնայողությունները (95.8%) և մարդատար ավտոմեքենան (88.0%): Ամառանոցի առկայությունը կարևոր է հարցվածների 66.4%-ի համար:

Դիտարկված գույքի ֆինանսական մատչելիությունը բավական ցածր է:¹⁸ Անհրաժեշտության դեպքում կանխիկ կամ վարկով ավտոմեքենա կարող է գնել հարցվածների 10.5%-ը, անասնագլխաքանակ՝ 7.6%-ը (հարցը տրվել է միայն գյուղերում), բնակարան կամ սեփական տուն՝ 5.4%-ը:

2010թ. Հայաստանի ընտանիքներում անշարժ գույքի, դրամական միջոցների և արտադրական միջոցների առկայությունը ներկայացված է Աղյուսակ 39-ում, իսկ 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ հետազոտություններում համադրելի գույքի տեսակների առկայության փոփոխությունները՝ Աղյուսակ 40-ում: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ավելացել է ավտոտնակների առկայությունը:

¹⁷ Ներկայացված ցուցանիշը չպետք է շփոթել Աղյուսակ 14-ի ցուցանիշի հետ, որը ցույց էր տալիս, թե արդյո՞ք տունը/բնակարանը, որտեղ ապրում է հարցվողը, նրա սեփականությունն է: Հիշեցնենք, որ ցուցանիշի արժեքն էր 85.6%:

¹⁸ Ֆինանսական մատչելիությունը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «Եթե անհրաժեշտություն առաջանար գնել կամ փոխարինել այդ գույքի տեսակները, ապա Ձեր այսօրվա ֆինանսական հնարավորությունները թույլ կտային՞ կանխիկ կամ վարկով գնել այդ ապրանքը»: Պատասխանների տարբերակները՝ 1.«միանշանակ ոչ», 2.«ավելի շուտ ոչ», 3.«ավելի շուտ այո», 4.«միանշանակ այո»:

Գույքի տեսակ	Ունեն	Կարևոր է	Ֆինանսական մատչելիություն
01 Բնակարան/սեփական տուն	90.0%	99.2%	5.4%
02 Ավտոտնակ	32.6%	77.5%	7.8%
03 Ամառանոց	5.2%	66.4%	3.5%
04 Հողատարածք	45.3%	75.8%	7.0%
05 Մարդատար ավտոմեքենա	35.8%	88.0%	10.5%
06 Բեռնատար ավտոմեքենա	5.7%	39.0%	4.4%
07 Արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, մեքենա-սարքավորումներ	2.0%	36.8%	3.2%
08 Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	2.6%	47.7%	3.4%
09 Գյուղատնտեսական տեխնիկա՝ կոմբայն, տրակտոր	2.9%	34.4%	3.4%
10 Գոմ/ամբար	26.2%	41.5%	5.5%
11 Անասնազխաքանակ՝	13.4%	44.3%	7.6%
12 Դրամական խնայողություններ	9.1%	95.8%	-

* - Կամ՝ 2 կամ ավելի կով, 3 կամ ավելի խոզ, 5 կամ ավելի ոչխար կամ դրանց համաթեք:

Աղյուսակ 38. Անշարժ գույքի, դրամական միջոցների և արտադրական միջոցների առկայությունը և մատչելիությունը, 2011թ.:

Գույքի տեսակ	Ունեն, 2010թ.
01 Բնակարան/սեփական տուն	92.1%
02 Ավտոտնակ	27.5%
03 Ամառանոց	4.7%
04 Հողատարածք	42.8%
07 Արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, մեքենա-սարքավորումներ	3.2%
08 Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	1.2%
12 Դրամական խնայողություններ	7.0%

Աղյուսակ 39. Անշարժ գույքի, դրամական միջոցների և արտադրական միջոցների առկայությունը, 2010թ.:

Գույքի տեսակ	Գույքի տեսակի ունեցող տնային տնտեսությունների քանակի փոփոխությունը՝ 2011թ.-ին 2010թ. համեմատ
01 Բնակարան/սեփական տուն	-2.1%
02 Ավտոտնակ	5.1%
03 Ամառանոց	0.5%
04 Հողատարածք	2.5%
08 Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	-1.2%
08 Արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ	1.4%
12 Դրամական խնայողություններ	2.1%

Աղյուսակ 40. Անշարժ գույքի, դրամական միջոցների և արտադրական միջոցների առկայության փոփոխությունները 2011թ.-ին՝ 2010թ.-ի համեմատ:

Ենթակառուցվածքներ

Հետազոտության ընթացքում դիտարկվել են համայնքային մակարդակում հետևյալ ենթակառուցվածքների առկայությունը, ֆինանսական մատչելիությունը և մարդկանց բավարարվածությունը ենթակառուցվածքային ծառայությունների որակից.

1. էլեկտրամատակարարում,
2. գազամատակարարում,
3. խմելու ջրի մատակարարում,
4. ոռոգման ջուր,
5. տնային/ֆիքսված հեռախոսակապ,
6. բջջային հեռախոսակապ,
7. ինտերնետ կապ,
8. քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ,
9. միջքաղաքային /միջգյուղական տրանսպորտ,
10. աղբահանություն,
11. հեռուստահեռարձակում,
12. փողոցային լուսավորություն,
13. գյուղմթերքի իրացման կետեր,
14. պարարտանյութի ձեռքբերման կետեր,
15. գյուղատնտեսական տեխնիկա,
16. մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներ,
17. գյուղամիջյան փողոցներ:

Հարկ է նշել, որ ցուցանիշները վերաբերում են ոչ թե համայնքների քանակին, այլ բնակչության քանակին, որոնց բնակավայրերում առկա է կամ առկա չէ տվյալ ենթակառուցվածքը:

Գյուղմթերքների իրացման կետերի, պարարտանյութերի ձեռքբերման կետերի, գյուղատնտեսական տեխնիկայի և մարզկենտրոնի հետ կապող ճանապարհների հետ կապված հարցերը տրվել են միայն մարզերում՝ քաղաքներում և գյուղերում, իսկ գյուղամիջյան փողոցների հետ կապված հարցերը՝ միայն գյուղերում:

Ենթակառուցվածքների առկայությունը և դրանց փոփոխությունը 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ տրված է Աղյուսակ 41-ում:¹⁹

Հայաստանի բոլոր բնակիչների համար առկա է էլեկտրաէներգիայի մատակարարումը (100.0%), 99.7%-ի համար՝ բջջային հեռախոսակապի ծածկույթը: Իրենց համայնքում խմելու ջրի մատակարարման առկայության մասին հաղորդել են հարցվածների 97.5%-ը: Հեռուստահաղոր-

¹⁹ Ենթակառուցվածքի առկայությունը համայնքում արձանագրվել է հետևյալ հարցի միջոցով. «Նշեք, խնդրեմ, կա՞ն արդյոք Ձեր բնակավայրում հետևյալ ծառայությունները/ենթակառուցվածքները»: Պատասխանների տարբերակները՝ 1. «այո», 2. «ոչ»:

դումների ընդունումը մատչելի էր հարցվածների 97.1%-ի համայնքներում, իսկ գազամատակարարումը՝ 95.7%-ի համայնքներում:

Առավելապես ցածր էր գյուղմթերքների իրացման կետերի (47.0%) և պարարտանյութի ձեռքբերման կետերի (47.8%) առկայությունը, ինչպես նաև գյուղտեխնիկայի առկայությունը (68.2%):

- Չնայած իրավիճակը համեմատաբար վատթար է գյուղատնտեսական ենթակառուցվածքների ենթադրություններում, սակայն, հարկ է նշել, որ նույն այդ ոլորտներում են տեղի ունեցել ամենանշանակալի բարելավումները՝ 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ:

Մասնավորապես, ոռոգման ջրի առկայության մասին նշած հարցվողների քանակն աճել 18.1%-ով, նույնքանով աճել է գյուղմթերքների իրացման կետերի առկայության մասին նշումների քանակը: Պարարտանյութերի ձեռքբերման կետերի առկայության մասին նշումների քանակն աճել է 12.7%-ով, իսկ իրենց համայնքում գյուղտեխնիկայի մասին նշումների թիվը՝ 10.6%-ով:

Ենթակառուցվածք	Առկա է 2011թ.	Առկա է 2010թ.	«2011» - «2010»
Ընդհանուր ենթակառուցվածքներ			
01 Էլեկտրամատակարարում	100.0%	99.6%	0.4%
02 Գազամատակարարում	95.7%	94.5%	1.2%
03 Խմելու ջրի մատակարարում	97.5%	94.5%	3.0%
04 Ոռոգման ջուր	66.8%	48.7%	18.1%
05 Տնային/ֆիքսված հեռախոսակապ	94.2%	92.8%	1.4%
06 Բջջային հեռախոսակապ	99.7%	99.4%	0.3%
07 Ինտերնետ կապ	94.1%	85.3%	8.8%
08 Քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ	80.7%	79.2%	1.5%
09 Միջքաղաքային /միջգյուղական տրանսպորտ**	85.7%	-	-
10 Աղբահանություն	85.1%	75.2%	9.9%
11 Հեռուստահեռարձակում	97.1%	97.2%	-0.1%
12 Փողոցային լուսավորություն	81.0%	74.3%	6.7%
Գյուղական ենթակառուցվածքներ			
13 Գյուղմթերքի իրացման կետեր	47.0%	28.9%	18.1%
14 Պարարտանյութի ձեռքբերման կետեր	47.8%	35.1%	12.7%
15 Գյուղատնտեսական տեխնիկա	68.2%	57.6%	10.6%
16 Մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներ**	94.6%	-	-
** - 2010թ. հարցերի ձևակերպումն էականորեն տարբերվում էր 2011թ. հարցերի ձևակերպումից:			

Աղյուսակ 41. Կենցաղային ծառայությունների առկայությունը 2010 և 2011թթ.:

Ենթակառուցվածքների առկայությունն ըստ բնակավայրի տիպի ներկայացված է Աղյուսակ 42-ում: Երևանյան ենթակառուցվածքների շարքում համեմատաբար ցածր է փողոցների լուսավորության առկայության մասին նշումների քանակը (92.5%), մարզային քաղաքներում՝ ներհամայնքային տրանսպորտի առկայության (87.9%):

Հարկ է նշել, որ գյուղմթերքների իրացման և պարարտանյութերի ձեռքբերման կետերն առավելապես տեղաբաշխված են մարզային քաղաքներում: Մասնավորապես, գյուղմթերքի իրացման կետերի մասին նշել է մարզային քաղաքների բնակչության 74.8%-ը, իսկ գյուղական բնակչության՝ միայն 25.6%ը: Պարարտանյութերի ձեռքբերման կետերի առկայության մասին նշել է մարզային քաղաքներում հարցվածների 68.2%-ը, իսկ գյուղերում՝ 34.9%-ը:

Գյուղտեխնիկայի տեղաբաշխման մասին մարզային քաղաքներում և գյուղերում նշել է հարցվածների համապատասխանաբար 60.8%-ը և 72.4%-ը:

Ենթակառուցվածք	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
Ընդհանուր ենթակառուցվածքներ				
01 Էլեկտրամատակարարում	100.0%	100.0%	100.0%	100.0%
02 Գազամատակարարում	99.7%	99.8%	87.8%	95.7%
03 Խմելու ջրի մատակարարում	98.9%	99.2%	94.8%	97.5%
04 Ոռոգման ջուր	44.5%	63.3%	84.6%	66.8%
05 Տնային/ֆիքսված հեռախոսակապ	98.3%	98.7%	86.0%	94.2%
06 Բջջային հեռախոսակապ	99.9%	99.8%	99.4%	99.7%
07 Ինտերնետ կապ	94.7%	97.6%	90.4%	94.1%
08 Քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ	99.0%	87.9%	53.3%	80.7%
09 Միջքաղաքային /միջգյուղական տրանսպորտ	93.6%	93.8%	71.0%	85.7%
10 Աղբահանություն	99.0%	98.3%	58.8%	85.1%
11 Հեռուստահեռարձակում	99.4%	99.0%	93.0%	97.1%
12 Փողոցային լուսավորություն	92.5%	94.6%	57.0%	81.0%
Գյուղական ենթակառուցվածքներ				
13 Գյուղմթերքի իրացման կետեր	-	74.8%	25.6%	47.0%
14 Պարարտանյութի ձեռքբերման կետեր	-	68.2%	34.9%	47.8%
15 Գյուղատնտեսական տեխնիկա	-	60.8%	72.4%	68.2%
16 Սարգկենտրոնի հետ կապող ճանապարհներ	-	-	94.6%	94.6%

Աղյուսակ 42. Ենթակառուցվածքների առկայությունն՝ ըստ բնակավայրի տիպի:

Աղյուսակ 43-ում ներկայացված է ըստ բնակավայրի տիպի Հայաստանի բնակչության համար դիտարկվող ենթակառուցվածքային ծառայություններից փաստացի կամ պոտենցիալ օգտվելու հնարավորությունն այն դեպքում, եթե իրենց համայնքում առկա է տվյալ ենթակառուցվածք:²⁰

Տնային տնտեսությունների մակարդակում ենթակառուցվածքների ֆիզիկական մատչելիության տեսակետից հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ գյուղերում հարցվածների 85.7%-ը ֆիզիկապես կարող է օգտվել գազամատակարարումից՝ չնայած համայնքում գազամատակարարման առկայությանը, 89.3%-ը՝ ոռոգման ջրից, 72.1%-ը՝ ֆիքսված հեռախոսակապից: Բոլոր համայնքերում, այդ թվում՝ Երևանում, խնդիրներ կան տնային տնտեսության մակարդակում ինտերնետի ֆիզիկական հասանելիության հետ կապված:

²⁰ Կիրառվել է հետևյալ հարցը. «Օգտվո՞ւմ է արդյոք Ձեր ընտանիքը կամ ցանկության դեպքում ֆիզիկապես կարող է օգտվել այդ ծառայություններից»: Պատասխանների տարբերակները՝ 1. «այո», 2. «ոչ»:

Ենթակառուցվածք	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդ.
Ընդհանուր ենթակառուցվածքներ				
01 Էլեկտրամատակարարում	100.0%	99.7%	99.6%	99.7%
02 Գազամատակարարում	94.8%	96.0%	85.7%	92.3%
03 Խմելու ջրի մատակարարում	99.9%	99.0%	94.2%	97.7%
04 Ոռոգման ջուր	39.8%	44.5%	89.3%	67.8%
05 Տնային/ֆիքսված հեռախոսակապ	93.9%	91.0%	72.1%	86.3%
06 Բջջային հեռախոսակապ	98.3%	98.2%	98.8%	98.4%
07 Ինտերնետ կապ	77.1%	69.5%	59.0%	68.8%
08 Քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ	94.6%	81.5%	88.7%	89.0%
09 Միջքաղաքային / միջգյուղական տրանսպորտ	68.7%	83.5%	93.2%	80.9%
10 Աղբահանություն	98.7%	95.4%	92.0%	96.0%
11 Հեռուստահեռարձակում	98.9%	97.5%	98.9%	98.4%
12 Փողոցային լուսավորություն	-	-	-	-
Գյուղական ենթակառուցվածքներ				
13 Գյուղմթերքի իրացման կետեր	-	75.8%	83.5%	78.2%
14 Պարարտանյութի ձեռքբերման կետեր	-	49.4%	77.1%	62.0%
15 Գյուղատնտեսական տեխնիկա	-	45.1%	87.7%	73.6%
16 Սարգկենտրոնի հետ կապող ճանապարհներ	-	-	92.8%	92.8%

Աղյուսակ 43. Ենթակառուցվածքի ֆիզիկական մատչելիությունն՝ ըստ բնակավայրի տիպի:

Ամբողջ հանրապետության մասշտաբով բնակչության բավարարվածության մակարդակն առանձին ենթակառուցվածքային ծառայություններից ըստ բնակավայրի տիպի ներկայացված է Աղյուսակ 44-ում:²¹ Բավարարվածությունը ծառայության որակից առավել բարձր է տնային/ֆիքսված հեռախոսակապից (90.8%), բջջային հեռախոսակապից (89.9%), հեռուստահեռարձակումից (84.1%):

Առավել ցածր է բավարարվածությունը գյուղամիջյան ճանապարհներից (40.7%), պարարտանյութերի ձեռքբերման կետերից (54.3%) և գյուղտեխնիկայից (60.1%):

Երևանում համեմատաբար ցածր է բավարարվածությունը քաղաքային տրանսպորտի ծառայությունների վիճակից (59.8%), ինչպես նաև գազամատակարարումից (70.8%), աղբահանությունից (71.4%) և ինտերնետ կապից (72.2%):

Ըստ բարեկեցության մակարդակի՝ էական տարբերությունները հետևյալն են.

- Միջին և բարձր բարեկեցությամբ խմբերում համեմատաբար ցածր է բավարարվածության մակարդակը աղբահանությունից, քաղաքային և միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների որակից:

²¹ Կիրառվել է հետևյալ հարցը. «[Եթե Ձեր բնակավայրում ֆիզիկապես հասանելի լինեին այդ ծառայությունները, ապա ...] այդ ծառայությունները/ենթակառուցվածքները ֆինանսապես մատչելի՞ են Ձեր/Ձեր ընտանիքի համար»: Պատասխանների տարբերակներ. 1.«ընդհանրապես մատչելի չեն», 2.«ավելի շուտ մատչելի չեն», 3.«ավելի շուտ մատչելի են», 4.«վիճակից մատչելի են»: Հարցը տրվել է բոլոր հարցվողներին:

Հավանաբար, այդ արդյունքը բացատրվում է նրանով, որ առավել բարեկեցիկ խմբերն ավելի պահանջկոտ են դառնում հանրային-ենթակառուցվածքային ծառայությունների որակի նկատմամբ:

Ենթակառուցվածք	Ընդ.	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Ընդհանուր ենթակառուցվածքներ	78.4%	78.6%	79.3%	78.7%	78.9%	77.9%	77.9%
01 Էլեկտրամատակարարում	80.8%	80.6%	81.7%	80.3%	81.3%	79.7%	81.6%
02 Գազամատակարարում	73.9%	70.8%	74.5%	77.2%	72.4%	74.2%	77.1%
03 Խմելու ջրի մատակարարում	75.2%	79.5%	72.3%	73.1%	75.8%	75.8%	72.7%
04 Ոռոգման ջուր	71.6%	84.3%	75.0%	69.5%	70.8%	72.5%	72.6%
05 Տնային/ֆիքսված հեռախոսակապ	90.8%	94.3%	89.5%	85.6%	89.0%	92.2%	92.7%
06 Բջջային հեռախոսակապ	89.9%	90.7%	90.7%	88.4%	89.4%	91.7%	88.7%
07 Ինտերնետ կապ	74.2%	72.2%	77.9%	73.2%	76.4%	71.8%	74.0%
08 Քաղաքային / ներհամայնքային տրանսպորտ	70.0%	59.8%	76.8%	82.7%	74.4%	64.7%	67.4%
09 Միջքաղաքային / միջգյուղական տրանսպորտ	79.5%	73.6%	83.4%	80.1%	82.1%	76.2%	76.7%
10 Աղբահանություն	76.5%	71.4%	77.2%	84.6%	80.4%	74.2%	70.8%
11 Հեռուստահեռարձակում	84.1%	82.8%	83.9%	85.7%	82.2%	86.2%	85.8%
12 Փողոցային լուսավորություն	73.8%	83.0%	69.0%	64.0%	72.7%	75.2%	74.2%
Գյուղական ենթակառուցվածքներ	60.7%		63.3%	59.5%	58.2%	62.3%	65.7%
13 Գյուղմթերքի իրացման կետեր	74.1%		76.4%	71.3%	68.7%	78.6%	81.3%
14 Պարարտանյութի ձեռքբերման կետեր	54.3%		60.6%	52.5%	48.2%	55.1%	70.0%
15 Գյուղատնտեսական տեխնիկա	60.1%		62.7%	59.7%	58.4%	62.1%	62.8%
16 Մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներ	74.5%		74.6%	74.4%	75.6%	73.9%	71.7%
17. Գյուղամիջյան ճանապարհներ	40.7%		42.3%	39.8%	39.9%	41.6%	42.9%
Ընդամենը	69.5%		71.3%	69.1%	68.5%	70.1%	71.8%

Աղյուսակ 44. Բնակչության բավարարվածությունը ենթակառուցվածքների ծառայությունների որակից՝ ընդամենը հարցվածների մոտ, ըստ բնակավայրի տիպի և ըստ բարեկեցության:

Բնակչության ընդհանուր միջին բավարարվածությունը ենթակառուցվածքային ծառայությունների որակից բավական բարձր է՝ 69.5%: Յուրաքանչյուր տարբերություններն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության վիճակագրորեն նշանակալի չեն:

Հատկանշական է, որ գյուղական ենթակառուցվածքներից բավարարվածության մակարդակն ավելի բարձր է մարզային քաղաքներում, ինչը կարող է բացատրվել նրանով, որ այդ ենթակառուցվածքներն ավելի հասանելի են մարզային քաղաքներում, և դրանց մի մասը սպասարկում է շրջակա գյուղերի բնակչությանը:

Գյուղական ենթակառուցվածքներից բավարարվածության աստիճանը համեմատաբար ավելի բարձր է բնակչության առավել բարեկեցիկ շերտերի համար:

Սոցիալական ոլորտ

Առողջապահություն

Առողջապահության ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը ծառայությունների որակից

Զեկույցում ներկայացված են առողջապահական հիմնարկներին վերաբերող բնութագրերը միայն 2011թ.-ի համար, քանի որ դրանք չեն համընկնում 2010թ.-ի հետազոտությամբ դիտարկված առողջապահական հիմնարկների անվանացանկի հետ:²²

Տարբեր տիպի բուժհաստատությունների ֆինանսական մատչելիությունն ըստ բնակավայրի տիպի ներկայացված է Աղյուսակ 45-ում: Հայաստանում առաջնային բուժօգնությունն անվճար է, այդ պատճառով բուժկետերի, ամբուլատորիաների և պոլիկլինիկաների ֆինանսական մատչելիության՝ սպասվածից ավելի ցածր մակարդակը կարելի է բացատրել մի շարք գործոններով, որոնք չեն դիտարկվել տվյալ հետազոտությամբ, և որոնցից հավանաբար առավել նշանակալին է դեղորայքի ցածր ֆինանսական մատչելիությունը: Գյուղական ամբուլատորիաներում և բուժկետերում բուժման գինը հարցվածները գնահատում են բուժման համար իրենց կատարած ծախսերով, և քանի որ դեղորայքի ծախսերը (բացի բնակչության որոշ կատեգորիաներին տրամադրվող և, որպես կանոն, բավական էժան դեղորայքից) հարցվածները ներառում են տվյալ բուժհաստատությունում բուժման ծախսերում, այդ պատճառով նվազում է նաև գյուղական բուժկետերում և ամբուլատորիաներում բուժման ֆինանսական մատչելիությունը: Չի բացառվում նաև, որ այդ բուժհաստատություններում բնակչությունը կատարում է նաև այլ հավելյալ ծախսեր:

Բնակչության համար բժշկական ծառայություններից օգտվելիս ֆինանսական մատչելիությունն առավել բարձր է առաջնային օղակում: Երևանում պոլիկլինիկաները ֆինանսապես մատչելի են բնակչության 73.8%-ի համար, քաղաքներում՝ 66.0%-ի, իսկ գյուղերում՝ 49.2%-ի համար (Աղյուսակ 45): Վերջինը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գյուղաբնակները նեղ մասնագիտական պոլիկլինիկական ծառայություններ ստանալու համար հաճախում են մոտակա քաղաքների պոլիկլինիկաներ, որոնց կցված են իրենց համայնքների ամբուլատորիաները:

²² Հարկ է նկատ, որ բուժհիմնարկների տեսակների նույնականացումը տեխնիկապես դժվարացել է, քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունենում առողջապահության ոլորտի օպտիմալացում, որի շրջանակներում բուժհիմնարկները վերակազմավորվում են: Դրա հետևանքով, տարբեր տարիներին իրականացվող հետազոտություններում կարող է առաջանալ անհամադրելիություն: Բացի դրանից, բնակչությունը երբեմն տեղյակ չի լինում, որ բուժհիմնարկը, որի մասին նա տեղեկություններ է հայտնում, փոխել է իր տեսակը, օրինակ՝ մարզային քաղաքում պոլիկլինիկան վերածվել է բժշկական կենտրոնի:

Բուժհաստատություն	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
01 Բուժկետ	-	-	65.8%	65.8%
02 Ամբուլատորիա	-	-	56.4%	56.4%
03 Պոլիկլինիկա	73.8%	66.0%	49.2%	63.2%
04 Ատամնաբուժարան	36.9%	42.6%	39.2%	39.4%
05 Մասնավոր բժշկական կենտրոն	21.0%	28.0%	26.9%	25.1%
06 Հիվանդանոց	23.3%	35.8%	29.6%	29.2%
07 Դիագնոստիկ / ախտորոշման կենտրոն	24.8%	30.4%	27.6%	27.4%
08 Ծննդատուն	65.5%	68.5%	54.8%	62.6%
09 Մանկական բժշկական / վերականգնողական կենտրոն	52.0%	55.4%	46.9%	51.0%
10 Պլաստիկ վիրաբուժության կենտրոն	15.1%	19.7%	21.5%	18.9%
11 «Վիժն» գրասենյակ ²³	25.0%	29.0%	27.0%	27.1%
12 Զինական / արևելյան / ոչ ավանդական բժշկական կենտրոն կամ մասնագետ	16.9%	20.5%	18.2%	18.4%
13 Բուսաբուժություն / ժողովրդական բժշկություն (հեքիմ)	41.4%	46.7%	41.9%	43.1%

Աղյուսակ 45 Բուժհաստատությունների ֆինանսական մատչելիությունը:

Բավական բարձրացել է ծննդատների ֆինանսական մատչելիությունը, որը բացատրվում է ծննդաբերության պետական ֆինանսավորման նոր կարգի ներդրմամբ: Ֆինանսական մատչելիության մակարդակով երրորդն է մանկական վերականգնողական կենտրոնը: Գյուղական բնակավայրերում առավել մատչելի են ամբուլատորիաներն ու բուժկետերը:

Բավական ցածր է հիվանդանոցների ֆինանսական մատչելիությունը, հատկապես՝ երևանաբնակների տեսակետից (23.3%): Ցածր ֆինանսական մատչելիություն ունեն նաև մասնավոր բժշկական կենտրոնները (25.1%) և դիագնոստիկ կենտրոնները (27.4%): Ատամնաբուժարանները ֆինանսապես մատչելի են բնակչության 39.4%-ի համար:

Բուժհաստատությունների ծառայություններից բավարարվածությունն ըստ բնակավայրի տրված է Աղյուսակ 46-ում, իսկ ըստ բարեկեցության՝ Աղյուսակ 47-ում: Բուժհաստատությունների ծառայություններից միջին բավարարվածությունը 79.2% է: Նկատի ունենալով ավանդական բուժօգնություն տրամադրող բուժհաստատությունները՝ բավարարվածությունը բուժհաստատություններում ստացած ծառայությունների որակից տատանվում է լայն միջակայքում՝ [71.0%; 87.4%]: Բնակչությունն առավել բավարարված է ծննդատների (87.4%) և մանկական վերականգնողական կենտրոնների (84.7%) ծառայություններից: Հիվանդանոցների և պոլիկլինիկաների ծառայությունների որակից բավարարված են համապատասխանաբար 74.2%-ը և 71.0%-ը: Որպես կանոն, բուժհաստատությունների ծառայությունների որակից նվազ բավարարված են երևանաբնակները:

Հարկ է ուշադրություն դարձնել «Վիժն» կազմակերպության և պլաստիկ վիրաբուժության կենտրոնների գործունեությանը, որոնց ծառայությունների որակից բավարարվածությունը բավականաչափ տարբերվում է մի կողմից՝ Երևանում, իսկ մյուս կողմից՝ մարզային քաղաքներում և գյուղերում:

²³ Զշփոթել «World Vision» միջազգային կազմակերպության հետ:

Բուժհաստատություն	Երևան	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
01 Բուժկետ	-	-	77.6%	77.2%
02 Ամբուլատորիա	-	-	80.2%	79.8%
03 Պոլիկլինիկա	68.2%	72.6%	74.0%	71.0%
04 Ատամնաբուժարան	83.6%	80.1%	81.6%	81.8%
05 Մասնավոր բժշկական կենտրոն	73.6%	86.3%	83.3%	79.6%
06 Հիվանդանոց	72.8%	76.9%	73.5%	74.2%
07 Դիագնոստիկ / ախտորոշման կենտրոն	77.5%	81.7%	79.1%	79.0%
08 Ծննդատուն	92.2%	75.7%	92.8%	87.4%
09 Մանկական բժշկական / վերականգնողական կենտրոն	73.6%	89.5%	91.5%	84.7%
10 Պլաստիկ վիրաբուժության կենտրոն	66.7%	100.0%	80.0%	77.3%
11 «Վիժն» գրասենյակ	42.9%	100.0%	100.0%	60.0%
12 Զինական / արևելյան / ոչ ավանդական բժշկական կենտրոն կամ մասնագետ	33.3%	-	-	33.3%
13 Բուսաբուժություն / ժողովրդական բժշկություն (հեքիմ)	53.1%	63.6%	82.4%	63.3%
Միջին բավարարվածությունը (հաշվարկված է 01-10 կետերի համար)	76.0%	82.9%	81.4%	79.2%

Աղյուսակ 46. Բուժհաստատությունների ծառայությունների որակից բավարարվածությունը:

Բուժհաստատություն	Ցածր	Միջին	Բարձր
01 Բուժկետ	77.1%	76.6%	79.0%
02 Ամբուլատորիա	78.4%	81.3%	82.8%
03 Պոլիկլինիկա	71.8%	72.2%	67.1%
04 Ատամնաբուժարան	79.4%	86.5%	80.6%
05 Մասնավոր բժշկական կենտրոն	81.6%	79.1%	77.5%
06 Հիվանդանոց	74.0%	75.5%	72.8%
07 Դիագնոստիկ / ախտորոշման կենտրոն	79.8%	79.1%	77.6%
08 Ծննդատուն	83.2%	93.0%	87.3%
09 Մանկական բժշկական / վերականգնողական կենտրոն	79.7%	91.3%	86.7%
10 Պլաստիկ վիրաբուժության կենտրոն	76.9%	66.7%	83.3%
11 «Վիժն» գրասենյակ	100.0%	50.0%	60.0%
12 Զինական / արևելյան / ոչ ավանդական բժշկական կենտրոն կամ մասնագետ	50.0%	-	33.3%
13 Բուսաբուժություն / ժողովրդական բժշկություն (հեքիմ)	70.4%	41.2%	75.0%
Միջին բավարարվածությունը (հաշվարկված է 01-10 կետերի համար)	78.2%	80.1%	79.5%

Աղյուսակ 47. Բուժհաստատությունների ծառայությունների որակից բավարարվածությունն ըստ բարեկեցության:

Բնակչության հոգեվիճակը

Հետազոտության շրջանակներում անձի հոգեվիճակը նույնպես համարվել է նրա կյանքի որակի բաղկացուցիչ մասը: Ուսումնասիրվել է, թե ինչ հոգեվիճակներում են ապրում հարցվածները²⁴:

Հարցվածների համեմատաբար ավելի մեծ հատվածն ունի ավելի շատ դրական, քան՝ բացասական հոգեվիճակներ: Մասնավորապես, 63.9%-ը «հաճախ» կամ «միշտ» հույսով է լցված ապագայի նկատմամբ, 60.7%-ն ունենում է ուրախության զգացողություն, իսկ 62.9%-ը՝ լավ տրամադրություն (Աղյուսակ 48): Հոգեվիճակների պրոֆիլները Երևանում, մարզային քաղաքներում և գյուղերում միմյանցից էականորեն չեն տարբերվում:

²⁴ Բնակչության շրջանում տարբեր հոգեվիճակների տարածվածությունը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «Նշեք, խնդրեմ, որքան հաճախ եք ունենում հետևյալ զգացողությունները»: Պատասխանների տարբերակներն են. 1. «երբեք» 2. «երբեմն», 3. «հաճախ», 4. «միշտ»:

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել է բացասական հոգեվիճակների տարածվածությունը (Աղյուսակ 48):

Տարիքի աճին զուգահեռ նվազում է դրական հոգեվիճակների տարածվածությունը և աճում է բացասական հոգեվիճակներինը (Աղյուսակ 49), բացառությամբ զայրույթի/բարկության, որը տարիքի հետ նվազում է:

Հոգեվիճակ	Ունեն զգացողությունը «հաճախ» կամ «միշտ», 2011թ.	Ունեն զգացողությունը «հաճախ» կամ «միշտ», 2010թ.	Փոփո- խությունը «2011» - «2010»
01 Հույսով եք լցված ապագայի նկատմամբ	63.9%	67.3%	-3.4%
02 Լավ տրամադրություն	62.9%	63.5%	-0.6%
03 Ուրախություն	60.7%	62.9%	-2.2%
13 Արտաքին տեսքից բավարարվածություն	56.0%		
04 Անհանգստություն	54.5%	60.7%	-6.2%
05 Անորոշություն, խճճվածություն	46.2%	45.4%	0.8%
06 Միայնակության զգացողություն	27.2%	27.1%	0.1%
07 Մեղքի, մեղավորության զգացողություն	12.3%	16.3%	-4.0%
08 Զայրույթ, բարկություն	41.6%	47.6%	-6.0%
09 Անքնություն	34.7%	41.7%	-7.0%
10 Հուսալքվածություն	24.2%	26.9%	-2.7%
11 Ինքնավստահության պակաս/ րնկվածություն	23.0%	25.5%	-2.5%
12 Դուք արդեն այնպիսին չեք, ինչպիսին նախկինում էիք	52.0%	62.3%	-10.3%

Աղյուսակ 48. Հոգեվիճակները 2010 և 2011թթ.:

Հոգեվիճակ	18-24	25-34	35-44	45-54	55-64	65 <
01 Հույսով եք լցված ապագայի նկատմամբ	77.6%	68.1%	57.7%	62.4%	55.1%	48.8%
02 Լավ տրամադրություն	83.0%	73.0%	57.8%	54.6%	45.8%	45.4%
03 Ուրախություն	81.0%	69.1%	58.9%	51.9%	42.8%	43.1%
13 Արտաքին տեսքից բավարարվածություն	78.3%	66.6%	52.2%	45.6%	37.6%	36.5%
04 Անհանգստություն	43.6%	52.2%	57.5%	56.3%	63.6%	61.5%
05 Անորոշություն, խճճվածություն	38.0%	44.6%	49.4%	50.7%	48.5%	46.9%
06 Միայնակության զգացողություն	23.8%	22.2%	27.3%	30.7%	29.0%	38.8%
07 Մեղքի, մեղավորության զգացողություն	12.4%	11.3%	12.9%	12.7%	11.0%	14.7%
08 Զայրույթ, բարկություն	44.1%	45.1%	44.0%	39.2%	36.2%	34.6%
09 Անքնություն	21.1%	31.2%	36.1%	40.2%	45.2%	43.0%
10 Հուսալքվածություն	14.0%	20.1%	23.6%	29.6%	32.4%	33.8%
11 Ինքնավստահության պակաս/ րնկվածություն	14.0%	20.0%	23.1%	27.4%	29.4%	32.0%
12 Դուք արդեն այնպիսին չեք, ինչպիսին նախկինում էիք	45.2%	46.2%	48.8%	56.4%	60.9%	68.5%

Աղյուսակ 49. Հոգեվիճակներն ըստ տարիքի, 2011թ.:

Կանայք ավելի հաճախ են ունենում դրական հոգեվիճակներ և ավելի քիչ՝ բացասական հոգեվիճակներ, քան տղամարդիկ (Աղյուսակ 50): Նրանք շատ ավելի հաճախ են ունենում լավ տրամադրություն, ուրախություն զգում, բավարարված են լինում իրենց արտաքին տեսքից:

Մյուս կողմից, պակաս անհանգիստ են, ավելի հազվադեպ են ունենում անորոշության զգացողություն, հուսալքություն, ինքնավստահության պակաս և միայնակության զգացողություն:

Հոգեվիճակ	Արական	Իգական	«Ար» - «Իգ.»
01 Հույսով եք լցված ապագայի նկատմամբ	33.3%	38.6%	-5.3%
02 Լավ տրամադրություն	31.4%	42.2%	-10.8%
03 Ուրախություն	33.5%	44.6%	-11.1%
13 Արտաքին տեսքից բավարարվածություն	36.1%	50.9%	-14.8%
04 Անհանգստություն	51.7%	39.9%	11.8%
05 Անորոշություն, խճճվածություն	61.0%	47.4%	13.6%
06 Միայնակության զգացողություն	76.8%	69.3%	7.5%
07 Մեղքի, մեղավորության զգացողություն	87.0%	88.4%	-1.4%
08 Զայրույթ, բարկություն	58.1%	58.7%	-0.6%
09 Անքնություն	69.0%	61.9%	7.1%
10 Հուսալքվածություն	80.9%	71.3%	9.6%
11 Ինքնավստահության պակաս/ ընկճվածություն	81.2%	73.1%	8.1%
12 Դուր արդեն այնպիսին չեք, ինչպիսին նախկինում էիք	52.5%	43.9%	8.6%

Աղյուսակ 50. Հոգեվիճակներն ըստ սեռի:

Հիվանդագին վիճակների ախտանիշներ

Բնակչության ֆիզիկական առողջության անուղղակի ցուցանիշներ են հիվանդագին վիճակների ախտանիշները: Հետազոտության ընթացքում դրանք ուումնասիրվել են հետևյալ հարցի միջոցով. «Արդյո՞ք նոյեմբեր [նախորդ] ամսվա ընթացքում ունեցել եք հետևյալ ախտանիշները»: Գնահատվել է հետևյալ ախտանիշների տարածվածությունը.

1. ցավեր կրծքավանդակում՝ քայլելիս կամ այլ շարժումներ կատարելիս,
2. հոդացավ,
3. մեջքի ցավ,
4. վզի (պարանոցի) / ուսերի ցավ,
5. ոտքերի այտուցվածություն,
6. երակների վարիկոզ լայնացում,
7. մաշկային հիվանդություններ,
8. փորկապություն,
9. գլխացավ,
10. անքնություն,
11. հոգեկան խիստ ընկճվածություն՝ դեպրեսիա,
12. ատամնացավ:

Այս ախտանիշներից մի քանիսը ուղղակիորեն սահմանում են որոշակի հիվանդություն, իսկ այլ ախտանիշներ ազդանշանում են որոշակի հիվանդությունների հավանական առկայության մասին: Մասնավորապես, ցավերը կրծքավանդակում կարող են ազդանշանել սրտի հավա-

նական հիվանդության (ստենոկարդիա) մասին, հոդացավ հիվանդություն է, մեջքի ցավը կարող է ազդանշանել ողնաշարային ճողվածքի կամ ռադիկուլիտի մասին, ոտքերի այտուցվածությունը կարող է ազդանշանել երկամների հիվանդության մասին, երակների վարիկոզ լայնացումը հիվանդություն է, փորկապությունը, գլխացավը, անքնությունը, դեպրեսիան ազդանշանում են առողջության խանգարումներ, որոնք պետք է լրացուցիչ ախտորոշել:

Հայաստանի բնակչության շրջանում հիվանդագին վիճակների ախտանիշները բավական տարածված են (Աղյուսակ 51): Հատկապես տարածված է գլխացավը (հարցվածների 70.3%-ի մոտ): Բնակչության կեսից ավելին ունեցել են մեջքի ցավ (58.5%), հոդացավ (54.9%), անքնություն (53.7%): Հոգեկան խիստ ընկճվածություն (դեպրեսիա) են ունեցել հարցվածների 40.1%-ը:

Վերջին ամսվա ընթացքում ի հայտ եկած ախտանիշներ	Ընդ.	Տարիք			Սեռ		Բնակավայրի տիպ		
		18-30	31-60	60 <	Ար.	Իգ.	Երևան	Քաղաք	Գյուղ
01 ցավեր կրծքավանդակում՝ քայլելիս կամ այլ շարժումներ կատարելիս	37.9%	26.1%	46.2%	51.1%	38.9%	36.8%	38.1%	36.6%	38.8%
02 հոդացավ	54.9%	38.0%	67.6%	71.6%	61.5%	47.6%	57.9%	54.3%	52.4%
03 մեջքի ցավ	58.5%	49.4%	66.6%	62.2%	65.1%	51.1%	61.2%	55.6%	58.2%
04 վզի (պարանոցի) / ուսերի ցավ	44.7%	32.8%	53.1%	58.7%	52.3%	36.3%	49.2%	41.9%	42.6%
05 ոտքերի այտուցվածություն	22.6%	13.0%	27.2%	41.8%	27.5%	17.0%	21.4%	21.1%	25.0%
06 երակների վարիկոզ լայնացում	18.2%	9.7%	22.5%	34.8%	23.9%	11.8%	19.4%	15.8%	19.1%
07 մաշկային հիվանդություններ	7.5%	6.4%	8.3%	8.4%	8.1%	6.9%	6.9%	7.5%	8.1%
08 փորկապություն	12.6%	10.5%	12.4%	21.8%	16.3%	8.5%	15.8%	11.3%	10.5%
09 գլխացավ	70.3%	70.1%	72.0%	64.4%	79.9%	59.6%	73.3%	68.8%	68.5%
10 անքնություն	53.7%	42.5%	62.4%	63.2%	59.1%	47.7%	57.0%	53.2%	50.7%
11 հոգեկան խիստ ընկճվածություն՝ դեպրեսիա	40.1%	31.0%	47.9%	44.8%	47.4%	31.9%	41.5%	39.0%	39.4%
12 ատամնացավ	39.1%	39.6%	41.1%	28.9%	41.8%	36.0%	33.0%	41.9%	42.8%

Աղյուսակ 51. Հիվանդագին ախտանիշների տարածվածությունը:

Առավելապես ավելի երիտասարդ խմբի (18-30 տարեկան) ախտանիշներն են ատամնացավն ու գլխացավը: Մնացած ախտանիշները նշանակալի տարածված են ավելի բարձր տարիքային խմբերում: Հարկ է նշել, որ 31-60 և 60-ից բարձր տարիքային խմբերում ախտանիշների տարածվածության տարբերությունները շատ մեծ չեն, բացի ոտքերի այտուցվածությունից, երակների վարիկոզ լայնացումից և փորկապությունից:

Բոլոր դիտարկված ախտանիշներն ավելի տարածված են տղամարդկանց, քան՝ կանանց մոտ: Տղամարդկանց մոտ՝ կանանց համեմատ, հատկապես ավելի տարածված է գլխացավը (տարածվածությունն ավելի է 20.3%-ով), վզի և պարանոցի ցավերը (16.0%-ով), հոգեկան խիստ ընկճվածությունը (15.5%-ով), մեջքի ցավը (14.0%-ով), հոդացավը (13.9%-ով):

Ըստ բնակավայրի տիպերի՝ գյուղերում ավելի շատ է տարածված ոտքերի այտուցվածությունն ու ատամնացավը: Մնացած ախտանիշները, որպես կանոն, ավելի տարածված են Երևանում:

Հիգիենա

Բնակչության առողջության ուսումնասիրության շրջանակում դիտարկվել է հիգիենայի և մարմնամարզության հետևյալ օբյեկտների առկայությունը, օգտագործումը և ֆինանսական մատչելիությունը.

1. վարսավիրանոց,
2. մարզասրահ (ֆիթնես ակումբ, լողավազան, յոգա և այլն),
3. մերսումների սրահ,
4. մատնահարդարում*,
5. դիմահարդարում (կոսմետոլոգիա)*,
6. պեդիկյուր*:

Բնակչության համար ֆիզիկապես առավել մատչելի է վարսավիրանոցը. այն առկա է հարցվածների 83.5%-ի համայնքերում (Աղյուսակ 52): Բավական տարածված են նաև մատնահարդարման (70.5%), դիմահարդարման (68.3%) և պեդիկյուրի (67.5%) սրահները: Հարկ է նշել, որ այդ սրահների առկայությունը կարևորողների քանակն ավելի փոքր է, քան դրանց առկայության մասին տեղյակ անձանց քանակը, ինչը չի կարելի ասել մարզասրահների մասին, որոնց առկայությունը կարևորել են հարցվածների 65.9%-ը, սակայն նշել են, որ առկա է իրենց համայնքներում միայն 59.4%-ը:

Անձնական հիգիենայի ծառայություններ	Առկա է համայնքում	Կարևոր է	Օգտվում են սեփ. բնակավայրից	Օգտվում են այլ. բնակավայրից	Չեն օգտվում	Ֆին. մատչելի է
01 Վարսավիրանոց	83.5%	86.0%	67.8%	15.5%	16.7%	73.5%
02 Մարզասրահ (ֆիթնես ակումբ, լողավազան, յոգա և այլն)	59.4%	65.9%	10.7%	4.3%	85.0%	27.9%
03 Մերսումների սրահ	39.1%	62.1%	4.3%	3.6%	92.1%	18.4%
04 Մատնահարդարում*	70.5%	58.2%	20.0%	6.7%	73.4%	34.6%
05 Դիմահարդարում (կոսմետոլոգիա)*	68.3%	57.3%	13.8%	5.4%	80.8%	29.0%
06 Պեդիկյուր*	67.5%	51.5%	12.5%	4.6%	82.9%	27.7%

Աղյուսակ 52. Անձնական հիգիենայի ծառայությունների առկայությունը և մատչելիությունը
(* – մատնահարդարում, դիմահարդարում և պեդիկյուրը հարցվել է միայն կանանց)

Բացի վարսավիրանոցից, որից օգտվում են հարցվածների 83.3%-ը, հիգիենայի և մարմնամարզության սրահներից օգտվում է բնակչության բավական փոքր հատվածը: Մասնավորապես, մարմնամարզական սրահից չեն օգտվում հարցվածների 84.5%-ը: Ընդ որում, ֆինանսական անմատչելիությունը դրա միակ գործոնը չէ: Օրինակ, մարմնամարզական սրահը մատչելի է հարցվածների 27.9%-ի համար, սակայն դրանից օգտվում են հարցվածների 15.0%-ը, մերսումների սրահը ֆինանսապես մատչելի է 18.4%-ի համար, սակայն դրանից օգտվում են հարցվածների 7.9%-ը:

Կրթություն

Կրթության ոլորտի ուսումնասիրության հիմնական առանձնահատկությունն այն է, որ ոլորտի ծառայություններից օգտվում է ոչ ամբողջ բնակչությունը (ինչպես օրինակ՝ առողջապահության ոլորտից): Ընդ որում, նախադպրոցական և դպրոցական տարիքի համար նախատեսված հաստատությունների վերաբերյալ հարցվողներն ունեն անուղղակի տեղեկացվածություն: Բացի այդ, բնակչության նշանակալի մասը կոմպետենտ չէ կրթության որակի վերաբերյալ իր դատողություններում (այնպես, ինչպես և առողջապահության ոլորտում):

Կրթական հաստատությունների հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող հարցվածների քանակը տրված է Աղյուսակ 53-ում: Տնային տնտեսությունների 31.9%-ի անդամները հաճախում են հիմնական դպրոց (1-9 դասարաններ), 18.0%-ի անդամները՝ պետական բուհեր (մասնավոր բուհեր են հաճախում տնային տնտեսությունների 2.4%-ի անդամները), ավագ դպրոցից օգտվում են հարցված տնային տնտեսությունների 9.9%-ի անդամները: Մասնկապարտեզ են հաճախում տնային տնտեսությունների 9.8%-ի երեխաները:

Կրթական հիմնարկ	Օգտվում են	Այդ թվում՝ սեփական բնակավայրում	Ֆինանսական մատչելիություն
01 Պետական մանկապարտեզ	9.8%	92.8%	74.7%
02 Մասնավոր մանկապարտեզ	1.1%	85.0%	71.4%
03 Հիմնական դպրոց (1-9 դասարաններ)	31.9%	97.6%	62.7%
04 Ավագ դպրոց (10-12 դասարաններ)	9.9%	96.4%	64.9%
05 Մասնավոր դպրոց	0.6%	100.0%	45.5%
06 Դպրոց արտասահմանում	0.2%		50.0%
07 Հատուկ դպրոց (հատուկ կարիքներով երեխաների համար)	-	100.0%	100.0%
08 Միջին մասնագիտական հաստատություն / ուսումնարան	1.8%	45.7%	51.4%
09 Քոլեջ, վարժարան	4.4%	61.6%	58.6%
10 Մասնագիտական ուսուցման կենտրոն	0.4%	87.5%	75.0%
11 Պետական բուհ	18.0%	53.0%	42.3%
12 Մասնավոր բուհ	2.4%	63.0%	48.9%
13 Բուհ արտասահմանում	0.4%		100.0%
Հաստատության գտնվելու վայրը և ֆինանսական մատչելիությունը հաշվարկված են տվյալ հաստատությունից օգտվողների քանակից:			

Աղյուսակ 53. Կրթական հաստատություններից օգտվելը և ֆինանսական մատչելիությունը:

Ֆինանսական մատչելիության տեսակետից առավել մատչելի են պետական մանկապարտեզները և մասնագիտական ուսուցման կենտրոնները: Առաջինը բացատրվում է պետական մանկապարտեզներում մատչելի վարձավճարներով, իսկ երկրորդ դեպքում ցուցանիշը բարձր է, քանի որ այդպիսի կենտրոններ հաճախում են հիմնականում վճարունակ անձինք:

Հարկ է նշել, որ հիմնական և ավագ դպրոցներում ուսումը ֆինանսապես մատչելի է բնակչության մոտ $\frac{2}{3}$ -ի համար, որը, հավանաբար, կարելի է բացատրել այդ հաստատություններում անուղղակի ծախսերի բարձր մակարդակի հետ: Բացի դրանից, 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ

նշանակալիորեն նվազել է հանրակրթական հաստատություններում սովորելու ֆինանսական մատչելիությունը: Մասնավորապես, հիմնական և ավագ դպրոցները ֆինանսապես մատչելի համարող հարցվածների քանակը նվազել է 17.0%-ով (այդ դպրոցներում սովորող երեխա ունեցող ընտանիքների քանակից), մասնավոր դպրոցների դեպքում այդ ցուցանիշը 27.3% է, իսկ քոլեջների դեպքում՝ 8.1% (Աղյուսակ 54):

Կրթական հիմնարկ	Օգտվում են 2011թ.	Օգտվում են 2010թ.	Ֆին. մատ-չելիություն 2011թ.	Ֆին. մատ-չելիություն 2010թ.	Ֆին. մատ-չելիություն «2011» - «2010»
01 Պետական մանկապարտեզ	9.8%	12.2%	74.7%	79.9%	-5.2%
02 Մասնավոր մանկապարտեզ	1.1%	1.4%	71.4%	71.4%	0.0%
03 Հիմնական դպրոց (1-9 դասարաններ)	31.9%	30.8%	62.7%	79.7%	-17.0%
04 Ավագ դպրոց (10-12 դասարաններ)	9.9%	10.5%	64.9%	81.9%	-17.0%
05 Մասնավոր դպրոց	0.6%	1.1%	45.5%	72.8%	-27.3%
06 Դպրոց արտասահմանում	0.2%		50.0%		
07 Հատուկ դպրոց (հատուկ կարիքներով երեխաների համար)	-	-	100.0%	100.0%	0.0%
08 Միջին մասնագիտական հաստատություն/ուսումնարան	1.8%		51.4%		
09 Քոլեջ, վարժարան	4.4%	7.5%	58.6%	66.7%	-8.1%
10 Մասնագիտական ուսուցման կենտրոն	0.4%	1.6%	75.0%	72.3%	2.7%
11 Պետական բուհ	18.0%	31.3%	42.3%	45.6%	-3.3%
12 Մասնավոր բուհ	2.4%	4.8%	48.9%	53.1%	-4.2%
13 Բուհ արտասահմանում	0.4%		100.0%		

Աղյուսակ 54. Կրթական հաստատություններից օգտվելը 2011 և 2010թթ.:

Բավական մեծածավալ հարցախմբով ուսումնասիրվել է կրթական հաստատություններում ծառայությունների որակի տարբեր ասպեկտներից բնակչության բավարարվածության մակարդակը: Ընդ որում, դիտարկվել է բավարարվածությունը ուսումնական հաստատություններում.

1. դաստիարակների/ուսուցիչների/ դասախոսների որակից,
2. շենքային պայմաններից,
3. խաղային նյութերից/դասագրքերից/գրադարանից,
4. տեխնիկական ապահովվածությունից (լաբորատորիաներ, համակարգչային սրահներ, ինտերնետ),
5. ճաշարանից/սննդի կետից,
6. սանհանգույցից,
7. մարմնամարզական/սպորտային պայմաններից,
8. տրվող կիրառական գիտելիքների մակարդակից, որոնք անհրաժեշտ են նախընտրած աշխատանքի ընդունվելու համար,
9. կիրառական գիտելիքների մակարդակից, որոնք անհրաժեշտ են ցանկացած աշխատանքի ընդունվելու համար,
10. մասնագիտական աճին նպաստող արտալսարանային գործունեությունից (պրակտիկա, գիտաժողովներ, սեմինարներ):

Դիտարկված ասպեկտների վերաբերյալ հարցերը կամ դրանց տարբերակները տրվել են միայն համապատասխան ուսումնական հաստատությունների համար (Աղյուսակ 55):

Կրթական հիմնարկ	Պատ. №	01	02	03	04	05	06	07	08	09	10
01 Պետական մանկապարտեզ	192	89.1%	71.6%	71.7%		80.8%	72.9%	65.0%			
02 Մասնավոր մանկապարտեզ	22	95.5%	85.0%	85.7%		80.0%	94.4%	66.7%			
03 Հիմնական դպրոց (1-9 դասարան.)	626	83.2%	82.1%	76.5%	69.2%	59.2%	64.6%	71.2%			
04 Ավագ դպրոց (10-12 դասարաններ)	193	75.1%	76.0%	77.4%	71.9%	54.1%	61.0%	68.8%			
05 Մասնավոր դպրոց	11	60.0%	63.6%	63.6%	66.7%	44.4%	44.4%	40.0%			
06 Դպրոց արտասահմանում	2	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%			
07 Հատուկ դպրոց (հատուկ կարիքներով երեխաների համար)	1	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	-	100.0%			
08 Միջին մասնագիտական հաստատություն/ուսումնարան	31	90.3%	82.4%	80.6%	69.0%	71.4%	80.6%	78.6%	78.1%	64.5%	87.5%
09 Քոլեջ, վարժարան	85	89.4%	67.9%	74.7%	61.4%	48.4%	63.2%	59.4%	78.1%	69.9%	55.2%
10 Մասնագիտական ուսուցման կենտրոն	7	71.4%	87.5%	71.4%	87.5%	42.9%	85.7%	40.0%	100.0%	75.0%	83.3%
11 Պետական բուհ	338	71.9%	80.1%	78.5%	73.7%	66.3%	67.2%	74.8%	76.5%	72.8%	76.8%
12 Մասնավոր բուհ	45	80.0%	80.4%	73.2%	70.7%	58.3%	76.3%	65.0%	74.4%	71.4%	73.7%
13 Բուհ արտասահմանում	4	100.0%	75.0%	100.0%	75.0%	75.0%	75.0%	100.0%	100.0%	33.3%	100.0%

Տրված են հետևյալ հարցերին տրված դրական պատասխանների տոկոսները. «Որքանո՞վ եք բավարարված.

01 ... այդ հաստատություններում դաստիարակների/ուսուցիչների/ դասախոսների որակից:

02 ... այդ ուսումնական հաստատություններում շենքային պայմաններից:

03 ... այդ ուսումնական հաստատություններում խաղային նյութերից/դասագրքերից/ գրադարանից:

04 ... այդ ուսումնական հաստատություններում տեխնիկական ապահովվածությունից՝ լաբորատորիաներ, համակարգչային սրահներ, ինտերնետ:

05 ... այդ ուսումնական հաստատություններում առկա ճաշարանից/սննդի կետից:

06 ... այդ ուսումնական հաստատություններում սանհանգույցից:

07 ... այդ ուսումնական հաստատություններում մարմնամարզական / սպորտային պայմաններից:

08 ... այդ ուսումնական հաստատություններում տրվող կիրառական գիտելիքների մակարդակից, որոնք անհրաժեշտ են նախընտրած աշխատանքի ընդունվելու համար:

09 ... այդ ուսումնական հաստատություններում՝ կիրառական գիտելիքների մակարդակից, որոնք անհրաժեշտ են ցանկացած (այլ) աշխատանքի ընդունվելու համար:

10 ... այդ ուսումնական հաստատություններում՝ մասնագիտական աճին նպաստող արտալսարանային գործունեությունից՝ պրակտիկա, գիտաժողովներ, սեմինարներ:

Տոկոսները հաշվարկված են տվյալ տիպի հաստատություններից օգտվողների քանակներից:

Կարմրավուն գույնով տրված են այն տողերը, որոնց տվյալները թույլ են տալիս որևէ պատկերացում կազմել բավարարվածության մակարդակի վերաբերյալ: Մասնավորապես, 01 սյան տողերի համար՝ $N = 192$ պատասխանների դեպքում վիճակագրական նշանակալիության մակարդակն է $\Delta = \pm 4.43$; եթե $N = 626$, ապա $\Delta = \pm 2.94$; եթե $N = 85$, ապա $\Delta = \pm 6.65$; եթե $N = 338$, ապա $\Delta = \pm 4.97$:

Աղյուսակ 55. Կրթական հիմնարկների որակի ցուցանիշներից բավարարվածությունը:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ.

- **Ուսուցիչների/դաստիարակների որակից** բավարարվածությունը համեմատաբար բարձր է պետական մանկապարտեզներում, քոլեջներում և հիմնական դպրոցներում, համեմատաբար ցածր է ավագ դպրոցներում և պետական բուհերում:
- **Շենքային պայմաններից** բավարարվածությունը համեմատաբար բարձր է հիմնական դպրոցներում և պետական բուհերում և համեմատաբար ցածր է քոլեջներում, պետական մանկապարտեզներում և ավագ դպրոցներում:
- **Խաղային նյութերից/դասագրքերից/գրադարաններից** բավարարվածությունը համեմատաբար բարձր է պետական բուհերում, հիմնական և ավագ դպրոցներում և համեմատաբար ավելի ցածր՝ պետական մանկապարտեզներում և քոլեջներում:

- **Տեխնիկական ապահովվածությունից** բավարարվածությունը համեմատաբար բարձր է պետական բուհերում, հիմնական և ավագ դպրոցներում և համեմատաբար ցածր՝ քոլեջներում:
- **Մանկի կետերից/ճաշարաններից** բավարարվածությունը համեմատաբար բարձր է պետական մանկապարտեզներում և համեմատաբար ցածր՝ քոլեջներում, հիմնական և ավագ դպրոցներում:
- **Սանհանգույցների վիճակից** բավարարվածությունը բոլոր հաստատություններում էլ հավասարաչափ ցածր է:
- **Մարմնամարզական, սպորտային պայմաններից** բավարարվածությունը բավական ցածր է քոլեջներում, համեմատաբար բարձր է մնացած հաստատություններում:
- **Տրվող կիրառական գիտելիքների մակարդակից** բավարարվածության աստիճանը միևնույնն է պետական բուհերում և քոլեջներում:
- **Ընդհանուր գիտելիքների մակարդակից** բավարարվածությունը համեմատաբար ցածր է քոլեջներում և համեմատաբար բարձր՝ պետական բուհերում:
- **Արտալսարանային գործունեության մակարդակից** բավարարվածությունը ցածր է քոլեջներում և համեմատաբար բարձր՝ պետական բուհերում:

Սոցիալական միջավայր (շփումներ)

Որպես սոցիալական ոլորտում կյանքի որակի ենթաոլորտ՝ հետազոտությամբ ուսումնասիրվել են Հայաստանի բնակչության շրջանում սոցիալական շփումները, մասնավորապես.

- ընտանիքի անդամների,
- հարազատների և բարեկամների,
- ընկերների,
- հարևանների,
- աշխատակիցների հետ:

Հարցվածների բացարձակ մեծամասնության համար բոլոր դիտարկված սոցիալական շփումները կարևոր են (Աղյուսակ 56), իսկ ընտանիքի անդամների, հարազատների և բարեկամների, ընկերների հետ շփումները կարևոր են հարցվածների 97% և ավելի հատվածի համար:

Մյուս կողմից, բնակչության մի ստվար հատվածը ոչ ինտենսիվ շփումներ ունի հարևանների և ընկերների հետ: Հարցվածների 7.2%-ը չի շփվում իր հարևանների հետ, իսկ հազվադեպ է շփվում՝ 19.3%-ը, ընկերների հետ չի շփվում՝ 3.9%-ը, հազվադեպ է շփվում՝ 17.0%-ը:

Բավարարվածությունը տվյալ սոցիալական խմբի հետ շփման ինտենսիվությունից համարյա նույնական է նույն խմբի հետ «երբեմն» կամ «ամեն օր» շփվողների քանակին:

Սոցիալական աջակցության պոտենցիալ հնարավորությունը Հայաստանի հասարակությունում նույնպես բավականին բարձր է: Հարցվածների 97.5%-ը համարում է, որ անհրաժեշտության

դեպքում աջակցություն կստանա իր ընտանիքի անդամներից: Հարևաններից աջակցություն ակնկալում է հարցվածների 70%-ը, իսկ ընկերներից՝ 80%-ը:

Սոցիալական խումբ	Կարևոր է	Շփման հաճախություն				Բավարարվածություն շփման հաճախությունից	Աջակցություն
		Չի շփվում	Հազվադեպ	Երբեմն	Համարյա ամեն օր		
01 Ընտանիքի անդամներ	99.1%	0.2%	1.7%	5.5%	92.6%	94.7%	97.5%
02 Հարազատներ և բարեկամներ	98.4%	1.2%	14.8%	44.8%	39.2%	83.0%	85.9%
03 Ընկերներ	97.2%	3.9%	17.0%	35.2%	44.0%	82.1%	80.3%
04 Հարևաններ	88.0%	7.2%	19.3%	27.5%	46.0%	84.7%	70.0%
05 Աշխատակիցներ /կոլեգաներ՝	95.1%	1.5%	8.8%	20.5%	69.3%	93.1%	83.3%

Կարևոր է՝ տրված է «կարևոր է» պատասխանների քանակը:
Բավարարվածության զգացողություն շփման հաճախությունից՝ տրված է «ավելի շուտ բավարարված եմ» և «լիովին բավարարված եմ» պատասխանների ընդհանուր քանակը:
Անհրաժեշտության դեպքում աջակցության ստացման վստահություն՝ տրված է «ավելի շուտ վստահ եմ» և «լիովին վստահ եմ» պատասխանների ընդհանուր քանակը:
 * - Հաշվարկված է աշխատանք ունեցողների քանակից:

Աղյուսակ 56. Սոցիալական շփումների կարևորությունը, հաճախությունը, բավարարվածությունը շփման հնարավորությունից, աջակցություն ստանալու վստահությունը:

2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ աճել է բավարարվածությունը շփման ինտենսիվությունից, մասնավորապես, աշխատակիցների, ընտանիքի անդամների և հարազատների հետ (Աղյուսակ 57), սակայն նվազել է վստահությունը, որ անհրաժեշտության դեպքում աջակցություն կստանան ընկերներից և հարևաններից (Աղյուսակ 58):

Սոցիալական խումբ	Բավարարված են շփման հաճախությունից 2011թ.	Բավարարված են շփման հաճախությունից 2010թ.	«2011» - «2010»
01 Ընտանիքի անդամներ	94.7%	88.0%	6.7%
02 Հարազատներ և բարեկամներ	83.0%	77.1%	5.9%
03 Ընկերներ	82.1%	80.7%	1.4%
04 Հարևաններ	84.7%	81.3%	3.4%
05 Աշխատակիցներ /կոլեգաներ՝	93.1%	83.3%	9.8%

Աղյուսակ 57. Սոցիալական խմբերի հետ շփումից բավարարվածությունը 2011 և 2010թթ.:

Սոցիալական խումբ	Վստահ են, որ կստանան աջակցություն 2011թ.	Բավարարված են ստացած աջակցությունից 2010թ.
01 Ընտանիքի անդամներ	97.5%	96.8%
02 Հարազատներ և բարեկամներ	85.9%	86.4%
03 Ընկերներ	80.3%	88.5%
04 Հարևաններ	70.0%	86.0%
05 Աշխատակիցներ /կոլեգաներ՝	83.3%	88.2%

Աղյուսակ 58. Բավարարվածությունը սոցիալական խմբերից ստացած աջակցությունից (2010թ.) և վստահությունը, որ կստանան աջակցություն (2011թ.):

Վստահությունը, որ անհրաժեշտության դեպքում անձը աջակցություն կստանա դիտարկվող խմբի անդամից, կախված է հարցվողի առանձին սոցիալ-ժողովրդագրական բնութագրից: Մասնավորապես.

- **գյուղական բնակավայրերում** (Աղյուսակ 59)՝ Երևանի և մարզային քաղաքների համեմատ, մի փոքր ավելի բարձր է վստահությունը, որ, անհրաժեշտության դեպքում, աջակցություն կստանան հարևաններից (74.8%),
- **տղամարդկանց շրջանում** (Աղյուսակ 60) ավելի բարձր է աջակցության ստացման վստահությունն ընկերներից (86.2%), քան կանանց շրջանում (75.0%),
- **18-30 տարեկանների** (Աղյուսակ 61) շրջանում ամենաբարձրն է ընկերներից աջակցություն ստանալու վստահությունը (87.1%), որը 60-ից բարձր տարիքի անձանց շրջանում հավասար է միայն 68.5%-ի,
- **բարձրագույն կրթությամբ** (Աղյուսակ 62) անձանց շրջանում, ավելի ցածր կրթամակարդակով անձանց համեմատ, ավելի բարձր է ընկերներից և ավելի ցածր՝ հարևաններից ակնկալվող աջակցությունը,
- **բարեկեցության ավելի բարձր խմբերում** (Աղյուսակ 63) համեմատաբար ավելի բարձր է հարազատներից և ընկերներից ակնկալվող աջակցությունը:

Բնակավայրի տիպը	Ընտանիքի անդամներից	Հարազատներից	Ընկերներից	Հարևաններից	Աշխատակիցներից
Երևան	96.3%	82.5%	80.9%	65.3%	82.9%
Քաղաք	98.2%	87.8%	81.1%	69.9%	83.4%
Գյուղ	98.2%	87.7%	79.1%	74.8%	83.7%

Աղյուսակ 59. Վստահ են, որ աջակցություն կստանան՝ ըստ բնակավայրի տիպի:

Սեռը	Ընտանիքի անդամներից	Հարազատներից	Ընկերներից	Հարևաններից	Աշխատակիցներից
Իգական	96.8%	85.5%	75.0%	68.8%	80.6%
Արական	98.3%	86.3%	86.2%	71.3%	84.8%

Աղյուսակ 60. Վստահ են, որ աջակցություն կստանան՝ ըստ սեռի:

Տարիք	Ընտանիքի անդամներից	Հարազատներից	Ընկերներից	Հարևաններից	Աշխատակիցներից
18-30	98.1%	89.8%	87.1%	67.4%	81.1%
31-60	97.7%	83.1%	76.3%	72.6%	86.1%
60 <	94.5%	81.6%	68.5%	69.3%	76.3%

Աղյուսակ 61. Վստահ են, որ աջակցություն կստանան՝ ըստ տարիքի:

Կրթություն	Ընտանիքի անդամներից	Հարազատներից	Ընկերներից	Հարևաններից	Աշխատակիցներից
Միջնակարգ կամ ցածր	97.5%	85.4%	77.7%	71.1%	81.3%
Միջն. մակ միջ. մասն.	97.2%	84.5%	78.6%	73.8%	82.0%
Բարձրագույն կամ ավելի	98.0%	88.3%	86.2%	63.7%	85.5%

Աղյուսակ 62 Վստահ են, որ աջակցություն կստանան՝ ըստ կրթության:

Բարեկեցության խումբ	Ընտանիքի անդամներից	Հարազատներից	Ընկերներից	Հարևաններից	Աշխատակիցներից
Բավարար գումար չունենք սննդի համար	94.7%	74.9%	63.8%	62.6%	81.0%
Բավարար գումար ունենք միայն սննդի համար	97.0%	83.2%	76.0%	68.0%	84.1%
Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	97.8%	86.3%	78.6%	68.5%	81.5%
Կարող ենք գնել միջին որակի իրեր	98.9%	91.1%	90.9%	76.5%	85.1%
Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	98.1%	91.5%	95.2%	69.2%	88.9%
Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք	97.2%	91.7%	91.7%	91.7%	70.6%

Աղյուսակ 63 Վստահ են, որ աջակցություն կստանան՝ ըստ բարեկեցության:

Ստորև բերված Աղյուսակ 64-ում ներկայացված է բավարարվածությունը սոցիալական շփումների հաճախականությունից ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության: Տվյալները ցույց են տալիս, որ Երևանում հարցվածների բավարարվածությունը հարազատների, բարեկամների և ընկերների հետ շփումների հաճախությունից համեմատաբար ավելի ցածր է:

Սոցիալական խումբ	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Ընտանիքի անդամներ	94.7%	94.7%	93.3%	95.9%	94.7%	94.6%	94.7%
02 Հարազատներ և բարեկամներ	83.0%	76.3%	84.2%	88.9%	83.4%	81.5%	84.5%
03 Ընկերներ	82.1%	77.8%	82.5%	86.0%	81.6%	82.0%	83.5%
04 Հարևաններ	84.7%	81.8%	83.0%	89.2%	84.9%	84.5%	84.2%
05 Աշխատակիցներ /կոլեգաներ*	93.1%	92.3%	94.4%	92.8%	92.2%	93.0%	94.4%
Միջին բավարարվածությունը	87.5%	84.6%	87.5%	90.6%	87.4%	87.1%	88.3%

Աղյուսակ 64. Բավարարվածությունը սոցիալական շփումների հաճախականությունից՝ ընդամենը, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության:

Ֆիզիկական և սոցիալական անվտանգություն

Հետազոտությանը ուսումնասիրվել են բնակչության կողմից սոցիալական և ֆիզիկական վտանգների հավանականության²⁵ և դրանց առաջանալու դեպքում իրենց պաշտպանվածության զգացողության²⁶ գնահատականները: Դիտարկվել են հետևյալ ֆիզիկական և սոցիալական վտանգները, երբ անձը կամ նրա ընտանիքը.

- կարող է մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների,
- հիվանդանալու դեպքում չի կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում,
- կարող է տուժել հարևանների անարդար և վնասող գործողություններից,
- կարող է տուժել կողոպուտից, գողությունից, խուլիգանությունից և այլ օրինազանցություններից,

²⁵ Կիրառվել է. «Որքանով է հավանական, որ Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը կարող է հանդիպել հետևյալ վտանգներին»: Պատասխանների տարբերակները. 1. «ընդհանրապես հավանական չէ», 2. «ավելի շուտ հավանական չէ», 3. «ավելի շուտ հավանական է», 4. «լիովին հավանական է»:

²⁶ Կիրառվել է. «Որքանով եք վստահ, որ եթե Դուք հանդիպեք այդ վտանգներին, ապա կկարողանաք պաշտպանվել դրանցից»: Պատասխանների տարբերակները. 1. «ընդհանրապես վստահ չեմ», 2. «ավելի շուտ վստահ չեմ», 3. «ավելի շուտ վստահ եմ», 4. «լիովին վստահ եմ»:

- կարող է տուժել հասարակական անկարգություններից և բռնություններից,
- կարող է տուժել հնարավոր պատերազմից,
- կարող են կաշառք պահանջել՝ իրեն հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց,
- կարող է տուժել ոստիկանության անարդարացի ճնշումներից,
- կարող է տուժել դատարանում իր նկատմամբ անարդար վերաբերմունքից:

Ստացված տվյալները ներկայացված են Աղյուսակ 65-ում:

Ապահովության բաղադրիչ	Վտանգը	Վտանգից պաշտպանվածության չափը
01 Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների	54.4%	50.0%
02 Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում	63.3%	49.1%
03 Հարևանների անարդար և Ձեզ վնասող գործողություններ	29.9%	80.1%
04 Կողոպուտ, գողություն, խուլիգանություն և այլ օրինազանցություններ	47.8%	56.0%
05 Հասարակական անկարգություններ և բռնություններ	43.4%	60.7%
06 Հնարավոր պատերազմ	54.4%	49.9%
07 Ձեզանից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց	56.6%	50.8%
08 Ոստիկանության անարդարացի ճնշումներ	44.8%	51.1%
09 Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունք	48.4%	49.3%
Վտանգը՝ տրված է դիտարկվող վտանգը «ավելի շուտ հավանական» կամ «լիովին հավանական» համարող անձանց քանակը Վտանգից պաշտպանվածության զգացողությունը՝ տրված է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ «ավելի շուտ վստահ են» կամ «լիովին վստահ են», որ պաշտպանված են դիտարկվող վտանգից: Բոլոր տոկոսները հաշվարկված են ամբողջ ընտրանքից:		

Աղյուսակ 65. Ֆիզիկական անվտանգության ռիսկերն ու պաշտպանվածության զգացողությունը:

Առավել տարածված վտանգը հիվանդանալու դեպքում բուժում ստանալու անկարողությունն է (63.3%): Առավել տարածված վտանգների երկրորդ խումբն են կազմում այն իրավիճակները, երբ անձը կարող է ստիպված լինել կաշառք տալ (56.6%), կարող է մնալ առանց ապրուստի միջոցների (54.4%) և պատերազմի վտանգը (54.4%): Ամենաքիչ տարածվածն է հարևաններից բխող վտանգը (29.9%):

Մարդիկ իրենց ավելի պաշտպանված են զգում հարևանների անարդար գործողությունների (80.1%) և հասարակական անկարգությունների (60.7%) առաջանալու դեպքում:

Վտանգի առաջացման հավանականությունը և դրանից պաշտպանվածությունը փոխկապակցված են. երբ անձը քիչ հավանական է համարում վտանգի առաջացումը, ապա նա հակված է ավելի բարձր գնահատել իր պաշտպանվածության աստիճանը: Աղյուսակ 66-ում տրված է դիտարկված վտանգներից պաշտպանվածության զգացողություն ունեցողների տոկոսային քանակը այն դեպքում, երբ նրանք տվյալ վտանգը համարում են հավանական և երբ տվյալ վտանգը հավանական չեն համարում: Աղյուսակի երրորդ սյունում տրված է պաշտպանվածության զգացողության անկումը վտանգը հավանական համարողների շրջանում՝ վտանգը հավանական չհամարողների նկատմամբ:

Ապահովության բաղադրիչ	1 Իրենց պաշտպանված են զգում՝ այն անձանց թվից, ովքեր հավանական չեն համարում վտանգը	2 Իրենց պաշտպանված են զգում՝ այն անձանց թվից, ովքեր հավանական են համարում վտանգը	3 Պաշտպանվածության զբաղողության անկումը $[((«1» - «2»)/«2»)\%]$
01 Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների	57.6%	43.5%	24.5%
02 Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում	63.2%	40.6%	35.8%
03 Հարևանների անարդար և Ձեզ վնասող գործողություններ	83.4%	72.2%	13.4%
04 Կողոպուտ, գողություն, խուլիգանություն և այլ օրինազանցություններ	69.3%	42.7%	38.4%
05 Հասարակական անկարգություններ և բռնություններ	69.7%	49.2%	29.4%
06 Հնարավոր պատերազմ	58.9%	42.7%	27.5%
07 Ձեզանից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց	66.0%	39.6%	40.0%
08 Ոստիկանության անարդարացի ճնշումներ	65.0%	34.5%	46.9%
09 Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունք	65.0%	32.5%	50.0%

Աղյուսակ 66. Անձանց տոկոսը, ովքեր համարում են, որ կկարողանան պաշտպանվել վտանգից՝ պայմանով, որ. ա) վտանգը հավանական չէ, բ) վտանգը հավանական է:

Պաշտպանվածության զգացողությունը կախված է անձի տարիքից (Աղյուսակ 67). տարիքի աճին զուգահեռ պաշտպանվածության զգացողությունը նվազում է: Այն հատկապես նշանակալի է սոցիալական վտանգների դեպքում: Մասնավորապես.

- առանց ապրուստի մնալու վտանգից պաշտպանվածությունը 18-30 տարեկանների շրջանում 59.0%- է, իսկ 60-ից ավելի տարեկանների շրջանում՝ ընդամենը 36.0%,
- Հիվանդանալու դեպքում բուժում չստանալու վտանգից պաշտպանվածության զգացողությունը 18-30 տարեկանների շրջանում 60.0% է, իսկ 60-ից բարձր տարիքի անձանց շրջանում՝ 35.0%:

Ապահովության բաղադրիչ	18-30	31-60	60 <	Ընդ.
01 Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների	59.0%	44.0%	36.0%	50.0%
02 Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում	60.0%	41.0%	35.0%	49.0%
03 Հարևանների անարդար և Ձեզ վնասող գործողություններ	81.0%	79.0%	79.0%	80.0%
04 Կողոպուտ, գողություն, խուլիգանություն և այլ օրինազանցություններ	59.0%	54.0%	50.0%	56.0%
05 Հասարակական անկարգություններ և բռնություններ	66.0%	57.0%	52.0%	61.0%
06 Հնարավոր պատերազմ	52.0%	49.0%	45.0%	50.0%
07 Ձեզանից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց	56.0%	46.0%	45.0%	51.0%
08 Ոստիկանության անարդարացի ճնշումներ	57.0%	45.0%	46.0%	51.0%
09 Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունք	56.0%	43.0%	43.0%	49.0%

Աղյուսակ 67 Պաշտպանվածության զգացողությունն՝ ըստ տարիքի:

Պաշտպանվածության զգացողությունը վտանգներից մեծապես պայմանավորված է ընտանիքի բարեկեցությամբ՝ որքան ավելի բարձր է բարեկեցությունը, այնքան ավելի ապահով է իրեն համարում հարցվողը բոլոր դիտարկված դեպքերում.

- առավել անբարեկեցիկ շերտերում շատ ցածր է պաշտպանվածության զգացողությունն առանց ապրուստի միջոցների մնալու, հիվանդանալու դեպքում առանց անհրաժեշտ բուժման մնալու և դատարանում անարդար վերաբերմունքի հանդիպելու վտանգների դեպքերում (Աղյուսակ 68):

Ապահովության բաղադրիչ	1	2	3	4	5	6
01 Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների	31.2%	41.2%	48.2%	60.8%	76.5%	74.3%
02 Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում	30.4%	35.1%	48.5%	62.4%	75.0%	83.3%
03 Հարևանների անարդար և Ձեզ վնասող գործողություններ	76.3%	75.4%	78.9%	85.1%	87.3%	94.3%
04 Կողոպուտ, գողություն, խուլիգանություն և այլ օրինազանցություններ	52.4%	54.8%	53.5%	59.5%	63.0%	82.9%
05 Հասարակական անկարգություններ և բռնություններ	54.1%	60.3%	57.4%	64.8%	72.7%	90.6%
06 Հնարավոր պատերազմ	47.5%	49.5%	47.9%	50.4%	58.6%	78.8%
07 Ձեզանից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց	47.1%	46.8%	50.3%	53.1%	54.5%	82.4%
08 Ոստիկանության անարդարացի ճնշումներ	44.0%	48.6%	49.9%	53.7%	63.0%	77.1%
09 Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունք	45.0%	46.0%	46.8%	51.4%	67.0%	85.7%
1 - Բավարար գումար չունենք սննդի համար 2 - Բավարար գումար ունենք միայն սննդի համար 3 - Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար 4 - Կարող ենք գնել միջին որակի իրեր 5 - Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա 6 - Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք						

Աղյուսակ 68. Վտանգներից պաշտպանվածության զգացողությունն՝ ըստ բարեկեցության:

Վտանգներից պաշտպանվածության զգացողությունը տարբերվում է նաև ըստ բնակավայրի տիպերի (Աղյուսակ 69), մասնավորապես.

- Երևանի բնակչությունն իրեն ավելի անպաշտպան է զգում, քան մարզային քաղաքների և գյուղի բնակչությունը:
- Տարբերությունը շատ մեծ է հասարակական անկարգությունների (գյուղերի համեմատ պաշտպանվածության զգացողություն ունեն 20.8%-ով ավելի քիչ երևանաբնակ անձինք), կողոպուտի, բռնության, խուլիգանության (19.7%-ով ավելի քիչ) և դատարանում անարդար վերաբերմունքի հանդիպելու (17.4%-ով ավելի քիչ) վտանգների դեպքում:

Ապահովության բաղադրիչ	Երևան	Քաղաք	Գյումրի
01 Կարող եք մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների	43.0%	52.2%	54.8%
02 Հիվանդանալու դեպքում չեք կարողանա ստանալ անհրաժեշտ բուժում	44.9%	50.3%	52.4%
03 Հարևանների անարդար և Ձեզ վնասող գործողություններ	77.8%	80.7%	82.0%
04 Կողոպուտ, գողություն, խուլիգանություն և այլ օրինազանցություններ	44.8%	60.0%	64.5%
05 Հասարակական անկարգություններ և բռնություններ	50.1%	61.7%	70.9%
06 Հնարավոր պատերազմ	42.7%	50.4%	57.3%
07 Ձեզանից կաշառք կպահանջեն՝ Ձեզ հասանելիքի կամ իրավունքի պաշտպանության դիմաց	43.2%	54.4%	55.5%
08 Ոստիկանության անարդարացի ճնշումներ	41.8%	57.5%	55.0%
09 Դատարանում Ձեր նկատմամբ անարդար վերաբերմունք	38.5%	54.8%	55.9%

Աղյուսակ 69. Վտանգներից պաշտպանվածության զգացողությունն՝ ըստ բնակավայրի տիպի:

Հասարակական տրամադրություններ

Հետազոտությունում, որպես կյանքի որակը բնութագրող հարթություն են դիտվել նաև հասարակության տրամադրություններն ու դիրքորոշումները հասարակության, պետության, վերնախավերի, հասարակական վարքի և հարաբերությունների, ինչպես նաև արդի Հայաստանի համար մի քանի հանգուցային հարցերի վերաբերյալ: Այդ դիրքորոշումները, ի թիվս այլ խնդիրների, պայմանավորում են նաև հասարակության մեջ վստահության և համագործակցության, այլ կերպ՝ սոցիալական կապիտալի մակարդակն ու բնույթը:²⁷ Հարցվողներին են ներկայացվել 19 դրույթներ, որոնց նկատմամբ նրանք արտահայտել են իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը:²⁸

Ա. Բազային դիրքորոշումները

Այս դիրքորոշումները վերաբերում են այն հարցերին, որոնք արդի հայաստանյան հասարակությունում առաջացել են նրա արտաքին միջավայրից (ենթատեքստից): Դրանք ածանցվել են Հայաստանի՝ գլոբալ հանրության մեջ ընդգրկվելու փաստից, ընդգրկման բնույթից և գլոբալ հանրությունում Հայաստանի համար «նախանշված» դերից: Դիտարկվող դիրքորոշումներն անվանված են բազային, քանի որ դրանք, իրենց հերթին, տրամաբանական հիմք են հանդիսանում հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում առկա ածանցյալ դիրքորոշումների և վարքագծի տեսակների համար: Որպես բազային դիրքորոշումներ են դիտվել.

- **Փողի դերը.** գնահատվել է «Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ որոշում է փողը» դրույթի հետ համաձայնությամբ կամ անհամաձայնությամբ:

²⁷ Ձեկույցի այս հատվածում դիտարկված են նաև այն դիրքորոշումները, որոնք անուղղակիորեն են առնչվում սոցիալական կապիտալին՝ պայմանավորելով դրա բնույթը:

²⁸ Կիրառվել են հետևյալ պատասխանների տարբերակները. 1. «միանշանակ համաձայն չեք», 2. «ավելի շուտ համաձայն չեք», 3. «ավելի շուտ համաձայն եք», 4. «միանշանակ համաձայն եք» սանդղակը: Բացի դրանից, հարցաշարում միմյանց հետ կոնցեպտուալ կապ ունեցող հարցերը «հեռացվել են» միմյանցից՝ բացառելու համար շաղկապվածության պատճառով առաջացող էֆֆեկտները:

- **Հասարակական վարքի մաքսիմը.**²⁹ գնահատվել է «Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմ, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը» դրույթով:
- **Պետության հետ հարաբերվելու մաքսիմը.** գնահատվել է «Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն» դրույթով:
- **Տնտեսական վերնախավի գործունեության բնույթը.** գնահատվել է «Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը և ժողովրդի բարեկեցության աճին» դրույթով:
- **Պետական և տնտեսական վերնախավերի միջև գերակայությունը.** գնահատվել է «Հայաստանի մեծահարուստները ավելի շատ են մտածում ժողովրդի մասին, քան պետությունը» դրույթով:

Աղյուսակ 70-ում տրված են վերոնշյալ դրույթների հետ «ավելի շուտ համաձայն» կամ «լիովին համաձայն» հարցվածների քանակը:

Դրույթ	Համաձայն են
Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ որոշում է փողը:	86.3%
Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմ, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը:	81.6%
Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն:	65.0%
Հայաստանի մեծահարուստները ավելի շատ են մտածում ժողովրդի մասին, քան պետությունը:	39.9%
Հայաստանի ամենահարուստ մարդիկ խոչընդոտում են Հայաստանի զարգացմանը և ժողովրդի բարեկեցության աճին:	82.4%

Աղյուսակ 70. Բազային դիրքորոշումների տարածվածությունը Հայաստանի հասարակությունում:

Պատասխանների բաշխումը ցույց է տալիս, որ հասարակության դիրքորոշումներում փողը՝ նյութական հարստության խորհրդանիշն ու «կվիստ էսենցիան», ամենագերակա արժեքն է (համաձայն են հարցվածների 86.3%-ը): Այդ դիրքորոշման հետ տրամաբանորեն շաղկապված է վարքագծային մաքսիմը՝ «Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմ, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը», որի հետ համաձայն են հարցվածների 81.6%-ը: Վիճակագրական փորձարկումները ցույց տվեցին, որ նշված երկու դիրքորոշումները փոխադարձաբար հիմնավորում են մեկը մյուսին:³⁰ Ընդ որում՝ երկու դրույթի հետ միաժամանակ համաձայն է հարցվածների 74.6%-ը, իսկ միաժամանակ համաձայն չեն միայն 6.2%-ը (Աղյուսակ 71):

Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ որոշում է փողը:	Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմ, ուրեմն պետք է ապրել դրա օրենքով՝ հաղթում է ուժեղը:		
	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Ընդամենը
Համաձայն չեմ	6.2%	7.1%	13.3%
Համաձայն եմ	12.1%	74.6%	86.7%
Ընդամենը	18.3%	81.7%	100.0%

Աղյուսակ 71. Փողի նշանակության և հասարակական վարքի սկզբունքի նկատմամբ դիրքորոշումների փոխկապվածությունը:

²⁹ Մաքսիմա՝ վարքականոն կամ հիմնական սկզբունք, որը պայմանավորում է մարդկանց արարքները:

³⁰ Գուդման – Կրասկալի $\tau = 0.000$ անկախ այն հանգամանքից, թե որ փոփոխականն է դիտվում որպես անկախ:

Տրամաբանական է նաև, որ արդեն դիտարկված երկու դիրքորոշումներից բխում է նաև պետության (կամ՝ օրենքի) հետ հարաբերվելու մաքսիմը՝ «Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն»: Այդ կապի մասին է վկայում այն, որ նրանք, ովքեր համաձայն են առաջին երկու դրույթների հետ, 3.5 անգամ ավելի հաճախ են համաձայնվում «Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն» դրույթին (Աղյուսակ 72): Այն անձանց թվում, ովքեր միաժամանակ համաձայն չեն երկու դրույթների («փողի» և «հաղթում է ուժեղը») հետ, օրինապաշտությունը միամտություն և հիմարություն է համարում 21.7%-ը, իսկ այն անձանց թվում, ովքեր միաժամանակ համաձայն են այդ երկու դրույթներին՝ 73.9%:

Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ որոշում է փողը:	Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն:		
	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Ընդամենը
Համաձայն չեմ	21.7%	41.0%	31.9%
Համաձայն եմ	48.3%	73.9%	70.3%
Ընդամենը	39.1%	71.1%	65.2%

Աղյուսակ 72. Պետության հետ հարաբերվելու մաքսիմի պայմանավորվածությունը փողի դերով և հասարակական վարքի մաքսիմով: Վանդակներում տրված է. «Այսօր ոչ ոք օրենքով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն» դրույթի հետ համաձայն անձանց քանակը:

Հայաստանի հասարակության 82.4%-ը բացասական է գնահատում Հայաստանի տնտեսական վերնախավի դերը Հայաստանի զարգացման հարցում: Ընդ որում, միաժամանակ, հասարակության 40%-ը համարում է, որ «Հայաստանի մեծահարուստները ավելի շատ են մտածում ժողովրդի մասին, քան պետությունը»:

Բ. Արդի Հայաստանի աշխարհամակարգային և աշխարհաքաղաքական դիրքի և հետխորհրդային 20-ամյակի համընդհանուր ազդեցության արտապատկերումը հասարակական գիտակցությունում

Նշված ազդեցությունը գնահատվել է հետևյալ հարցերով.

- **Աշխարհաքաղաքական մեծ տարածքի դիլեման** գնահատվել է երեք հարցերով.
 - «Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր»,
 - «Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք»,
 - «Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպայի հետ»:
- **«Բարեկեցություն և խաղաղություն» թե՞ «անկախություն»** դիլեման գնահատվել է հետևյալ դրույթով.
 - «Ժողովրդի բարեկեցիկ ու խաղաղ (պատերազմից ապահով) կյանքն ավելի կարևոր է, քան անկախությունը»:

Պատասխանների բաշխումը տրված է Աղյուսակ 73-ում:

Դրույթ	Համաձայն են
Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր:	90.9%
Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:	84.8%
Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպայի հետ:	82.1%
Ժողովրդի բարեկեցիկ ու խաղաղ (պատերազմից ապահով) կյանքն ավելի կարևոր է, քան անկախությունը:	73.2%

Աղյուսակ 73. Աշխարհաքաղաքական դիրքորոշումների և «անկախություն – բարեկեցություն» դիլեմայի նկատմամբ դիրքորոշումները:

Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակության գերիշխող մեծամասնությունը տնտեսական իրավիճակը Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմում գտնվելու ժամանակ, ավելի դրական է գնահատում, քան ներկայիս վիճակը: Հարցվածների 84.8%-ը համարում է, որ «Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք»: Ընդ որում՝ ակնհայտ է, որ դրա հիմնական պատճառների շարքում հասարակության ավելի բարձր բարեկեցիկությունն է. հարցվածների 90.9%-ը համարում է, որ «Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր»:³¹ Հարցվածների միայն 4.7%-ը միաժամանակ համաձայն չէ այն դրույթների հետ, որ ա) «Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք», և բ) «Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր»: Իսկ միաժամանակ համաձայն է երկու դրույթների հետ հարցվածների 72.7%-ը (Աղյուսակ 74):

Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:	Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր:		
	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Ընդամենը
Համաձայն չեմ	4.7%	10.1%	14.8%
Համաձայն եմ	12.5%	72.7%	85.2%
Ընդամենը	17.2%	82.8%	100.0%

Աղյուսակ 74. «Հայաստանը ԽՍՀՄ կազմում» դիրքորոշումների փոխկապվածությունները:


Հասարակական այդպիսի դիրքորոշումների պայմաններում օրինաչափ է նաև, որ հասարակության մեծ մասի համար (82.1%) ավելի շուտ գերադասելի է, որ. «Հայաստանը միավորվի Ռուսաստանի քան՝ Եվրոպայի հետ»: Այդ մասին է վկայում նաև այն, որ նշված երկու դիրքորոշումների հետ համաձայնությունը բարձրացնում է նաև Ռուսաստանի հետ միավորվելու դիրքորոշում ունեցողների քանակը (Աղյուսակ 75): Եթե երկու դիրքորոշումների հետ միաժամանակ անհամաձայնության դեպքում Ռուսաստանի հետ միավորմանը կողմ են հարցվածների 67.6%-ը, ապա դրանց հետ միաժամանակ համաձայնության դեպքում՝ 85.9%-ը: Հատկանշական է այն, որ ԽՍՀՄ վերաբերյալ դիրքորոշումներին միաժամանակ դեմ անձանց մոտ նույնպես շատ բարձր է Ռուսաստանի հետ միավորման դիրքորոշումը:

³¹ Չի բացառվում, որ «ավելի լավ ապրել» հասկացությունը հարցվողների գիտակցությունում կազմավորվում է մի քանի բաղադրիչների ազդեցության տակ, որոնք հանդիսանում են կյանքի որակ հասկացության բաղադրիչները, մասնավորապես՝ տնտեսական, ֆիզիկական և սոցիալական ապահովությունը, ապագայի կանխատեսելիությունը և, հատկապես, [իրենց ու իրենց երեխաների] ապագայի տեսլականը:

Սովետական Միության փլուզումից մենք ավելի շատ բան կորցրինք, քան շահեցինք:	Սովետական Միությունում Հայաստանի ժողովրդի մեծ մասն ավելի լավ էր ապրում, քան այսօր:		
	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Ընդամենը
Համաձայն չեմ	67.6%	70.4%	67.6%
Համաձայն եմ	80.0%	85.9%	80.0%
Ընդամենը	67.6%	70.4%	67.6%

Աղյուսակ 75. Ռուսաստանի հետ միավորվելու դիրքորոշման գերադասելիության կախվածությունը ԽՍՀՄ նկատմամբ դիրքորոշումներից: Վանդակներում տրված է. «Գերադասելի է, որ Հայաստանը միավորվի ավելի շուտ Ռուսաստանի, քան Եվրոպայի հետ» դրույթի հետ համաձայն անձանց քանակը:

Դիտարկվող դրույթների նկատմամբ դիրքորոշումների կախվածությունը տարիքից ներկայացված է Գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7. Արդի Հայաստանի աշխարհամակարգային և աշխարհաքաղաքական դիրքի և հետխորհրդային 20-ամյակի համընդհանուր ազդեցությունը տարիքային խմբերում:

Սովետական Միության վերաբերյալ դիրքորոշումները միաժամանակ նվազում են 25-34 տարեկանների խմբում (այնուամենայնիվ մնալով շատ տարածված), իսկ «անկախություն», թե՛ «բարեկեցիկություն» դիվեման, ի օգուտ բարեկեցիկության ավելի հակված են հանգուցալուծելու միջին տարիքի անձինք, առավելապես՝ 35-44 տարեկանները: Հավանաբար դա պայմանավորված է նրանով, որ ընտանիքների հոգսը մեծամասամբ կրում են միջին տարիքի անձինք:

Գ. Հասարակությունում սոցիալական կապիտալի մակարդակը

Հասարակությունում սոցիալական կապիտալի մակարդակը գնահատվել է մի քանի տեսակետերից.

- **Ընդհանուր դիրքորոշումն «օտարականի» նկատմամբ.** գնահատվել է «Անձանոթ վայրում պետք է խուսափել այն մարդկանցից, ովքեր փորձում են ծանոթություն հաստատել» դրույթով:

- **Սոցիալական կապիտալը տնտեսական կապիտալի վերածելու պոտենցիալը.** գնահատվել է «Մեզ մոտ պետք է խուսափել պարտքով փող տալուց» դրույթով:
- **Հասարակության «միջինացված» անդամի բարյացկամությունը.** գնահատվել է «Մեզ մոտ մարդիկ ավելի շուտ չկամ են միմյանց նկատմամբ, քան ուրախանում են ուրիշի հաջողություններով» դրույթով:
- **Սոցիալական կապիտալի արժևորումը՝ որպես խնդիրների լուծման ռեսուրս.** գնահատվել է «Մեզ մոտ մարդիկ հակված են դժվարին իրավիճակներից դուրս գալ ոչ թե միմյանց օգնելով, այլ ամեն մարդ աշխատում է ինքնուրույն իր գլխի ճարը տեսնել» դրույթով:
- **Բիզնեսում գործընկերության գերակա ռազմավարությունը.** մոտարկվել է «Բիզնեսով զբաղվելու դեպքում ավելի շուտ գերադասելի է, որ գործընկերոջ լինի քո բարեկամը, այլ ոչ թե գործից լավ հասկացող մարդ» դրույթով:

Նշված դրույթներին տրված պատասխանները (Աղյուսակ 76) ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակությունում խարխլված է սոցիալական կապիտալը. ցածր է անձանոթի հետ շփման մեջ մտնելու դիրքորոշումը, ցածր է ծանոթության շրջանակներում բարյացակամության մակարդակը: Դրանց համահունչ, նվազած է սոցիալական կապիտալի ընկալումը՝ որպես խնդիրների լուծման ռեսուրս: Այնուամենայնիվ, հարցվածների 79%-ը գերադասում է բիզնեսը նախաձեռնել ավելի շուտ կոմպետենտ գործընկերոջ, քան՝ իր բարեկամի հետ:

Դրույթ	Համաձայն են
Անձանոթ վայրում պետք է խուսափել այն մարդկանցից, ովքեր փորձում են ծանոթություն հաստատել:	63.3%
Մեզ մոտ պետք է խուսափել պարտքով փող տալուց:	64.6%
Մեզ մոտ մարդիկ ավելի շուտ չկամ են միմյանց նկատմամբ, քան ուրախանում են ուրիշի հաջողություններով:	75.5%
Մեզ մոտ մարդիկ հակված են դժվարին իրավիճակներից դուրս գալ ոչ թե միմյանց օգնելով, այլ ամեն մարդ աշխատում է ինքնուրույն իր գլխի ճարը տեսնել:	81.4%
Բիզնեսով զբաղվելու դեպքում ավելի շուտ գերադասելի է, որ գործընկերոջ լինի քո բարեկամը, այլ ոչ թե գործից լավ հասկացող մարդ:	21.0%

Աղյուսակ 76. Սոցիալական կապիտալի մակարդակի բնութագրիչներ:

Բնական է ենթադրել, որ դիրքորոշումների այս խումբը շաղկապված է «բազային դիրքորոշումների» խմբի հետ, ինչը հաստատվել է նաև գործոնային վերլուծության միջոցով: Աղյուսակ 76-ում ներկայացված դիրքորոշումները շաղկապված են փողի դերի, հասարակական վարքի և պետության հետ հարաբերվելու մաքսիմների հետ: Վերլուծական տեսակետից կարելի պնդել, որ դիրքորոշումների երրորդ խումբը, որը նկարագրում է բուն սոցիալական կապիտալը, բխում է հասարակության վերաբերյալ առաջին՝ բազային խմբի դիրքորոշումներից: Սակայն, ըստ երևույթին, վեր հանված իրավիճակը կայացել է հետխորհրդային անցումային փուլում՝ հասարակության [և նրա առանձին անդամների] կենսափոքրից. առօրյա և կենցաղային գործունեության [պրակտիկայի] արդյունքները պայմանավորել են ինչպես ընդհանուր «խորքային» դիրքորոշումները, այնպես էլ՝ մասնավոր՝ առօրյա և կենցաղային դիրքորոշումները: Ակնհայտ է, որ տեղի են ունեցել նաև հակառակ ուղղությամբ ազդեցություններ:

Դ. Դիրքորոշումները վերնախավերի նկատմամբ

Վերնախավերի նկատմամբ դիրքորոշումները, որոնք միաժամանակ նաև մոտարկում են Հայաստանի քաղաքական համակարգի նկատմամբ պատկերացումները, գնահատվել են հետևյալ հարթություններում.

- **Դիրքորոշումները պետական պաշտոնյաների նկատմամբ.** գնահատվել է «Պետական պաշտոնյաները նախ մտածում են ժողովրդի մասին, հետո նոր՝ իրենց շահերի մասին» դրույթով:
- **Դիրքորոշումները կուսակցական համակարգի նկատմամբ.** գնահատվել է «Կուսակցությունները սպասարկում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց ղեկավարների շահերը»:
- **Դիրքորոշումները տնտեսական վերնախավերի նկատմամբ.** գնահատվել է «Մեծահարուստները բարերարություն են անում ժողովրդին՝ ընտրություններում հաղթելու համար» դրույթով:
- **Դիրքորոշումները քաղաքական ռեժիմի նկատմամբ.** գնահատվել է «Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում» դրույթով:


Ստացված արդյունքները (Աղյուսակ 77) ցույց են տալիս, որ Հայաստանի հասարակության գերակշիռ մեծամասնությունը բացասական դիրքորոշումներ ունի պետական կառավարման ապարատի, կուսակցական համակարգի, տնտեսական վերնախավերի գործունեության նկատմամբ: Դրան համահունչ, հանրային խնդիրների լուծման համար առավել արդյունավետ է դիտվում «ուժեղ ձեռքը»:

Դրույթ	Համաձայն են
Պետական պաշտոնյաները նախ մտածում են ժողովրդի մասին, հետո նոր՝ իրենց շահերի մասին:	14.6%
Կուսակցությունները սպասարկում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց ղեկավարների շահերը:	89.5%
Մեծահարուստները բարերարություն են անում ժողովրդին ընտրություններում հաղթելու համար:	88.9%
Այսօր Հայաստանին պետք է ոչ թե ժողովրդավարություն, այլ ուժեղ ձեռքով կառավարում:	71.7%

Աղյուսակ 77. Հայաստանի հասարակությունում դիրքորոշումները վերնախավերի նկատմամբ:

Բոլոր դիրքորոշումները համատեղ ներկայացված են Գծապատկեր 8-ում:

«Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դրույթների հետ»:
(դասակարգված են ըստ դիրքորոշումների խմբերի)



Գծապատկեր 8. Հասարակական տրամադրությունները Հայաստանում:

Հանգիստ և ժամանց

Հետազոտությամբ գնահատվել են Հայաստանի հասարակությունում հանգստի և ժամանցի կարևորությունը, ֆիզիկական և ֆինանսական մատչելիությունը և դրանցից օգտվելու հնարավորությամբ բավարարվածությունը: Դիտարկվել են հանգստի ու ժամանցի հետևյալ տեսակները.

- գրադարաններ այցելելը,
- գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը,
- թերթեր, ամսագրեր ընթերցելը,
- հեռուստացույց դիտելը,
- երաժշտություն ունկնդրելը,
- կինո/թատրոն հաճախելը,
- սրճարան այցելելու հնարավորությունը,
- ռեստորան այցելելու հնարավորությունը,
- դիսկոտեկ այցելելը,
- երաժշտական գործիք/գործիքներ նվագելը,
- համերգներ գնալը,
- հորբիով զբաղվելու հնարավորությունը,
- սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը,
- զբոսնելը/զբոսայգիներ այցելելը:

Գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ հանգստի և ժամանցի տեսակներն իրենց կարևորության տեսակետից խմբավորվում են երեք գործոններում.

Գործոն 1. «Պասիվ հանգստի գործոն», որում միավորվել են հեռուստացույց դիտելն ու երաժշտություն լսելը:

Գործոն 2. «Մտավոր ժամանցի գործոն», որում միավորվել են գրքերի, թերթերի ու ամսագրերի ընթերցումն և գրադարան այցելելը:

Գործոն 3. «Ակտիվ հանգստի գործոն», որում միավորվել են, կինո/թատրոն հաճախելը, սրճարան այցելելու հնարավորությունը, ռեստորան այցելելու հնարավորությունը, դիսկոտեկ այցելելը, երաժշտական գործիք/գործիքներ նվագելը, համերգներ գնալը, հորբիով զբաղվելու հնարավորությունը, սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը, զբոսնելը/զբոսայգիներ այցելելը:

Ազատ ժամանցի ձևերից, ինչպես և կարելի էր սպասել, առավել կարևոր են պասիվ հանգստի ձևերը (Աղյուսակ 78)՝ հեռուստացույց դիտելը (91.4%) և երաժշտություն լսելը (93.2%): Երկրորդ և երրորդ գործոններում ընդգրկված հանգստի ձևերից առավել կարևորներն են՝ գրքերի ընթերցանության հնարավորությունը (79.9%), համերգներ այցելելը (78.7%) և սպորտով զբաղվելը (78.1%):

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ հանգստի դիտարկված ձևերի կարևորությունները վիճակագրորեն նշանակալի չեն փոխվել, բացառությամբ ռեստորան հաճախելու հնարավորության կարևորությունից, որը նվազել է 9.4%-ով (Աղյուսակ 78):³²

Հայաստանի բնակչությունը առավելապես բավարարված է պասիվ հանգստի՝ երաժշտություն ունկնդրելու (91.6%) և հեռուստացույց դիտելու (87.6%) հնարավորությունից:

Բավարարվածության մակարդակով երկրորդն են մտավոր ժամանցի ձևերը՝ թերթեր և ամսագրեր կարդալու հնարավորությունը՝ 77.9%, ոչ մասնագիտական գրքեր կարդալու հնարավորությունը՝ 76.9% և գրադարաններ այցելելու հնարավորությունը (72.7%): Ընդ որում, 2011թ.-ին 2010թ.-ի համեմատ բավարարվածությունը հանգստի և ժամանցի բոլոր ձևերից նշանակալի չափով աճել է, բացի պասիվ հանգստից, որից բավարարվածության զգացողությունը շատ բարձր է: Հատկապես աճել է բավարարվածությունը գրադարաններ այցելելու (31.0%), կինո/թատրոն հաճախելու (23.7%), համերգներ գնալու (24.5%) և զբոսայգիներ այցելելու (23.0%) հնարավորություններից:

Ժամանցի բաղադրիչ	Կարևորություն, 2011թ.	Կարևորություն, 2010թ.	Կար. «2011» - «2010»	Բավարարված են, 2011թ.	Բավարարված են, 2010թ.	Բավ. «2011» - «2010»
01 Գրադարաններ այցելելը	60.1%	64.5%	-4.4%	72.7%	41.7%	31.0%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	79.9%	80.8%	-0.9%	76.9%	63.9%	13.0%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	77.6%	78.6%	-1.0%	77.9%	64.3%	13.6%
04 Հեռուստացույց դիտելը	91.4%	92.4%	-1.0%	87.6%	90.7%	-3.1%
05 Երաժշտություն ունկնդրելը	93.2%	92.1%	1.1%	91.6%	88.6%	3.0%
06 Կինո/թատրոն հաճախելը	73.7%	73.7%	0.0%	54.1%	30.4%	23.7%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը*	67.7%	70.2%	-2.5%	56.5%	36.9%	19.6%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը*	60.8%	70.2%	-9.4%	45.8%	36.9%	8.9%
09 Դիսկոտեկ այցելելը*	26.3%	61.3%		39.3%	52.9%	
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	47.5%	48.9%	-1.4%	47.9%	31.3%	16.6%
11 Համերգներ գնալը	78.7%	75.4%	3.3%	55.6%	31.1%	24.5%
12 Հորբոլով զբաղվելու հնարավորությունը	66.3%	68.2%	-1.9%	61.4%	50.9%	10.5%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	78.1%	78.6%	-0.5%	56.3%	37.5%	18.8%
14 Զբոսներ/զբոսայգիներ այցելելը	90.3%	89.6%	0.7%	76.3%	53.3%	23.0%
* - 2010թ. «սրճարան» և «ռեստորան» այցելելը միավորված էր նույն հարցում, իսկ «Դիսկոտեկ այցելելը» ձևակերպված էր՝ «պարելու հնարավորություն»:						

Աղյուսակ 78. Հանգստի և ժամանցի բաղադրիչների կարևորությունը և դրանցից օգտվելու բավարարվածությունը 2011թ. և 2010թ.:

³² 2010թ. «պարելու հնարավորությունը» տարբերակը, 2011թ. փոխարինվել է «դիսկոտեկ հաճախելու հնարավորություն» տարբերակով: Ակնհայտորեն դրանք տարբեր կոնցեպտներ են, որի հետևանքով դրա փոփոխությունները չեն դիտարկվել:

Հանգստի և ժամանցի ձևերի կարևորության, առկայության, ֆինանսական մատչելիության և դրանցից օգտվելու հնարավորություններից բավարարվածության ցուցանիշները համատեղ տրված են Աղյուսակ 79-ում:

Ժամանցի բաղադրիչ	Կարևոր է	Առկա է	Ֆին. մատչելի է	Բավարարված են
01 Գրադարաններ այցելելը	60.1%	82.0%		72.7%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	79.9%		68.5%	76.9%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	77.6%	84.1%	68.5%	77.9%
04 Հեռուստացույց դիտելը	91.4%			87.6%
05 Երաժշտություն ունկնդրելը	93.2%			91.6%
06 Կինո/թատրոն հաճախելը	73.7%	47.6%	52.6%	54.1%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը	67.7%	63.8%	46.3%	56.5%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը	60.8%	65.1%	27.9%	45.8%
09 Դիսկոտեկ այցելելը	26.3%	45.5%	31.5%	39.3%
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	47.5%			47.9%
11 Համերգներ գնալը	78.7%	61.7%	46.4%	55.6%
12 Հորբիով զբաղվելու հնարավորությունը	66.3%		53.4%	61.4%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	78.1%	68.7%	51.0%	56.3%
14 Զբոսներ/գրոսայգիներ այցելելը	90.3%	68.5%	79.4%	76.3%
Բավարարված են՝ տոկոսը հաշվարկված է այն անձանց քանակից, որոնց համար առկա է ժամանցի տվյալ բաղադրիչը:				

Աղյուսակ 79. Հանգստի և ժամանցի բաղադրիչների կարևորությունը, առկայությունը, ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը:

Հանգստի ու ժամանցի տեսակներից օգտվելու բավարարվածությունն ըստ բնակավայրի տիպի տրված է Աղյուսակ 80-ում: Տվյալները ցույց են տալիս, որ Երևանի և մարզային քաղաքների միջև բավարարվածության զգացողության տարբերությունները մեծ չեն: Կարելի է նշել միայն, որ Երևանում ավելի բարձր է բավարարվածության աստիճանը դիսկոտեկ այցելելու, իսկ քաղաքներում՝ սպորտով զբաղվելու հնարավորությունից:

Տարբերությունները մեծ են մի կողմից Երևանում ու մարզային քաղաքներում, իսկ մյուս կողմից՝ գյուղերում բավարարվածության մակարդակից ակտիվ հանգստի բոլոր ձևերի տեսակետներից, բացի սպորտով զբաղվելու, ինչպես նաև գրադարաններ այցելելու և թերթեր ու ամսագրեր ընթերցելու հնարավորությունից:

Հանգստի ու ժամանցի տարբեր ձևերից օգտվելու հնարավորությունից բավարարվածությունն ըստ բարեկեցության տրված է Աղյուսակ 81-ում: Տվյալները ցույց են տալիս, որ բարեկեցության մակարդակը ազդում է հանգստի ու ժամանցի բոլոր ձևերից օգտվելու հնարավորությունից բավարարվածության վրա: Ազդեցությունը հատկապես մեծ է ակտիվ հանգստի և ժամանցի ձևերի դեպքում: Ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ նվազ բարեկեցիկ խմբերում ավելի ցածր է ժամանցի և հանգստի ձևերից օգտվելու կարևորությունը (Աղյուսակ 82): Միակ ժամանցը, որն ավելի կարևոր է անբարեկեցիկ խմբերում բարեկեցիկ խմբերի համամետ, հեռուստացույցի դիտումն է:

Ժամանցի բաղադրիչ	Երևան	Քաղաք	Գյուղ	Եր. - Քաղ.	Եր. - Գյ.	Քաղ.- Գյ.
01 Գրադարաններ այցելելը	74.9%	76.2%	67.4%	-1.3%	7.5%	8.8%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	78.2%	78.5%	74.0%	-0.3%	4.2%	4.5%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	79.5%	80.7%	73.6%	-1.2%	5.9%	7.1%
04 Հեռուստացույց դիտելը	84.6%	88.2%	89.9%	-3.6%	-5.3%	-1.7%
05 Երաժշտություն ունկնդրելը	92.2%	91.5%	91.2%	0.7%	1.0%	0.3%
06 Կինո/թատրոն հաճախելը	60.6%	56.3%	43.1%	4.3%	17.5%	13.2%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը*	61.1%	60.1%	47.0%	1.0%	14.1%	13.1%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը*	48.3%	50.1%	38.0%	-1.8%	10.3%	12.1%
09 Դիսկոտեկ այցելելը*	47.0%	40.4%	33.3%	6.6%	13.7%	7.1%
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	57.5%	52.8%	34.9%	4.7%	22.6%	17.9%
11 Համերգներ գնալը	57.6%	59.3%	49.2%	-1.7%	8.4%	10.1%
12 Հոբբիով զբաղվելու հնարավորությունը	62.7%	65.7%	55.8%	-3.0%	6.9%	9.9%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	55.4%	60.2%	53.4%	-4.8%	2.0%	6.8%
14 Զբոսնելը/զբոսայգիներ այցելելը	81.4%	77.6%	68.3%	3.8%	13.1%	9.3%

Աղյուսակ 80. Հանգստի և ժամանցի ձևերից բավարարվածությունն ըստ բնակավայրի տիպի:

Ժամանցի բաղադրիչ	Բավարար գումար չունենք սենդի համար	Բավարար գումար ունենք միայն սենդի համար	Ունենք գումար սենդի և կոմունալ վճարների համար	Կարող ենք գնել միջին որակի իրեր	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք
01 Գրադարաններ այցելելը	60.9%	64.2%	73.4%	78.2%	78.2%	90.0%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	72.9%	69.5%	76.5%	82.2%	80.7%	92.9%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	67.7%	66.8%	78.7%	84.5%	94.2%	93.1%
04 Հեռուստացույց դիտելը	83.6%	86.9%	87.7%	88.8%	86.9%	100.0%
05 Երաժշտություն ունկնդրելը	84.8%	89.4%	92.8%	93.1%	96.1%	97.1%
06 Կինո/թատրոն հաճախելը	28.4%	36.3%	51.5%	68.6%	67.8%	85.7%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը*	26.1%	41.7%	52.6%	69.4%	78.8%	89.7%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը*	21.7%	32.5%	40.3%	55.8%	71.4%	87.5%
09 Դիսկոտեկ այցելելը*	26.3%	21.1%	35.8%	47.8%	68.8%	78.9%
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	43.1%	36.9%	45.7%	54.7%	66.7%	66.7%
11 Համերգներ գնալը	35.0%	39.0%	54.0%	67.1%	70.0%	84.8%
12 Հոբբիով զբաղվելու հնարավորությունը	41.6%	45.5%	60.7%	71.4%	84.5%	79.3%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	47.3%	44.8%	52.5%	63.3%	78.3%	86.2%
14 Զբոսնելը/զբոսայգիներ այցելելը	63.8%	68.0%	77.3%	82.2%	86.1%	90.6%

Աղյուսակ 81. Հանգստի և ժամանցի ձևերից օգտվելու հնարավորությունից բավարարվածությունն ըստ բարեկեցության:

Ժամանցի բաղադրիչ	Բավարար գումար չունենք սննդի համար	Բավարար գումար ունենք միայն սննդի համար	Ունենք գումար սննդի և կոմունալ վճարների համար	Կարող ենք գնել միջին որակի իրեր	Կարող ենք գնել կենցաղային տեխնիկա	Կարող ենք գնել գրեթե ինչ ցանկանանք
01 Գրադարաններ այցելելը	58.1%	59.0%	58.5%	64.0%	58.5%	77.8%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	79.5%	76.6%	78.3%	85.6%	82.1%	80.6%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	78.2%	73.6%	79.2%	78.6%	73.6%	83.3%
04 Հեռուստացույց դիտելը	93.2%	90.5%	92.0%	91.8%	84.0%	88.9%
05 Երաժշտություն ունկնդրելը	88.5%	91.3%	93.8%	95.0%	95.3%	97.2%
06 Կինո/թատրոն հաճախելը	67.9%	67.4%	74.1%	78.6%	82.1%	80.6%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը*	61.5%	63.0%	65.5%	74.7%	77.4%	88.9%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը*	57.7%	59.1%	58.3%	63.5%	72.6%	88.9%
09 Դիսկոտեկ այցելելը*	27.9%	24.3%	23.0%	28.8%	38.7%	47.2%
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	52.8%	44.5%	46.1%	48.2%	53.8%	52.8%
11 Համերգներ գնալը	76.5%	76.9%	78.7%	80.5%	82.1%	80.6%
12 Հորբիով զբաղվելու հնարավորությունը	56.2%	60.6%	67.1%	72.6%	72.6%	77.8%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	74.8%	72.3%	78.0%	82.2%	84.9%	91.7%
14 Զբոսնելը/զբոսայգիներ այցելելը	86.3%	89.9%	91.3%	90.9%	89.6%	91.7%

Աղյուսակ 82. Հանգստի և ժամանցի ձևերից օգտվելու կարևորությունն ըստ բարեկեցության:

Աղյուսակ 83-ում տրված է հանգստի և ժամանցի ենթաոլորտի բաղադրիչներից բավարարվածությունը ամբողջ հասարակության համար, ինչպես նաև դրանց բաշխումները՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Հանգստի և ժամանցի բաղադրիչ	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Գրադարաններ այցելելը	72.7%	74.9%	76.2%	67.4%	67.4%	80.6%	74.7%
02 Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելը	76.9%	78.2%	78.5%	74.0%	75.6%	77.3%	79.9%
03 Թերթեր, ամսագրեր ընթերցելը	77.9%	79.5%	80.7%	73.6%	74.3%	81.4%	81.8%
04 Հեռուստացույց դիտելը	87.6%	84.6%	88.2%	89.9%	87.1%	88.5%	87.1%
05 Երաժշտություն ունկնդրելը	91.6%	92.2%	91.5%	91.2%	90.3%	92.8%	93.2%
06 Կինո/թատրոն հաճախելը	54.1%	60.6%	56.3%	43.1%	47.3%	57.2%	63.2%
07 Սրճարան այցելելու հնարավորությունը*	56.5%	61.1%	60.1%	47.0%	48.9%	60.9%	65.6%
08 Ռեստորան այցելելու հնարավորությունը*	45.8%	48.3%	50.1%	38.0%	38.8%	47.0%	57.3%
09 Դիսկոտեկ այցելելը*	39.3%	47.0%	40.4%	33.3%	30.3%	46.2%	51.7%
10 Երաժշտական գործիք/գործիքներ նվագելը	47.9%	57.5%	52.8%	34.9%	41.4%	54.0%	56.9%
11 Համերգներ գնալը	55.6%	57.6%	59.3%	49.2%	48.1%	60.3%	65.7%
12 Հորբիով զբաղվելու հնարավորությունը	61.4%	62.7%	65.7%	55.8%	55.5%	67.1%	66.5%
13 Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելը	56.3%	55.4%	60.2%	53.4%	50.7%	60.7%	62.4%
14 Զբոսնելը/զբոսայգիներ այցելելը	76.3%	81.4%	77.6%	68.3%	71.6%	79.9%	82.3%
Բավարարվածության միջին արժեք	64.3%	67.2%	67.0%	58.5%	59.1%	68.1%	70.6%

Աղյուսակ 83. Հանգստի և ժամանցի բաղադրիչներից բավարարվածությունը՝ ընդհանուր, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության և բավարարվածության միջին արժեքները:

Տուրիզմ³³

Հայաստանում, որպես կյանքի որակի բնութագիր, ուսումնասիրվել է հասարակության համար տուրիզմի և հանգստի կարևորությունը, ֆինանսական մատչելիությունը և բավարարվածությունը: Դիտարկվել են հանգստի և տուրիզմի հետևյալ տեսակները.

- հանգստանալը Հայաստանում,
- հանգստանալը արտասահմանում,
- տուրիզմ՝ ճանաչողական նպատակով,
- արշավ,
- արկածային/էքստրեմալ տուրիզմ:

Հանգստանալը Հայաստանում շատ կարևոր է հարցվածների գերակշիռ մեծամասնության համար՝ 92.6% (Աղյուսակ 84): Սակայն այն մատչելի է քչերին՝ 28.0%: Այդ ցուցանիշի հետ է հաղորդակցվում նաև այն, որ վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի տարածքում հանգստացել է հարցվածների միայն 25.5%-ը: Ընդ որում՝ դրանց թվում բավարարված է եղել հանգստից 78.8%-ը:

Տուրիզմի տեսակ	Կարևոր է	Ֆինանսապես մատչելի է	Իրականացրել են վերջին 1 տարում	Բավարարված են
01 Հանգստանալ Հայաստանում	92.6%	28.0%	25.5%	78.8%
02 Հանգստանալ արտասահմանում	70.0%	11.9%	9.6%	91.7%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	78.0%	14.5%	7.3%	95.4%
04 Արշավ՝ բնության միջավայրում	83.7%	36.1%	24.5%	91.2%
05 Արկածային/էքստրեմալ տուրիզմ	46.3%	14.6%	4.5%	86.8%

Բավարարվածությունը հաշվարկված է այն անձանց քանակից, ովքեր վերջին մեկ տարվա ընթացքում իրականացրել են որևէ ճանապարհորդություն:

Աղյուսակ 84. Տուրիզմի տեսակների կարևորությունը, ֆինանսական մատչելիությունը և իրականացման դեպքում բավարարվածությունը:

Հանգիստն արտասահմանում նվազ մատչելի է. այն կարող է իրեն թույլ տալ մոտավորապես յուրաքանչյուր տասներորդ ընտանիքը: Այստեղ նույնպես ֆինանսական մատչելիության ցուցանիշը հաղորդակցվում է վերջին մեկ տարվա ընթացքում որևէ արտասահմանյան ճանապարհորդություն իրականացնելու փաստի հետ: Մյուս կողմից, արտասահմանյան ճանապարհորդություններից բավարարված են այն իրականացրածների 91.7%-ը:

Տուրիզմի տեսակների կարևորությունն ըստ տարիքի տրված է Աղյուսակ 85-ում, իսկ տուրիզմի տեսակների և դրա ֆինանսական հնարավորությունների տարբերություններն ըստ տարիքի՝ Աղյուսակ 86-ում: Տվյալները ցույց են տալիս, որ տուրիզմի տեսակներից օգտվելու կարևորությունը մոտավորապես նույնպիսին է բոլոր տարիքային խմբերի համար, բացառությամբ՝ 65-ից ավելի տարեկանների խմբից: Տուրիզմի տեսակներից օգտվելու հնարավորության կարևոր

³³ Ենթադրյալ է համադրվել չէ 2010թ. հետազոտության հետ:

րության և դրանց ֆինանսական մատչելիության միջև անջրպետն ամենամեծն է 35-65 տարեկանների խմբերում:

Տուրիզմի տեսակ	18-24	25-34	35-44	45-54	55-64	65 <
01 Հանգստանալ Հայաստանում	89.0%	91.2%	93.3%	95.5%	95.2%	90.8%
02 Հանգստանալ արտասահմանում	74.0%	76.0%	67.1%	73.2%	61.4%	51.5%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	76.2%	80.4%	80.8%	81.7%	75.4%	60.0%
04 Արշավ՝ բնության միջավայրում	83.3%	87.9%	86.9%	85.4%	79.0%	65.4%
05 Արկածային/Էքստրեմալ տուրիզմ	57.3%	49.3%	41.6%	47.7%	36.8%	32.6%

Աղյուսակ 85. Տուրիզմի տեսակների կարևորությունն՝ ըստ տարիքի:

Տուրիզմի տեսակ	18-24	25-34	35-44	45-54	55-64	65 <
01 Հանգստանալ Հայաստանում	45.1%	56.4%	65.4%	77.3%	79.7%	75.1%
02 Հանգստանալ արտասահմանում	52.7%	60.8%	54.5%	67.2%	56.8%	46.5%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	51.1%	63.3%	66.1%	73.0%	67.7%	52.6%
04 Արշավ՝ բնության միջավայրում	32.9%	41.2%	50.8%	59.3%	54.0%	52.8%
05 Արկածային/Էքստրեմալ տուրիզմ	29.6%	28.6%	29.7%	40.6%	30.2%	29.9%

Աղյուսակ 86. Տուրիզմի տեսակների կարևորության և ֆինանսական մատչելիության տարբերությունն՝ ըստ տարիքի (նշված է հարցվածների տոկոսը, ում համար տվյալ տեսակը կարևոր է, բայց ֆինանսապես մատչելի չէ):

Տուրիզմի տեսակների կարևորությունը, ֆինանսական մատչելիությունը, ինչպես նաև կարևորության և ֆինանսական մատչելիության տարբերություններն ըստ բնակավայրի տիպի տրված են համապատասխանաբար Աղյուսակ 87, Աղյուսակ 88 և Աղյուսակ 89-ում:

Տուրիզմի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ
01 Հանգստանալ Հայաստանում	90.1%	93.5%	94.3%
02 Հանգստանալ արտասահմանում	74.6%	69.3%	65.9%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	77.9%	80.7%	75.6%
04 Արշավ՝ բնության միջավայրում	80.5%	87.7%	83.5%
05 Արկածային/Էքստրեմալ տուրիզմ	39.8%	43.9%	55.2%

Աղյուսակ 87. Տուրիզմի տեսակների կարևորությունն՝ ըստ բնակավայրի տիպի:

Տուրիզմի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ
01 Հանգստանալ Հայաստանում	27.0%	28.4%	28.7%
02 Հանգստանալ արտասահմանում	13.5%	13.5%	8.7%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	14.6%	16.5%	12.6%
04 Արշավ՝ բնության միջավայրում	34.5%	41.9%	32.7%
05 Արկածային/Էքստրեմալ տուրիզմ	12.8%	17.2%	14.2%

Աղյուսակ 88. Տուրիզմի տեսակների ֆինանսական մատչելիությունն՝ ըստ բնակավայրի տիպի:

Տուրիզմի տեսակ	Երևան	Քաղաք	Գյուղ
01 Հանգստանալ Հայաստանում	63.1%	65.1%	65.6%
02 Հանգստանալ արտասահմանում	61.1%	55.8%	57.2%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	63.3%	64.2%	63.0%
04 Արշավ՝ բնության միջավայրում	46.0%	45.8%	50.8%
05 Արկածային/Էքստրեմալ տուրիզմ	27.0%	26.7%	41.0%

Աղյուսակ 89. Տուրիզմի տեսակների կարևորության և ֆինանսական մատչելիության տարբերություններն՝ ըստ բնակավայրի տիպի (նշված է հարցվածների տոկոսը, ում համար տվյալ տեսակը կարևոր է, բայց ֆինանսապես մատչելի չէ):

Աղյուսակային տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում հանգստանալու հնարավորությունը մի փոքր ավելի կարևոր է գյուղաբնակների համար, իսկ արտասահմանում հանգստանալուն՝ երևանաբնակների, արշավը բնության գրկում՝ քաղաքաբնակների, իսկ էքստրեմալ տուրիզմը՝ գյուղաբնակների համար:

Տուրիզմի բոլոր տեսակների ֆինանսական մատչելիությունը համեմատաբար ավելի բարձր է մարզային քաղաքներում, իսկ ֆինանսական մատչելիության և կարևորության տարբերություններն ավելի բարձր են գյուղերում:

Հասարակության բավարարվածությունը իրականացված հանգստից կամ տուրիստական ճանապարհորդություններից, այդ թվում՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության, ինչպես նաև ենթաոլորտի գնահատականները տրված են Աղյուսակ 90-ում:


Տուրիզմի տեսակ	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Հանգստանալ Հայաստանում	78.8%	79.5%	76.1%	80.6%	80.2%	79.1%	76.1%
02 Հանգստանալ արտասահմանում	91.7%	89.5%	91.8%	100.0%	91.7%	89.8%	93.3%
03 Տուրիզմ՝ ճանաչողական նպատակով	95.4%	98.2%	94.3%	88.2%	100.0%	91.2%	95.8%
04 Արշավ՝ բնության միջավայրում	91.2%	89.7%	92.9%	91.2%	90.5%	90.9%	92.6%
05 Արկածային/էքստրեմալ տուրիզմ	86.8%	86.2%	88.2%	85.7%	78.6%	80.0%	95.8%

Աղյուսակ 90. Բավարարվածությունը տուրիզմի տեսակներից (տոկոս՝ ծառայություններից օգտվածների քանակից) ընդամենը, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության, և բավարարվածության:

Ելնելով այն տվյալներից, որ տուրիզմի ոլորտի մատչելիությունը Հայաստանում համեմատաբար ցածր է, կյանքի որակի գնահատականի ադեկվատությունը պահպանելու համար հարկավոր է գնահատել ոչ թե փոքրաքանակ բնակչության բավարարվածությունը տուրիստական ծառայությունների որակից, այլ այն անձանց քանակը, որոնց համար դրանք մատչելի են: Իսկ հետազոտությամբ ստացված տուրիզմի մատչելիության առավել ադեկվատ գնահատականը վերջին մեկ տարվա ընթացքում հանգստի կամ տուրիզմի որևէ տեսակից օգտված մարդկանց քանակն է (Աղյուսակ 84, չորրորդ սյուն):

Դրա համար կազմավորվել է հանգստի/տուրիստական ծառայություններից օգտվելու ինդեքս, որն իրենից ներկայացնում է վերջին մեկ տարվա ընթացքում դիտարկված տուրիստական որևէ ծառայությունից օգտված անձանց քանակը: Ինդեքսի արժեքները փոփոխվում են [0; 5] միջակայքում: Որպես կյանքի որակի տվյալ ենթաոլորտի գնահատական ընդունվում է տուրիզմի որևէ ծառայություններից օգտված անձանց քանակը (կամ այն անձանց քանակը, որոնց համար ինդեքսը մեծ է 0-ից):

Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 9-ում: Գծապատկերի տվյալներից բխում է, որ Հայաստանի բնակչության 41.4%-ն է վերջին մեկ տարվա ընթացքում օգտվել հանգստի/տուրիզմի դիտարկված ծառայություններից:



Գծապատկեր 9. Հանգստի/տուրիզմի ծառայություններից օգտվելու ինդեքսի բաշխումը:

Հանգստի/տուրիզմի ծառայություններից օգտվելու ինդեքսի բաշխումն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության տրված է Աղյուսակ 91-ում:

Հանգստի/տուրիզմի ծառայություններից օգտվելու ինդեքս	Հնդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
0	58.6%	50.4%	55.6%	69.7%	68.2%	52.7%	42.1%
1	23.9%	27.1%	26.1%	18.7%	20.7%	29.0%	24.5%
2	10.7%	13.7%	11.0%	7.4%	6.6%	11.8%	20.0%
3	3.5%	5.2%	4.2%	1.2%	1.5%	4.5%	7.5%
4	1.5%	2.3%	1.5%	0.6%	0.5%	1.0%	4.8%
5	1.9%	1.4%	1.7%	2.5%	2.6%	1.0%	1.1%

Աղյուսակ 91. Հանգստի/տուրիզմի ծառայություններից օգտվելու ինդեքսի բաշխումն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Էկոլոգիական ոլորտ

Միջին և միկրո մակարդակներում որպես կյանքի որակի ոլորտ է դիտարկվել էկոլոգիական վիճակը, այդ թվում՝ դրանից բխող վտանգները: Որպես ենթաոլորտներ դիտարկվել և գնահատվել են.

- շրջակա միջավայրի աղտոտվածությունը,
- բնական վտանգների առկայությունը,
- վտանգները կենդանական աշխարհից:

Կյանքի որակի գնահատումը էկոլոգիական ոլորտում տարբերվում է մնացած ոլորտներից: Այստեղ որպես ցուցանիշ սահմանվել է ոչ թե բավարարվածությունը էկոլոգիական վտանգներից պաշտպանվածությունից, այլ էկոլոգիական վտանգներից զերծ պայմաններում բնակվող անձանց քանակը:

Դրա համար էկոլոգիական ոլորտի յուրաքանչյուր ենթաոլորտի համար հաշվարկվել է բնակչության քանակը, որը զերծ է տվյալ ենթաոլորտի շրջանակներում դիտարկված որևէ բաղադրիչի ազդեցությունից: Օրինակ, շրջապատի աղտոտվածության ենթաոլորտի տեսակետից կյանքի որակի ցուցանիշն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրը աղտոտող բոլոր դիտարկված գործոնների ազդեցությունից զերծ բնակչության քանակը:

Շրջապատի աղտոտվածություն³⁴

Որպես շրջակա միջավայրի աղտոտվածության գնահատման բաղադրիչներ են դիտարկվել.

- խմելու ջրի աղտոտվածությունը,
- ոռոգման ջրի աղտոտվածությունը,
- օդի աղտոտվածությունը՝ փոշի,
- օդի աղտոտվածությունը՝ ավտոմոբիլային ծուխ,
- օդի աղտոտվածությունը՝ արտադրություն,
- օդի աղտոտվածությունը՝ անասնապահական ֆերմայի պատճառով,
- արտադրական թունավոր նյութերի/թափոնների կուտակումները,
- շինարարական աղբը,
- կենցաղային աղբի կուտակումները,
- անտառահատումները/ ծառահատումները,
- ռադիացիան,
- տրանսպորտային աղմուկը (ավտոմոբիլ, երկաթուղի, ինքնաթիռ և այլն),
- կենցաղային աղմուկը (ռեստորան, բար, հարևաններ, փողոց և այլն),
- արտադրական աղմուկը:

³⁴ Ենթաոլորտի գնահատումը համադրելի չէ 2010թ.-ի հետ:

Շրջակա միջավայրն աղտոտող տարբեր գործոնների առկայության տարածվածությունը, դրանք վտանգավոր համարող անձանց քանակը և իրենց պաշտպանվածությունը տվյալ գործոնից բավարար համարող անձանց քանակը տրված է Աղյուսակ 92-ում:³⁵

Շրջակա միջավայրի աղտոտվածության տեսակներից առավել տարածվածներն են՝ օդի աղտոտվածությունը (փոշուց՝ 60.5% և ավտոմոբիլային ծխից՝ 52.8%) և խմելու ջրի աղտոտվածությունը (44.8%):

Բնապահպանական խնդիր	Առկա է	Վտանգավոր է հարցվողի համար	Բավարարված է պաշտպանվածության աստիճանից	Պաշտպանվածության մակարդակի ընկալումը
Խմելու ջրի աղտոտվածությունը	44.8%	91.4%	28.1%	0.31
Ոռոգման ջրի աղտոտվածությունը	29.1%	65.6%	33.3%	0.51
Օդի աղտոտվածություն՝ փոշի	60.5%	89.0%	20.9%	0.23
Օդի աղտոտվածություն՝ ավտոմոբիլային ծուխ	52.8%	86.3%	22.2%	0.26
Օդի աղտոտվածություն՝ արտադրություն	23.6%	88.1%	19.9%	0.23
Օդի աղտոտվածություն՝ անասնապահական ֆերմայի պատճառով	9.1%	60.4%	33.3%	0.55
Արտադրական թունավոր նյութերի/թափոնների կուտակումներ	13.3%	84.8%	23.8%	0.28
Շինարարական աղբ	26.1%	60.4%	37.6%	0.62
Կենցաղային աղբի կուտակումներ	34.4%	78.0%	32.5%	0.42
Անտառահատումներ/ ծառահատումներ	16.7%	66.4%		
Ռադիացիա	15.9%	90.2%	15.4%	0.17
Տրանսպորտային աղմուկ՝ ավտոմոբիլ, երկաթուղի, ինքնաթիռ	36.7%	56.8%	36.5%	0.64
Կենցաղային աղմուկ՝ ռեստորան, բար, հարկաններ, փողոց	16.7%	56.6%	41.7%	0.74
Արտադրական աղմուկ	5.3%	54.5%	44.9%	0.82
«Վտանգավոր է հարցվողի համար», «Բավարարված է պաշտպանվածության աստիճանից»՝ հաշվարկված են այն հարցվածների քանակից, որոնց բնակավայրերում առկա է դիտարկվող բնապահպանական խնդիրը:				

Աղյուսակ 92. Շրջակա միջավայրն աղտոտող գործոնների տարածվածությունը, վտանգավոր համարող անձանց տոկոսը և իրենց պաշտպանվածությունը բավարար համարող անձանց տոկոսը:

Բնակչությունը շրջակա միջավայրն աղտոտող առավել վտանգավոր տեսակներն է համարում՝ խմելու ջրի աղտոտվածությունը (91.4%), ռադիացիան (90.2%), օդի աղտոտվածությունը փոշուց (89.0%), օդի աղտոտվածությունը արտադրական արտանետումներից (88.1%), օդի աղտոտվածությունը ավտոմոբիլային ծխից (86.3%) և արտադրության թունավոր թափոնների կուտակումները (84.8%):

³⁵ Բնապահպանական խնդրի տարածվածությունը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «Նշված բնապահպանական խնդիրներից որո՞նք են առկա Ձեր բնակավայրում»: Պատասխանների տարբերակները՝ 1. «առկա է», 2. «առկա չէ»:

Բնապահպանական խնդրի վտանգավորության ընկալումը գնահատվել է՝ բնապահպանական խնդրի առկայության մասին նշած անձանց տալով հետևյալ հարցը. «Դրանք [առկա բնապահպանական խնդիրը] վտանգավո՞ր են Ձեր/Ձեր ընտանիքի համար»: Պատասխանների տարբերակները. 1. «այո», 2. «ոչ»:

Շրջակա միջավայրի առկա խնդիրներից պաշտպանվածության ընկալումը գնահատվել է հետևյալ հարցով. «Որքանո՞վ եք բավարարված Ձեր ընտանիքի պաշտպանվածության աստիճանից [տվյալ բնապահպանական խնդրից]»: Պատասխանների տարբերակները. 1. «ընդհանրապես բավարարված չեմ», 2. «ավելի շուտ բավարարված չեմ», 3. «ավելի շուտ բավարարված եմ», 4. «լիովին բավարարված եմ»: Աղյուսակներում տրված է 3-րդ և 4-րդ տարբերակներին տրված պատասխանների միացյալ քանակը:

Աղյուսակում հաշվարկված է նաև բնակչության պաշտպանվածության մակարդակի ընկալումը շրջակա միջավայրն աղտոտող յուրաքանչյուր գործոնից՝ որպես այդ գործոնից իրեն պաշտպանված զգացող անձանց քանակի հարաբերությունն տվյալ գործոնը իր կամ իր ընտանիքի համար վտանգավոր համարող անձանց տոկոսին:

Շրջակա միջավայրը աղտոտող առավել տարածված գործոններն են՝ փոշին, ավտոմոբիլային ծուխը, խմելու ջրի աղտոտվածությունը, տրանսպորտային աղմուկ և կենցաղային աղբի կուտակումները:

Առավել բարձր է պաշտպանվածության մակարդակի ընկալումը արտադրական աղմուկից:


Աղյուսակ 93-ում տրված է շրջակա միջավայրն աղտոտող գործոնների տարածվածությունն՝ ըստ բնակավայրի տիպի: Տվյալները ցույց են տալիս, որ գործոնների մեծամասնության տարածվածությունը համեմատաբար ավելի բարձր է Երևանում, հատկապես օդի աղտոտվածությունը փոշուց և ավտոմոբիլային ծխից (դրանք աղյուսակում ամենամեծ թվերն են): Մարզային քաղաքներում շրջակա միջավայրի աղտոտվածության գործոնների տարածվածությունը մի փոքր ավելի ցածր է, սակայն ավելի մոտ է Երևանին, քան գյուղերին: Այնուամենայնիվ, այստեղ համեմատաբար ավելի բարձր է խմելու ջրի աղտոտվածության տարածվածությունը:

Գյուղերում, բնականաբար, ավելի տարածված է ոռոգման ջրի աղտոտվածությունը և օդի աղտոտվածությունը անասնապահական ֆերմաների պատճառով:

Շրջակա միջավայրի աղտոտման գործոն	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
Խմելու ջրի աղտոտվածությունը	44.8%	40.0%	50.9%	44.5%	43.8%	44.7%	47.7%
Ոռոգման ջրի աղտոտվածությունը	29.1%	14.0%	24.4%	43.7%	29.9%	27.0%	30.1%
Օդի աղտոտվածություն՝ փոշի	60.5%	70.4%	66.6%	45.0%	55.3%	66.0%	66.1%
Օդի աղտոտվածություն՝ ավտոմոբիլային ծուխ	52.8%	70.9%	57.1%	30.5%	46.8%	57.4%	62.0%
Օդի աղտոտվածություն՝ արտադրություն	23.6%	30.6%	26.4%	14.1%	21.0%	24.1%	30.0%
Օդի աղտոտվածություն՝ անասնապահական ֆերմայի պատճառով	9.1%	4.8%	7.8%	14.7%	8.8%	9.0%	10.4%
Արտադրական թունավոր նյութերի/թափոնների կուտակումներ	13.3%	20.0%	13.2%	6.7%	11.8%	14.8%	15.1%
Շինարարական աղբ	26.1%	38.6%	29.2%	10.7%	21.9%	28.0%	35.0%
Կենցաղային աղբի կուտակումներ	34.4%	38.1%	36.7%	28.7%	30.8%	34.6%	43.5%
Անտառահատումներ/ ծառահատումներ	16.7%	17.3%	19.1%	14.0%	15.2%	18.1%	18.9%
Ռադիացիա	15.9%	19.7%	19.6%	9.1%	14.0%	18.8%	16.9%
Տրանսպորտային աղմուկ՝ ավտոմոբիլ, երկաթուղի, ինքնաթիռ	36.7%	46.9%	41.6%	22.1%	34.7%	37.4%	41.7%
Կենցաղային աղմուկ՝ ռեստորան, բար, հարևաններ, փողոց	16.7%	28.0%	16.4%	5.4%	14.9%	17.9%	19.8%
Արտադրական աղմուկ	5.3%	10.3%	3.5%	1.9%	4.9%	6.0%	5.7%

Աղյուսակ 93. Շրջակա միջավայրի աղտոտման գործոնների առկայությունը՝ ընդամենը, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության:

Ստված տվյալների հիման վրա հաշվարկված է շրջակա միջավայրի աղտոտվածության ինդեքսը՝ որպես շրջակա միջավայրը աղտոտող գործոնների քանակ, որոնց առկայության մասին նշել է հարցվողը: Ինդեքսը փոփոխվում է [0; 14] միջակայքում: Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 10-ում, որից բխում է, որ Հայաստանի բնակչության միայն 15.2%-ն է բնակվում շրջապատի աղտոտվածությունից զերծ պայմաններում:



Գծապատկեր 10. Շրջակա միջավայրի աղտոտվածության ինդեքսը:

Ինդեքսի բաշխումներն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության տրված են Աղյուսակ 94-ում:

Շրջակա միջավայրի աղտոտվածության ինդեքս	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
0	15.2%	13.5%	11.0%	20.6%	16.8%	14.0%	12.5%
1	11.6%	7.8%	11.6%	15.5%	14.0%	9.8%	8.0%
2	13.2%	12.0%	12.1%	15.2%	13.0%	13.7%	12.8%
3	12.5%	11.1%	13.1%	13.2%	14.0%	11.7%	9.3%
4	12.3%	12.6%	13.0%	11.5%	11.4%	13.2%	13.3%
5	9.9%	9.7%	11.1%	8.9%	8.8%	10.5%	11.2%
6	8.0%	8.6%	9.0%	6.5%	7.1%	8.2%	10.4%
7	5.4%	6.5%	6.5%	3.3%	4.0%	6.7%	7.2%
8	4.4%	4.9%	5.5%	2.8%	4.1%	4.7%	4.5%
9	2.5%	4.7%	2.2%	0.6%	2.4%	2.5%	2.9%
10	2.3%	2.3%	3.3%	1.3%	2.1%	1.5%	4.0%
11	1.3%	2.7%	0.7%	0.3%	1.1%	1.2%	1.9%
12	1.3%	2.5%	1.0%	0.1%	0.9%	2.0%	1.1%
13	0.3%	0.8%	-	-	0.2%	0.2%	0.8%
14	0.2%	0.3%	-	0.1%	0.1%	0.3%	-

Աղյուսակ 94. Շրջակա միջավայրի աղտոտվածության ինդեքսն՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Բնական վտանգներ

Հետազոտությամբ ուսումնասիրվել են հետևյալ բնական վտանգների առկայությունը.

- սողանքներ,
- վարարումներ/ջրհեղեղներ,
- սելավներ:

Աղյուսակ 95-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ նշված բնական վտանգների շարքում առավել տարածված են սելավները:

Բնական աղետ	Առկա է	Վտանգավոր է հարցվողի համար	Բավարարված է պաշտպանվածության աստիճանից
01 Սողանքներ	17.8%	44.2%	54.2%
02 Վարարումներ/ջրհեղեղներ	16.5%	43.2%	56.1%
03 Սելավներ	27.4%	47.7%	56.7%
«Վտանգավոր է հարցվողի համար», «Բավարարված է պաշտպանվածության աստիճանից»՝ հաշվարկված են այն հարցվածների քանակից, որոնց բնակավայրերում առկա է դիտարկվող վտանգը:			

Աղյուսակ 95. Բնական վտանգի առկայությունը բնակավայրում, հարցվողի ընտանիքի համար և հարցվողի պաշտպանվածության ընկալումը:

Բնական վտանգների առկայության ընկալումն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության տրված է Աղյուսակ 96-ում: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վարարումների/ջրհեղեղների և սելավների առկայությունը ավելի բարձր է գյուղաբնակների շրջանում, իսկ սողանքներինը՝ Երևանի և մարզային քաղաքների բնակչության շրջանում:

Բնական վտանգ	Ընդամենը	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Սողանքներ	17.8%	20.8%	21.0%	12.1%	18.1%	17.5%	17.4%
02 Վարարումներ/ջրհեղեղներ	16.5%	10.3%	16.0%	23.1%	17.0%	14.3%	17.9%
03 Սելավներ	27.4%	18.0%	29.9%	34.8%	30.7%	22.5%	26.4%

Աղյուսակ 96. Բնական վտանգների առկայությունը՝ ընդամենը, ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Համայնքում առկա վտանգներն իրենց ընտանիքների համար ավելի բարձր են գնահատում գյուղաբնակները (Աղյուսակ 97), որոնց հետևում են Երևանի բնակիչները: Բացի դրանից, գյուղաբնակները նվազ բավարարված են իրենց համայնքերում առկա վտանգներից պաշտպանվածության աստիճանից (Աղյուսակ 98):


Բնական վտանգ	Երևան	Քաղաք	Գյուղ
01 Սողանքներ	45.2%	32.2%	60.0%
02 Վարարումներ/ջրհեղեղներ	32.9%	24.5%	60.3%
03 Սելավներ	50.0%	31.1%	59.1%

Աղյուսակ 97. Համայնքում առկա բնական վտանգների վտանգավորության ընկալումները սեփական ընտանիքների համար՝ ըստ բնակավայրի տիպի:

Բնական վտանգ	Հնդամներ	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
01 Սողանքներ	54.2%	56.5%	59.8%	42.3%	49.7%	57.0%	62.9%
02 Վարարումներ/ջրհեղեղներ	56.1%	63.6%	75.3%	40.4%	46.9%	70.5%	64.1%
03 Սելավներ	56.7%	55.6%	68.0%	48.7%	50.5%	66.4%	62.5%

Աղյուսակ 98. Պաշտպանվածության զգացողությունը բնական վտանգներից՝ ընդամենը, ըստ բնակավայրի տիպի, ըստ բարեկեցության:

Բնական աղետների ենթաոլորտում կյանքի որակի բնութագրման համար կառուցվել է բնական աղետներից վտանգի առկայության ինդեքս, որն իրենից ներկայացնում է դիտարկված բնական վտանգների քանակը, որոնք առկա են հարցվածների (նրանց ընտանիքների) համար: Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 11-ում, որից բխում է, որ Հայաստանի բնակչության 82.1%-ը բնակվում է բնական վտանգներից զերծ պայմաններում:



Գծապատկեր 11. Բնական աղետներից վտանգի ինդեքս:

Բնական աղետներից վտանգի ինդեքսի բաշխումներն ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության տրված են Աղյուսակ 99-ում:

Բնական վտանգների ինդեքս	Հնդամներ	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
0	82.1%	84.1%	86.7%	76.1%	78.9%	86.8%	83.7%
1	10.6%	11.8%	9.0%	10.7%	12.3%	7.7%	10.4%
2	5.8%	3.4%	2.8%	10.7%	7.2%	4.2%	4.3%
3	1.6%	0.7%	1.5%	2.5%	1.7%	1.3%	1.6%

Աղյուսակ 99. Բնական վտանգների ինդեքսը ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության:

Վտանգներ կենդանական աշխարհից

Հետազոտությամբ ուսումնասիրվել է այն հարցը, թե որքանով են տարածված հետևյալ կենդանիներից բխող վտանգները.

- առնետներ,
- փողոցային շներ,

- կարիճներ, թունավոր միջատներ,
- օձեր, սողուններ,
- գիշատիչներ (գայլ, արջ, *դիտարկվել են միայն Երևանից դուրս*):

Աղյուսակ 100-ում ներկայացված են նշված վտանգների առկայությունը, ինչպես նաև տվյալներ, թե որքան են այն անձինք, ովքեր երբևէ տուժել են այդ կենդանիներից:

Վտանգներ կենդանիներից	Առկա է	Երբևէ տուժել են՝ 1	Երբևէ տուժել են՝ 2
01 Առնետներ	53.9%	31.9%	17.2%
02 Փողոցային շներ	82.1%	23.4%	19.2%
03 Կարիճներ, թունավոր միջատներ	31.8%	29.7%	9.4%
04 Օձեր, այլ սողուններ	31.5%	9.7%	3.1%
05 Գիշատիչ կենդանիներ (գայլ, արջ) (<i>բացի Երևանից</i>)	23.7%	16.8%	4.0%
Երբևէ տուժել են՝ 1՝ հաշվարկված է այն անձանց համար, որոնց բնակավայրերում առկա է դիտարկվող վտանգը:			
Երբևէ տուժել են՝ 2 հաշվարկված է բոլոր հարցվածների քանակից:			

Աղյուսակ 100. Կենդանիներից ծագող վտանգների առկայությունը և դրանցից տուժածների քանակը:

Առավել տարածված է թափառող շներից առաջացող վտանգը, որն առկա է եղել հարցվածների 82.1%-ի համար: Թափառող շներից տուժածների քանակն ամենամեծն է, եթե այն հաշվարկված է բոլոր հարցվածների թվից (19.2%): Սակայն հարաբերականորեն ավելի վտանգավոր են առնետները, կարիճներն ու թունավոր միջատները, որոնց առկայության դեպքում դրանցից տուժածների քանակն է համապատասխանաբար՝ 31.9% և 29.7%:

2011թ.-ին 2010թ.-ի համեմատ նվազել են կենդանիներից առաջացող բոլոր վտանգները (Աղյուսակ 101), սակայն ավելացել է կենդանիներից տուժածների թիվը (Աղյուսակ 102):


Վտանգներ կենդանիներից	Առկա է, 2011թ.	Առկա է, 2010թ.	«2011» - «2010»
01 Առնետներ	53.9%	69.0%	-15.1%
02 Փողոցային շներ	82.1%	85.2%	-3.1%
03 Կարիճներ, թունավոր միջատներ	31.8%	40.0%	-8.2%
04 Օձեր, այլ սողուններ	31.5%	39.6%	-8.1%
05 Գիշատիչ կենդանիներ (գայլ, արջ) (<i>բացի Երևանից</i>)	23.7%	37.5%	-13.8%

Աղյուսակ 101. Կենդանիներից ծագող վտանգների տարածվածությունը 2011թ. և 2010թ.:

Վտանգներ կենդանիներից	Տուժել են, 2011թ.	Տուժել են, 2010թ.	«2011» - «2010»
01 Առնետներ	31.9%	22.2%	9.7%
02 Փողոցային շներ	23.4%	14.1%	9.3%
03 Կարիճներ, թունավոր միջատներ	29.7%	13.1%	16.6%
04 Օձեր, այլ սողուններ	9.7%	4.1%	5.6%
05 Գիշատիչ կենդանիներ (գայլ, արջ) (<i>բացի Երևանից</i>)	16.8%	14.0%	2.8%

Աղյուսակ 102. Կենդանիներից տուժածների թիվը 2011թ. և 2010թ.:

Էկոլոգիական տվյալ ենթադրորտի տեսակետից կյանքի որակի գնահատման համար կազմավորվել է կենդանիներից բխող վտանգների ինդեքս՝ որպես հարցվողի կողմից դիտարկված վտանգների տեսակների նշումների քանակ: Ինդեքսի արժեքը փոխվում է [0; 5] միջակայքում: Ինդեքսի բաշխումը տրված է Գծապատկեր 12-ում:



Գծապատկեր 12. Կենդանիներից բխող վտանգների ինդեքսի բաշխումը:

Գծապատկերից բխում է, որ կենդանիներից բխող վտանգից զերծ է Հայաստանի բնակչության 8.2%-ը:

Կենդանիներից բխող վտանգի ինդեքսի բաշխումն՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության, տրված է Աղյուսակ 103-ում:

Բնական վտանգների ինդեքս	Հնդամներ	Բնակավայրի տիպ			Բարեկեցություն		
		Երևան	Քաղաք	Գյուղ	Ցածր	Միջին	Բարձր
0	8.2%	9.4%	9.5%	5.7%	8.8%	7.5%	7.2%
1	27.6%	31.9%	38.4%	13.6%	26.1%	31.2%	25.6%
2	28.3%	31.2%	31.1%	22.9%	28.7%	28.7%	26.9%
3	20.1%	21.6%	13.8%	24.1%	18.6%	21.0%	22.9%
4	11.9%	5.9%	5.5%	23.7%	13.2%	9.2%	12.8%
5	4.0%	-	1.8%	10.0%	4.6%	2.5%	4.5%

Աղյուսակ 103. Կենդանիներից բխող վտանգների ինդեքսի բաշխումն՝ ըստ բնակավայրի տիպի և բարեկեցության: